



## Ձիաց մեր հանապազորդ

ՀՈՒԼԻՍ | ՕԳՈՍՏՈՍ | ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020

(July, August, September 2020)

**ԼԱ. ՏԱՐԻ**

**Գ. ԵՌԱՄՍԵԱԿ**

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքուկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածությունները:

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: [amaa@amaa.org](mailto:amaa@amaa.org), Website: [www.amaa.org](http://www.amaa.org)

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության

Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլեկտրոնային՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am).

Կայքէջ՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Ձեզ նոր պատվիրան եմ տալիս, որ իրար սիրեք, ինչպես որ ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք: (Գովհ. 13. 34)

## **ՆԱԽԱՍԻՐՎԱԾԸ**

**Տ**եզրս ապրում է մեզանից մոտ 1400 մղոն հեռու՝ Կոլորադոյի լեռներում: Չնայած այդ հեռավորությանը՝ նա միշտ էլ մեր ընտանիքի սիրելի անդամն է եղել իր ազնիվ սրտի ու զվարթամտության համար: Ես հիշում եմ, որ նրա եղբայրներն ու քույրերը մի անգամ կատակեցին, թե մայրն իրեն տարբերում է մյուսներից: Տարիներ առաջ նրանք նույնիսկ իրենց եղբորը մի շապիկ էին նվիրել, որի վրա գրված էր. «Ես մորս սիրելին եմ»: Մենք կարող ենք կատակի տալ, բայց իրապես նախասիրված լինելը կատակ չէ: Ծննդոց 37-ում Հակոբը իր Հովսեփ որդու հանդեպ առանձնահատուկ սերը ցույց տալու համար նրան է տալիս մի ծաղկազարդ պատմուճան (Հմ.3): Եվ առանց որևէ այլևայլության՝ այդ պատմուճանի ուղերձը պարզ էր. «Հովսեփին իմ սիրելի որդին է»: Նախապատվություն ցույց տալը ընտանիքում կարող է պառակտություն առաջացնել: Հակոբի մայրը՝ Ռեբեկան նույնպես Հակոբին նախասիրեց Եսավից ավելի՝ եղբայրների մեջ առաջացնելով բախում (25.28): Վատ գործողությունները շարունակվեցին նաև հետո, երբ Հակոբը Հովսեփի մայր Ռաբելին ավելի սիրեց, քան Լիային՝ առաջացնելով անհամաձայնություն ու սրտի ցավ (29. 30-31): Անկասկած հենց այս դեպքն էլ առիթ է դարձել, որպեսզի Հովսեփի եղբայրները արհամարհեն և նույնիսկ ծրագրեն սպանել նրան (37.18): Մեր հարաբերություններում նույնպես երբեմն դժվար է լինում օբյեկտիվ լինել: Սակայն մեր նպատակը պետք է լինի բոլորի հետ վարվել առանց նախասիրության և ամենքին սիրել հավասարապես, ինչպես մեր Հայրն է մեզ սիրում (Հովհ. 13. 34):

**Աղոթք** - Սիրո՞ղ Աստված, երբ հաղորդակցվում եմ ուրիշների հետ, օգնի՛ր, որ հիվանդագին նախապատվություն ցույց չտամ: Օգնի՛ր, որ ուրիշներին տեսնեմ այնպես, ինչպես Դու ես տեսնում՝ առանց նախասիրության: Ամեն:

**Ընթացնական ու բարեկամական Երջանակներում նախընտրություն ցույց մի՛ տուր: Բոլորին սիրի՛ր հավասարապես:**

(Բառնաբասը) ամենքին հորդորում էր, որ հոժար սրտով Տիրոջ հետ մնային: (Գործք 11. 23)

## **ԽՈՍՈՂ ԲԱՆԱՆՆԵՐ**

«**Բնավ մի՛ ընկրկիր**», «**Մեկնումեկի ժպիտի պատճառը դարձի՛ր**», «**Դու հիանալի ես**»: «**Կարևոր է, թե որտեղից ես գալիս: Կարևոր է, թե ուր ես գնում**»: Վիրջինիայի ափի մի շարք դպրոցականներ բանանների վրա գրված այսպիսի ուղերձներ գտան իրենց սեղաններին: Նախաձեռնության հեղինակը ճաշարանի պատասխանատուն էր՝ Սթեյսի Թրումանը: Նա ժամանակ էր տրամադրում բանանների վրա այդպիսի ոգևորիչ ուղերձներ գրելու համար, և աշակերտներն էլ դրանք կոչեցին «խոսող բանաններ»: Այս հոգատար մտեցումը հիշեցնում է Անտիոքի հին քաղաքի «հոգով երիտասարդների հանդեպ Բառնաբասի սերը» (Գործք 11.22-24): Բառնաբասը հայտնի էր մարդկանց ներշնչելու իր կարողությամբ: Որպես բարի, Սուրբ հոգով ու հավատով լի մարդ՝ նա քաջալերում էր նորահավատներին, «որ հոժար սրտով Տիրոջ հետ մնային» (Հմ.23): Պետք է ենթադրել, որ նա ժամանակ էր անցկացրել նրանց հետ, ում ուզում էր օգնել՝ ասելով. «Շարունակեք աղոթել: Վստահե՛ք Տիրոջը: Աստծո մոտ մնացեք, երբ կյանքը կզժվարանա»: Նորահավատները մանուկների նման շատ քաջալերանքի կարիք ունեն: Նրանք մեծ ներուժ ունեն և նոր են բացահայտում, թե որ գործում են ավելի լավ: Նրանք դեռ չգիտեն, թե Աստված ինչ է ուզում անել իրենց մեջ և իրենց միջոցով, ու այդ ընթացքում հաճախ չարն ավելի շատ է աշխատում, որպեսզի նրանց հավատքը չաճի: Նրանք, ովքեր արդեն որոշ ժամանակ քայլել են Հիսուսի հետ, գիտեն, թե որքան դժվար է Հիսուսի համար ապրելը: Թող որ մենք բոլորս կարողանանք ոգևորել ու ոգևորվել, ինչպես որ Աստծո Հոգին է մեզ առաջնորդում և հիշեցնում հոգևոր ճշմարտությունը:

**Աղոթք** Երկնավոր Հայր, օգնի՛ր, որ այսօր կարողանամ քաջալերել որևէ մեկին: Ցույց տուր, թե ինչ եմ ասելու և ինչպես կարող եմ օգնել այդ մարդուն, որ Դու փառավորվես: Ամեն:

**Հի՛ժի՛ր, որ Աստված քաջալերել է քեզ: Հիմա դու էլ դասրաս եղի՛ր հորդորել ուրիշներին:**

Լեզուն մի փոքր անդամ է, բայց մեծ-մեծ բաներ է խոսում: (Չակ. 3.5)

## **ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵԿ ԿԱՅԾ**

**Մ**եր աղջկա ձայնի մեջ վախ ու սարսափ կար, երբ ասաց. «Գրադարանում ենք և տեսնում ենք դրսի կրակը»: Բայց մենք մտածում էինք, թե քոլեջի շրջակայքը ամենաապահով տեղն էր այդտեղ սովորող մյուս 3 հազար աշակերտների համար: 2018-ին բռնկված Ուոլսի հրդեհը հրշեջների ակնկալածից շատ ավելի արագ տարածվեց Կալիֆոռնիայի կիրճի շատ չոր ու տաք եղանակների և Սանտա Աննայի քամիների պատճառով: Ընդամենը մեկ կայծ և հրո ճարակ դարձավ 400 քառակուսի կիլոմետր տարածություն, քանդվեց ավելի քան 1600 կառույց, և զոհվեց երեք մարդ: Հրդեհը մարելուց հետո այդ փարթամ բուսականությունը ծովափը նմանվել էր լուսնի լերկ մակերեսին: Հակոբոսի գրքում հեղինակը մի քանի փոքր, բայց հզոր բաներ է նշում. «ձիերի բերանը սանձ ենք դնում, որ նրանք մեզ հնազանդվեն», «մեծ նավերը կառավարվում են մի փոքր դեկով» (3.3-4): Թեև այս երկուսը մեզ հայտնի են, բայց կարող են մեզ հետ կապ չունենալ: Ուստի նա մեզ ավելի մոտ մի փոքր բան է նշում՝ լեզուն, որ յուրաքանչյուր մարդ ունի: Այդ գլուխը մասնավորապես ուսուցիչներին է ուղղված (հմ.1), սակայն դրա կիրառումը բոլորիս է վերաբերում: Լեզուն, լինելով այդքան փոքր, կարող է ավերիչ հետևանքների տանել:

Մեր փոքր լեզուները հզոր են, բայց մեր մեծ Աստվածն ավելի հզոր է: Նրա տված ամենօրյա օգնությունը մեզ տալիս է անհրաժեշտ զորությունը՝ մեր խոսքերը զսպելու և առաջնորդելու համար:

**Աղոթք** - Տե՛ր, ասել են վատ խոսքեր, հաճախ նաև այնպիսի բաներ, որոնք վնաս ու ցավ են պատճառել: Օգնի՛ր, որ կարողանամ սանձել լեզուս: Ամեն:

**Չարախոսելը մեր մարդկային սկարություններից է, բայց Ասծո գորությանը կարելի է մեր լեզուն սանձել:**

Տերը նրան տեսավ, գթաց նրան ու ասաց. «Մի՛ լար»: Ղուկաս 7.13

## **ԱՁՆՎՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԵՂՆ Է**

**Հ**իասթափված ու ավելի լավ կյանք ունենալու ակնկալիքով՝ Լեոնը հրաժարվեց հաշվապահական գործից: Ապա մի օր փողոցի անկյունում տեսավ մի անտուն մարդու, որը հայտարարում էր, թե «Ազնվությունը լավագույն դեղն է»: Այդ բառերը Լեոնի համար հայտնություն եղան: Նա որոշեց նոր կյանք սկսել՝ ստեղծելով մի միջազգային կազմակերպություն՝ ազնվությունը քաջալերելու համար:

Նա ճամփորդում է աշխարհում՝ վստահ լինելով, որ օտար մարդիկ օժանդակելու են իրեն ուտելիքի, կեցության և այլ անհրաժեշտ բաների հարցում: Ապա իր կազմակերպության միջոցով զնահատում է նրանց գործունեությունը և մղում նոր բարեգործությունների՝ որբերին կերակրելու, նրանց համար դպրոցներ հիմնելու և այլն: Նա ասում է.«Ազնվությունը հեշտ բան է թվում, սակայն այն իրականում անսահման գորություն է»: Քրիստոսի էությունը, որպես Աստված, բարությունն է: Հետևաբար ազնվությունը իրենից է գալիս: Սիրում եմ պատմությունն այն մասին, թե ինչ արեց Հիսուսը, երբ հուղարկավորում էին մոր միակ որդուն (Ղուկ. 7. 11-17): Վշտահար կինը որդու կարիքն ուներ: Պատմության մեջ գրված է, որ որևէ մեկը խնդրում է Հիսուսի միջամտությունը: Ուղղակի իր գթասարտությամբ նա մտահոգվեց կնոջ վիճակով(հմ.13) և կյանք վերադարձրեց նրա որդուն: Եվ մարդիկ Աստծուն փառք տալով ասում էին. «Աստված այցելել է իր ժողովրդին»(հմ.16):

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, միշտ ցույց ես տալիս Քո սիրո պարզևները: Փառք եմ տալիս Քեզ՝ ցուցաբերածդ հոգատարության համար: Ամեն:

**Տերը քեզ համար աս բարիքներ է արել: Թվարկի՛ր դրանք ու փա՛նջ սուր իրեն:**

Օրհնիր Տիրոջը, ...որ բարությանը հագեցնում է ցանկությունը քո: (Սաղմ. 102. 1.5)

## **ՆՈՐՈԳՎԱԾ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ**

Հոգեբույժ Ռոբերտ Քոլզը մի օր նկատեց, որ ինքը նմանվում է այն մարդկանց, որոնք սպառվում են ուրիշներին ծառայելիս: Առաջին նշանը հոգնածությունն էր: Երկրորդը այն զգացողությունը, թե զարգացում չկա: Ապա հետևում է դառնություն, հուսահատություն, վճատություն և ի վերջո՝ լիակատար սպառում: Փշրված երազներից ապաքինվելու մասին գիրքը գրելուց հետո դասախոսական մի ծավալուն շարքով էի զբաղված՝ օգնելու համար հուսահատ մարդկանց: Բայց դա ծանր նստեց վրաս: Մի օր, երբ հերթական անգամ բեմ էի բարձրանում, քիչ մնաց ընկնելի: Լավ չէի քնել, արձակուրդը բավարար չէր եղել ուժերս վերագտնելու համար, և այժմ ի վիճակի չէի ուրիշների հարցերը լսել: Ես սկսեցի մտահոգվել, որ Քոլզի օրն եմ ընկնում: Աստվածաշունչը երկու ուղի է նշում սպառվածությունը հաղթահարելու համար: Ես այու 40-ում ասվում է. «Նրանք, որոնք Տիրոջն են ապավինում, նոր ուժ պիտի ստանան» (Հմ.31): Ես էլ, փոխանակ իմ դանդաղող զորությունն ապավինելու, կարիք ունեմ Աստծո մեջ հանգստանալու և իր անելիք գործին վստահելու: 102-րդ սաղմոսն ասում է, թե Աստված բարությունը հագեցնում է մեր ցանկությունները և նորոգում մեր երիտասարդությունը (Հմ.5): Քանի որ Նա ունի նաև ներելու և բուժելու (Հմ.3-4) հատկություն, ուրախության ու զվարճության բոլոր նախատեսությունները իրենից են գալիս: Երբ ես խմբագրեցի իմ ժամանակացույցը և սկսեցի ավելի ժամանակ տրամադրել աղոթքին, հանգստին և հաճելի ժամանցին, սկսեցի ավելի առողջ զգալ: Սպառումն սկսվում է հոգնածությունից: Եկե՛ք կանխե՛ք այն, քանի դեռ շատ չի անհանգստացնում: Շատ ավելի լավ կկարողանանք ծառայել ուրիշներին, երբ մեր կյանքում տեղ գտնեն պաշտամունքն ու հանգիստը:

**Աղոթք** - Սիրող Աստված, ուզում եմ այսօր աշյուծի զորությանը արթնանալ: Իմ հոգնած վիճակում վստահում եմ Քեզ և ուզում եմ հոգիս նորոգող պարզեցրող ստանալ: Ամեն:

**Եթե ունենաս հոգնածության ու սղառված լինելու նշաններ, կարող ես նորոգվել աղոթքով, Ասծո խոսքով և առողջ ժամանցով:**



Ով հուսը դնում է հարստության վրա, պիտի կործանվի, իսկ ով հովանավորում է արդարներից, պիտի բարգավաճի: (Առ. 11.28)

## **ԾԱՂԿՈՂ ԾԱՌԸ**

**Մ**իշտ էլ սիրել եմ տարբեր իրեր հավաքել: Մանուկ տարիներին դրոշմանիշեր էի հավաքում, բեյսբոլի կամ էլ հուժմորային թեմաներով քարտեր: Հիմա նույն մղումը երեխաներիս մեջ եմ տեսնում և խորհում, թե ինչո՞ւ է այդպես:

Բնականաբար, կարիքից չէ դա: Այլ մի նոր բանով հրապուրվելու ձև է: Երբեմն էլ որևէ հին, հազվագյուտ բանի հանդեպ ձգտում: Որովհետև մտածում ենք, որ եթե այսինչ բանն ունենանք, մեր կյանքն ավելի լավն է լինելու, ավելի ուրախ ու գոհ ենք լինելու:

Սակայն այդ բաները բարիք չեն բերում: Ինչո՞ւ, որովհետև Աստված մեզ ստեղծել է, որ Իրենո՛վ լցվենք, այլ ոչ թե այն բաներով, որ մեր շուրջը եղող աշխարհն է ստիպում: Այդ ձգտումը ևս նոր բան չէ: Առակների գրքի հեղինակը հակադրում է կյանքի երկու տեսակներ: Կյանք, որը հիմնված է հարստություն կուտակելու վրա և Աստծո ու առատաձեռնությունը տալու վրա հիմնված կյանք: «Պատգամը» գրքում ՅուՋին Փիթերսոնը Առակների 11. 28-ն այսպերպ է ներկայացնում. «Նյութականին նվիրված կյանքը մեռած կյանք է, չոր կոճղ, իսկ Աստծով ձևավորվածը ծաղկող ծառ է»:

Շատ գեղեցիկ համեմատություն է: Կյանքի երկու տեսակներ՝ մեկը ծաղկող ու պտղատու, մյուսը՝ չոր ու ամուլ: Աշխարհը պնդում է, որ «լավ կյանքը» նյութական առատությունն է: Բայց Աստված մեզ հրավիրում է Իր մեջ արմատավորվելու, որպեսզի վայելենք Իր բարությունը, ծաղկելով պտուղ տանք և ամբողջովին վերափոխվենք:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ Քո տված բարի պարգևների համար: Օգնի՛ր, որ աշխարհիկ բաների փոխարեն շարունակեմ Քե՛զ վստահել: Ամեն:

**Նյութական արժեքներին վստահելը կարող է ֆեզ հոգեկան խռով դասճառել: Դիմի՛ր Ասծուն, որ վերափոխի ֆեզ:**

Եթե ուշանա, համբերի՛ր, որովհետև ինչ որ պիտի գա, կգա և չի ուշանա: (Ամբ. 2.3)

## **ԱՂՈԹՔԻ ՀԱՎԿԻԹՆԵՐ**

**Ո**ւղիղ խոհանոցիս պատուհանի տակ մի թռչուն հյուսել էր իր բույնը: Շատ հետաքրքիր էր դիտել, թե ինչպես նա խոտերը դասավորեց ու մի ապահով անկյուն ստեղծեց թուխս նստելու համար: Ես ամեն առավոտ հետևում էի, բայց դեռ նորություն չկար: Երկու շաբաթ տեևց իմ սպասումը:

Այդպիսի անհամբերությունն ինձ համար նորություն չէր: Ես միշտ լարված եմ սպասել հատկապես աղոթքի պատասխանին: Ամուսինս ու ես մոտ հինգ տարի սպասեցինք մեր առաջին զավակին որդեգրելու համար: Տասնյակ տարիներ առաջ հեղինակ Քաթրին Մարշալը գրել է. «Աղոթքները հավկիթների նման են, մեր ասած պահին անմիջապես պտուղ չեն տալիս»:

Ամբակում մարգարեն աղոթքի պատասխանին սպասելիս տանջվում էր : Հուսախաբված Աստծո լուռությունից, երբ Հուդայի Հարավային թագավորությունը Բաբելոնի դաժան տիրապետության ներքո էր, նա ասում է. «Իմ պահակակետում կկանգնեմ, կբարձրանամ ժայռի վրա և կտեսնեմ, թե ինչ կխոսի ինձ հետ» (Ամբ.2.1): Աստված պատասխանում է, որ Ամբակումը պիտի սպասի, որովհետև «ինչ որ պիտի գա, կգա և չի ուշանա» (Հմ.3) և թեյադրում է «գրել տեսիլքը», որպեսզի խոսքը տարածվի և անմիջապես կատարվի (Հմ.2):

Աստված չի հիշեցնում, թե երբ է կործանվելու Բաբելոնի իշխանությունը, երբ ասում է. «չի ուշանա»: Այդ կործանումը վեց տասնամյակ հետո է լինում՝ խոստման և իրականության մեջ առաջացանելով երկարատև պարապություն: Հավկիթների նման աղոթքների պատասխաններն էլ շուտ չեն լինում: Դրանք հասունանում են աշխարհի ու մեր կյանքի համար Աստծո ընդհանուր ծրագրի մեջ:

**Աղոթք-** Սիրելի՛ Յայր, օգնի՛ր վստահել Քեզ, որպեսզի սպասելիս էլ գործեմ: Ամեն:

**Աղոթքի պատասխանին սպասելը դժվար է: Բայց այդ սպասման մեջ կարելի է հնազանդվել Աստծո պատվիրաններին:**

Բայց Պողոսը մտածեց, թե լավ է, որ հետևերը չվերցնեն իրենցից բաժանվածին և իրենց հետ գործի չեկածին: (Գործք 15.38)

## **ԶԱՆՈՂՎԱԾ ԸՆԿԵՐԸ**

**1** 939 թ. նոյեմբերի 27-ին երեք գանձ որոնողներ կինոնկարի անձնակազմի հետ պեղում էին Հարավային Կալիֆոռնիայի Հոլիվուդ Բոլ ամֆիթատրոնի դրսի տարածքը: Նրանք լսել էին, որ յոթանասունհինգ տարի առաջ այդտեղ թաղվել են աղամանդներ ու մարգարիտներ, և այժմ որոնում էին դրանք:

Ոչինչ էլ չգտան: 24 օր ապարդյուն փորելուց հետո նրանք դադարեցրին աշխատանքը: Միակ բանը, որ արեցին, 9 ոտք լայնությամբ ու 42 ոտք խորությամբ փոս բանալն էր, որը թողեցին ու հուսահատված գնացին: Մխալվելը մարդկային է, բոլորս էլ երբեմն կարող ենք ձախողվել: Աստծո Խոսքը մեզ ասում է, որ իրենց առաքելական առաջին ճամփորդության ժամանակ երիտասարդ Մարկոսը լքեց Պողոսին ու Բառնաբասին և «իրենց հետ գործի չգնաց»: Պողոսը մտածեց, թե լավ է, որ հետևերը չվերցնեն իրենցից բաժանվածին և իրենց հետ գործի չեկածին» (Գործք 15.38): Այդ պատճառով Պողոսի ու Բառնաբասի մեջ մեծ անհամաձայնություն եղավ: Բայց հակառակ իր առաջին ձախողմանը՝ տարիներ անց Մարկոսը զարմանալի ձևով հայտնվում է: Երբ Պողոսը կյանքի վերջում մենակ էր բանտում, Մարկոսին ուզեց, «որովհետև ինձ ծառայելու համար պետք է» (Բ.Տիմ. 4. 11): Աստված Մարկոսին նույնիսկ ներշնչեց գրել իր Ավետարանը:

Մարկոսի կյանքը ցույց է տալիս, որ Աստված չի թողնում, որ մեր սխալներն ու ձախողումները միայնակ դիմազրավենք: Մի բարեկամ ունենք, որն ամեն սխալից ավելի մեծ է: Երբ հետևենք մեր Փրկչին, Նա մեզ կտա անհրաժեշտ օգնությունն ու զորությունը:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ, որ պատրաստ ես ինձ լսելու, երբ դիմում եմ քեզ: Փառք քեզ՝ Քո տված հույսի ու մխիթարության համար: Ամեն:

**Զախողումներ միշտ կարող ենք ունենալ: Սակայն դրանք կարող ենք աղոթքով Տիրոջը հասցնել:**

«Որովհետև խաչի խոսքը կորածների համար հիմարություն է, բայց մեզ՝ փրկվածներիս համար Աստծո զորություն է: (Ա. Կորնթ. 1. 18)

## **ՆՈՐ ԿՅԱՆՔԻ «ՀԻՄԱՐ» ԾԱՍՓԱՆ**

**Կ**յանքում մի շարք բաներ անիմաստ են թվում, քանի դեռ դրանց փորձառուները չունենք: Երբ ես հզի էի իմ առաջին զավակով, բազմաթիվ գրքեր էի կարդացել, նայել շատ կանանց ծննդաբերության պատմությունները: Այնուամենայնիվ չէի պատկերացնում, թե ինչպես եմ հաղթահարելու այդ փորձությունը: Կորնթացիներին ուղղված առաջին նամակում Պողոսը գրում է, թե Աստծո թագավորության մեջ ծնվելը և Աստծո՝ մեզ առաջարկած Քրիստոսով փրկությունը հավասարապես անհասկանալի է թվում նրանց, ովքեր չունեն այդ փորձառությունը: Նույնիսկ ոմանց համար «հիմարություն» է թվում ասելը, թե փրկությունը գալիս է մի խաչի միջոցով, մահ՝ նշանակված տկարությունք, պարտությունք ու նվաստացումով: Այս «հիմարությունը» Պողոսի քարոզած փրկությունն է: Դա այն չէր, ինչ որևէ մեկը կարող էր պատկերացնել: Ոմանք մտածում էին, որ փրկությունը գալու է որևէ հզոր քաղաքական առաջնորդի կամ ինչ-որ հրաշքի միջոցով: Ուրիշներն էլ կարծում էին, որ իրենց ակադեմիական ու իմաստասիրական հաջողություններն են դառնալու փրկության ուղի (Ա.Կորնթ.1.22): Բայց Աստված բոլորիս զարմացրեց՝ փրկությունը բերելով այնպիսի մի ձևով, որը կհասկանան միայն՝ դրան հավատացողներն ու այդ փորձառությունն ունեցողները: Աստված վերցրեց մի տկար ու ամոթալի բան՝ խաչի մահը, և այն դարձրեց իմաստության ու զորության հիմք: Աստված անում է անբերեակայելին: Նա «ընտրեց այս աշխարհի հիմարներին, որպեսզի իմաստուններին ամաչեցնի, և աշխարհիս տկարներին ընտրեց, որպեսզի զորավորներին ամաչեցնի» (Հմ. 27): Ու իր անակնկալ ու շփոթեցնող ձևերը միշտ էլ լավագույնն են:

**Աղոթք** - Ո՛վ Աստված, Եսայի մարգարեի հետ ես էլ եմ աղոթում. որքան որ երկինքը բարձր է երկրից, նույնքան էլ Քո ճամփաները՝ իմ ճամփաներից և Քո խորհուրդներն՝ իմ խորհուրդներից: Ամեն:

**Մի՛ զարմացիր: Աստծո ճամփաները մի՞ս էլ մեր ճամփաներից ավելի լավն են:**

Քեզ վնաս չտաս, որովհետև ամենքս այստեղ ենք: (Գործք. 16. 28)

### **ՇԱՅՆ ԶՕԳՏԱԳՈՐԾԵԼ**

**Ե**րբ մի քանի բանտարկյալներ ճամփեզրի աղբն էին հավաքում, նրանց վերահսկիչ Ջեյմսը հանկարծ նվաղեց: Նրանք օգնություն հասան և Ջեյմսի բջջային հեռախոսով շտապ օգնություն կանչեցին: Այս դեպքից հետո շրջանի կառավարչի գրասենյակը շնորհակալություն հայտնեց նրանց, որովհետև չէին օգտվել հսկիչի վատառողջ լինելուց ու չէին փախել, այլ օգնել էին նրան:

Այս բանտարկյալների ցուցաբերած ազնիվ քայլը նման է Փիլիպպեի բանտում Պողոսի ու Շիղայի արարքին: Հագուստները հանած ճիպոտահարելուց հետո նրանց բանտ նետեցին: Այդ ժամանակ ուժեղ երկրաշարժ եղավ, որի հետևանքով բանտի բոլոր դռները բացվեցին, ու բոլորի կապանքներն արձակվեցին (Գործք. 16. 23-26): Երբ բանտապետն արթնացավ, բնականաբար, ենթադրեց, որ բանտարկյալները փախել են, և պատրաստվում էր ինքնասպան լինել: Սակայն Պողոսը բարձրաձայն կանչեց.«Քեզ վնաս չտաս, որովհետև ամենքս այստեղ ենք» (Հմ.28): Բանտապետը շատ ազդվեց այս բանտարկյալների արարքով, հետաքրքրվեց նրանցով, նրանց պաշտած Աստծով և ինքն էլ հավատաց (Հմ.29-34):

Ուրիշների հանդեպ մեր վարվելակերպով ցույց ենք տալիս մեր հավատքն ու արժեքները: Եվ չարիքի փոխարեն բարիք անելով՝ ինքներս էլ մարդկանց կմղենք, որ մտածեն մեր իմացած ու հավատացած Աստծո մասին:

**Աղոթք** - Սիրո՛ղ Աստված, օգնի՛ր այնպիսի ընտրություն անել, որի պատճառով ուրիշները Քեզ մոտենան: Ամեն:

**Շաս առիթներ կարող են ստեղծվել, որոնք կնդհանեն մեր ԸՆԿԵՐՈՒՄԻՆ: Բայց հիշե՛նք, որ մեր որոշումները կարող են օգտակար լինել ուրիշների համար:**

Մորթվեցիր ու քո արյունով մեզ գնեցիր Աստծո համար ամեն ցեղից ու լեզվից, ժողովրդից ու ազգից: (Հայտն. 5.9)

### **ԳՈՒՅՆԵՐԻ ՇՔԵՐԹ**

**Տ** աննամյակներ շարունակ *Լոնդոնը եղել է աշխարհաքաղաքացիներով ամենաշատ լցված քաղաքը: 1933-ին թղթակից Բլին Ռոբերտսը Անգլիայի մայրաքաղաքի մասին գրել է. «Լոնդոնի ամենալավ երևույթը ժողովուրդների, գույների ու լեզուների շքերթն է»:* Այդ «շքերթը»՝ համաշխարհային դադուրի իր բազմազան բույրերով, գույներով, ձայներով ու տեսարաններով այսօր էլ կա: Աշխարհի լավագույն քաղաքներից մեկի գրավչույթյան բաղադրիչներից մեկն էլ այդ բազմազանությունն է: Իհարկե, ինչպես ցանկացած քաղաք, Լոնդոնն էլ գերծ չէ խնդիրներից: Փոփոխությունները մարտահրավերներ են առաջացնում: Երբեմն մշակութային բխումներ են լինում: Այդ է պատճառը, որ մարդկանց ձեռքով կառուցված քաղաքները անհամեմատելի են մեր երկնային բնակավայրի հետ:

Երբ Հովհաննես առաքյալը Աստծո մոտ փոխադրվեց, տեսավ, որ երկնային պաշտամունքի հիմնական տարրերից մեկը բազմազանությունն է: Եվ փրկվածները երգեցին. «Արժանի ես այդ գիրքն առնելու և դրա կնիքները բացելու, որովհետև մորթվեցիր ու քո արյունով մեզ գնեցիր Աստծո համար ամեն ցեղից ու լեզվից, ժողովրդից ու ազգից: Եվ մեր Աստծո համար մեզ թագավորներ ու քահանաներ արեցիր, և երկրի վրա թագավորություն կանենք» (Հայտն. 5.9-10): Պատկերացրեք երկինքը՝ որպես մի շքերթ աշխարհի վրա եղող ամեն տեսակի ժողովուրդների, որոնք միասին տոնում են կենդանի Աստծո որդիները լինելու հրաշալիքը: Որպես Հիսուսին հավատացողներ՝ թող որ մենք էլ այսօր տոնենք այդ բազմազանությունը:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ Քո սիրուց զուրկ չէ ոչ մի ժողովուրդ: Սովորեցրու մեզ ճշմարտապես սիրել իրար, ինչպես որ Դու ես սիրում մեզ: Ամեն:

**Եկեղեցին բազմազան է և մեզ դնում է մարտահրավերների առջև: Բայց մեզ միավորում ու ներդաճակում է Աստծո սերը:**

Թող կռիվ չլինի իմ ու քո և իմ հովիվների ու քո հովիվների միջև, որով-  
հետև մենք եղբայրներ ենք: (ԾՆՈՒ.13. 8)

## **ԲԱԺԱՆՄԱՆ ՄԵՉ՝ ՄԻՎՎՈՐՎԱԾ**

**Ա**լվիհն իր գործընկեր թիմի հետ ընդգրկվել էր մի ծրագ-  
րում, բայց հանդիպել էր մի անհաղթահարելի դժվարու-  
թյան, որովհետև իրենք համակարծիք չէին ծրագրի իրակա-  
նացման ընթացքի հարցում: Այնքան տարբեր էին այդ մոտե-  
ցումները, որ երբեմնի մտերիմ ընկերների մեջ բախումն ան-  
խուսափելի էր թվում: Այդ իսկ պատճառով նրանք որոշեցին  
այդ տարակարծությունների մասին հայտնել իրենց գործատու-  
ին: Վերջինը, իմաստուն ռազմավարություն կիրառելով,  
նրանց տեղավորեց տարբեր խմբերում: Այդ օրը Ալվիհը հաս-  
կացավ, որ միավորված լինել ամենևին չի նշանակում միատե-  
սակ գործել:

Աբրահամը ևս հասկացել էր այս ճշմարտությունը, երբ Բեթե-  
լում առաջարկեց, որ ինքն ու Ղովտը տարբեր ուղղություննե-  
րով գնան (ԾՆՈՒ. 13. 5-9): Տեսնելով, որ բավարար տեղ չկա  
իրենց երկուսի արջառների համար, Աբրահամն առաջարկեց  
բաժանվել իրարից: Բայց նաև շեշտեց, որ իրենք «եղբայր  
են»(Հմ.8)՝ հիշեցնելով Ղովտի հետ իրենց ազգակցական կապը:  
Չնայած Աբրահամը տարիքով ավելի մեծ էր, սակայն նա Ղով-  
տին գիշեց առաջին ընտրություն իրավունքը (Հմ.9): Հովիվնե-  
րից մեկը այս բաժանումն անվանել է «ներդաշնակ բաժա-  
նում»: Մեզանից յուրաքանչյուրը, լինելով Աստծո ստեղծած  
եզակի արարած, տեսնում է, որ նպատակին հասնելու համար  
ինքը ավելի լավ կարող է գործել առանձին: Սակայն չմոռա-  
նանք, որ մենք Աստծո ընտանիքում տակավին քույրեր ու եղ-  
բայրներ ենք: Շատ բաներ կարող ենք տարբեր ձևով անել,  
բայց մեր ընդհանուր նպատակի մեջ մնում ենք միասնական:

**Աղոթք** - Հայր, օգնիր մեզ, որպեսզի կարողանանք միասին, միա-  
բան աշխատել և գտնել առանձին ծառայելու ճիշտ պահը: Ամեն:

**Կարող եմ և դեռ եմ սարակարծիք լինել, սակայն հարկավոր է մի-  
աբան լինել «ներդաշնակ բաժանումով»:**



Այնտեղ գիշեր չի լինի: (Հայտն. 21.25)

## **ՆԱՅԻՐ ՎԵՐԵՎ**

**Կ**ինոարտադրող Ուայլի Օվլըրսթրիթը ցուցադրեց լուսնի կենդանի մի պատկեր, որն արվել էր իր հզոր աստղադիտակով: Դիտողները ապշել էին այդքան մոտ երևացող ազդեցիկ պատկերից: Օվլըրսթրիթը բացատրեց.«Այս պատկերը զարմացնում է մեզ և ապացուցում, որ մեզանից շատ ավելի մե՛ծ մեկը կա»:

Սաղմոսերգու Դավիթն էլ հիացավ Աստծո երկնային լույսով: «Տեսնեմ երկինքը՝ քո մատների գործը, լուսինն ու աստղերը, որոնք դու հաստատեցիր: Մարզն ի՞նչ է, որ հիշում ես նրան, կամ մարդու որդին՝ որ այցի գաս նրան» (Սաղմ. 8.4-5):

Դավթի խոնարհեցնող հարցումը նույնպես զարմացնում է մեզ, հայտնելով, որ երբ Աստված Իր նոր երկինքն ու երկիրն ստեղծի, մենք արևի ու լուսնի կարիքը չենք ունենալու: Հովհաննես առաքյալն ասում է, թե դրանց փոխարեն անհրաժեշտ լույսը Աստծո փառքը կպարգևի: «Եվ քաղաքը ո՛չ արեգակի, ո՛չ էլ լուսնի կարիք չունեի, որ նրա մեջ լույս տային, որովհետև Աստծու փառքը լուսավորում էր նրան, և նրա ճրագը Գառն էր:... այնտեղ գիշեր չի լինի» (Հայտն. 21. 23-25):

Ի՛նչ հիանալի խորհուրդ: Մենք ղեռ կարող ենք վայելել Նրա երկնային լույսը՝ Քրիստոսին փնտրելով, որը աշխարհի Լույսն է: Օվլըրսթրիթի համոզմամբ՝ «Մենք ավելի հաճախ պետք է վերև նայենք»: Որովհետև վերև նայելով Աստծուն ենք տեսնում

**Աղոթք** - Մեր զարմանալի Հայր, մենք հիանում ենք Քո սուրբ փառքով և փառաբանում ենք Քեզ՝ Քո մեծ լույսի համար:Ամեն:

**Վերև նայի՛ր, տես՛ս Աստծո փառավոր լույսն ու հույսդ դիր Նրա վրա:**

Աստված ամբարտավաններին հակառակ է, բայց խոնարհներին շնորհ է տալիս: (Հակ. 4.6)

### **ՀԻՄԱՐ ԶԵՎԱՆԱԼ**

**Ի** մ կյանքի ամենանվաստացուցիչ պահն այն օրն էր, երբ Աստվածաբանական դպրոցներից մեկի հիսնամյակին ելույթ ունեցա բազմամարդ դահլիճում: Զեկուցմանս տեքստը ձեռքիս՝ մոտեցա ամբիոնին և հանկարծ նկատեցի առաջին կարգում ակադեմիական վերարկուներով նստած երեկելի ուսուցչապետերին: Նրանց տեսքից ես չփոթվեցի, և ուղեղումս խառնաչփոթ սկսվեց: Առաջին մի քանի նախադասությունները կմկմալով արտասանելուց հետո սկսեցի հորինել: Քանի որ չգիտեի, թե գրածս տեքստում որտեղ նայել խոսքիս շարունակությունը, ես սկսեցի անկանոն թերթել այն ու անիմաստ բաներ ասել: Ինձ ուշադիր լսողները նույնպես չփոթված էին: Ես մի կերպ ավարտեցի խոսքս, նստեցի տեղս ու այդ պահին ուզում էի գետինը մտնել:

Բայց նաև սովորեցի, որ նվաստացումը կարող է լավ բան լինել, եթե խոնարհության առաջնորդի: Որովհետև դա մի բանալի է, որով կարելի է Աստծո սիրտը բանալ: Աստծո Խոսքն ասում է. «Աստված ամբարտավաններին հակառակ է, բայց խոնարհներին շնորհ է տալիս» (Հակ. 4.6): Աստված օրհնության անձրևներ է թափում հեզերի վրա: Նա ասում է. «Ես ո՞ւմ եմ նայելու, եթե ոչ հեզերին ու խոնարհներին և նրանց, ովքեր դողում են իմ խոսքից» (Ես. 66. 2): Երբ մենք խոնարհվենք Աստծո առաջ, Նա մեզ կբարձրացնի (Հակ. 4.10):

Նվաստացումն ու ամաչելը կարող են մեզ առաջնորդել դեպի Աստված, որպեսզի Նա մեզ ձևավորի: Ընկնելով՝ Նրա ձեռքերի մեջ ենք հայտնվում:

**Աղոթք-** Սիրելի՛ Աստված, օգնի՛ր, որ կարողանամ ընդունել Գվաստացումը, եթե դա փառք ու պատիվ կբերի Քեզ: Ամեն:

**Նվաստացման ու ամաչելու դասեր կարող ենք ունենալ: Հավասան, որ դրանցով մեզ համար բարի բաներ են լինելու:**

Նա ամեն ինչ լավ է արել իր ժամանակի համար:  
(ժող. 3.11)

### **ՍԻՐԻՐ ՈՒ ՓԱՅՓԱՅԻՐ ՔԵՉ ՏՐՎԱԾ ԿՅԱՆՔ**

**Ս**ու Դոնգբոն, որը հայտնի է նաև Սու Շի անունով, Հին Ձինաստանի խոշորագույն գրողներից է: Աքսորի օրերին, նայելով լիալուսնին, նա մի բանաստեղծություն է գրել, նկարագրելով իր կարոտը եղբոր հանդեպ: «Ուրախանում ենք ու տխրում, հավաքում ենք ու թափում, իսկ լուսինը հալվում է ու անհետանում: Ոչ մի բան հաստատ չի մնում: Թող մեր սիրելիները երկար ապրեն՝ պահելով այս գեղեցիկ տեսարանը հազարավոր մղոն հեռավորության վրա», - գրել է նա:

Այս բանաստեղծությունը հիշեցնում է ժողովողի գրքի նյութերը: Հեղինակը սովորեցնում է, որ գոյություն ունի «լալու ժամանակը և ծիծաղելու ժամանակը, ողբալու ժամանակը և պարելու ժամանակը, ... գրկելու ժամանակը եւ գրկից հեռանալու ժամանակը» (Հմ. 3.4-5): Ժողովողն էլ Սու Շիի նման, միմյանց հակասող բառեր օգտագործելով, հաստատում է ամեն բանի վերջ ունենալու անխուսափելիությունը:

Ինչպես Սու Դոնգբոն էր տեսել լուսնի հալվելն ու անհետանալը՝ որպես ամեն ինչի անհաստատ լինելու վկայություն, ժողովողն էլ տեսավ Աստծո նախատեսության կարգը Իր ստեղծած աշխարհում: Աստված հսկում է դեպքերը և «ամեն ինչ լավ է արել իր ժամանակի համար» (Հմ.11):

Կյանքում ցավալի բաժանումներ շատ են լինում, բայց մենք պետք է քաջալերվենք, որ ամեն ինչ կատարվում է Աստծո հսկողությունից: Կարող ենք կյանքը վայելել ու փայփայել մեր լավ ու վատ պահերը, որովհետև մեր սիրո Աստվածը մեզ հետ է:

**Աղոթք** - Սիրող Հայր, շնորհակալ ենք, որ հսկում ես կյանքիս բոլոր եղանակները: Օգնի՛ր՝ կարողանամ վստահել Քեզ ու վայելել ինձ տրված կյանքը: Ամեն:

**Կյանքը կանխատեսելը դժվար է: Հարկավոր է Ասծո՛ւն վստահել ու Իրեն հանձնվել:**

Մի մարդ գտնելով՝ թաքցրեց... ուրախությունից գնում, իր ամբողջ ունեցածը ծախում է և արտոն առնում: (Մատթ. 13.44)

## **ԹԱՆԿԱԳԻՆ ՀՐԾՎԱՆՔ**

**Լ**սելով ծանոթ մեղեդին՝ վեցս միասին շտապեցինք դուրս: Մեզանից ոմանք հասցրին կոշիկ հագնել, ոմանք բոբիկ էլ վազեցին դեպի դուռը: Մի քանի բոպե անց բոլորս արդեն սուրում էինք պաղպաղակի մեքենայի ետևից: Ամռան առաջին շոգ օրն էր, և զոփանալու ավելի լավ միջոց, քան քաղցր ու սառը պաղպաղակն էր, չկար: Կան բաներ, որ անում ենք հաճույքի համար, և ոչ թե որպես կարգապահություն կամ պարտականություն:

Մատթեոսի 13. 44-46 առակներում ընդգծված է, որ մի բան շահելու համար պետք է ամեն ինչ ծախես: Կարելի է կարծել, թե այդ պատմությունները զոհողության մասին են: Բայց իրականում առաջին պատմության մեջ ասվում է, որ «ուրախությունը» դարձավ պատճառ, որ մարդը վաճառի իր ողջ ունեցվածքն ու գնի արտը: Ուրախությունն ու հրճվանքն են փոփոխությունների առիթ դառնում, ոչ թե հանցանքը կամ պարտականությունը: Հիսուսը պարզապես մեր կյանքի մի մասը չէ՛. իր հայտարարությունն է մեզ համար հիմնականը: Նշված պատմություններում երկու մարդիկ էլ «ամբողջ ունեցածը» ծախում են (Հմ.44): Բայց կարևորն այն է, որ ամեն ինչ վաճառելու արդյունքում նրանք շահում են: Այդպես չմտածողներին ասենք. «Քրիստոնեական կյանքը արդյո՞ք մեր խաչը կրելու մասին չէ»: Այո՛, այդպես է: Երբ մեռնենք, կապրենք: Երբ մեր կյանքը կորցնենք, կգտնենք այն: Երբ «մեր ունեցածը ծախենք», մեծագույն դանձր՝ «Տեր Հիսուսին» կշահենք: Ուրախությունը պատճառն է, հանձնվելը՝ դրա արդյունքը:

Հիսուսին ճանաչելու դանձր մեր պարգևն է:

**Աղոթք** - Տեր, բա՛ց աչքերս, որ Քեզ որպես գանձ տեսնեմ: Սիրտս ուղղի՛ր դեպի Քեզ՝ որպես ճշմարիտ ու անսահման սիրո աղբյուր:

Շնորհ արա, որ կարողանամ ամեն բան Քեզ հանձնել: Ամեն:

**Երբ Հիսուսին հանձնեմք ամեն ինչ, անսահման օրհնություն և ուրախություն կունենանք:**

Դու լույս ես տալիս իմ ճրագին, Տե՛ր. Աստվա՛ծ իմ, լուսավորի՛ր ինձ խավարում: (Սաղմ. 17. 29)

### **ԼՈՒՅՍ՝ ԽԱՎԱՐՈՒՄ**

**Ո**ւժեղ ամպրոպից հետո երկինքը մթնեց ու սկսվեց հորդ անձրև: Երեկոյան շնիկիս հետ դուրս եկա զբոսանքի: Նոր քաղաք տեղափոխվելու բազմաթիվ դժվարությունները ճնշում էին սիրտս ու հոգիս: Հուսախաբված ու շատ սպասելիքներ կորցրած՝ դանդաղ քայլում էի՝ թողնելով, որ շնիկս խոտերի մեջ վազվզի: Հանկարծ լսեցի մեր տան կողքին հոսող առվակի ձայնը, աչքիս ընկան ծաղկից ծաղիկ թռչկոտող լուսատտիկների փայլուն առկայծումները:

Երբ դիտում էի այդ պատկերը, Տերը խաղաղություն պարգևեց հոգուս: Հիշեցի Սաղմոսերգու Դավիթի երգը.«Դու լույս ես տալիս իմ ճրագին, Տե՛ր. Աստվա՛ծ իմ, լուսավորի՛ր ինձ խավարում» (Սաղմ. 17. 29): Հայտարարելով, թե Աստված իր խավարը լույս է դարձնում, Դավիթը վստահ հավատք ցուցաբերեց Տիրոջ նախատեսության և պաշտպանության հանդեպ (Հմ.30-31): Աստծո պարգևած զորությունը նա կարող էր դիմագրավել ամեն տեսակ դժվարություն (Հմ.33-35): Վստահ լինելով, որ կենդանի Տերը իր հետ է լինելու բոլոր պարագաներում, Դավիթը խոստանում է. «Գոհություն պիտի մատուցեմ քեզ հեթանոսների մեջ և քո անվանը սաղմոս պիտի երգեմ» (Հմ.50):

Եթե մեր կյանքում ստիպված ենք լինում չնախատեսված փոթորիկներ հաղթահարել, և վայելել անձրևներից հետո եկող խաղաղությունը, ուրեմն Աստծո մնայուն ներկայության խաղաղությունն է լուսավորում խավարում ձգվող մեր ճանապարհը: Մեր կենդանի Աստվածը պետք է լինի մեր զորությունը, ապաստանը, պահպանն ու ազատարարը:

**Աղոթք** - Հայր, խնդրում եմ՝ օգնի՛ր մեզ, որ կարողանանք Քո բարությանն ու սիրոն վստահել նույնիսկ այն ժամանակ, երբ չտեսնենք Քեզ մեր կյանքի խավարում: Ամեն:

**Նեղությունների ու սազնադների տակաս մեր կյանքում չկա: Այդ տառերին անհրաժեշտ է Իրեն աղափինել: Որովհետև Նա միշտ մեզ հետ է, Նա խավարի մեջ եղող մեր լույսն է:**

Ամսապառ են Տիրոջ ողորմությունները, նրա գթությունները չեն նվազում: (Ողբ. 3.22)

## **ԵՐԲ ՊԱՅԾԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՉՔԱՆԱ**

**Ե**րբեք չեմ կարողանա վերագտնել այն պայծառությունը, որ մեր դուստր Մելիսան ուներ: Հիշողությանս մեջ կամաց-կամաց մարում են այն հիանալի պահերը, երբ դիտում էինք դպրոցում նրա վոլեյբոլ խաղալը կամ նրա գոհունակ ու ամոթխած ժպիտը ընտանեկան որևէ հավաքույթի ժամանակ: Տասնյոթ տարեկանում դստերս մահը նրա ուրախ ներկայություն վրա մուսյլ քող գցեց:

«Երեմիայի ողբի» մեջ մարգարեի խոսքերը ցույց են տալիս, որ նրա սիրտը կոտրվել է: Նա ասում է.«Կորավ իմ արիությունը, և իմ հույսը՝ առ Տեր» (3. 18): Նրա դրությունը քո և իմ վիճակից շատ տարբեր է: Երեմիան Աստծո դատաստանի մասին էր քարոզում և տեսավ Երուսաղեմի պարտությունը: Պայծառությունն անհետացել էր, որովհետև նա պարտված լինելու (Հմ.12), ծաղրուծանակի ենթարկվելու (Հմ.14) և Աստծուց լրքված լինելու զգացում ուներ (15-20):

Բայց դրանով պատմությունը չի ավարտվում: Լույս է շողում: Երեմիան ճնշված ու կոտրված կմկմում է. «Համբերում եմ» (Հմ. 21): Նրա հույսը գալիս էր այն բանից, որ «Անսպառ են Տիրոջ ողորմությունները, նրա գթությունները չեն նվազում» (Հմ. 22):

Ահա հենց այս պահին պետք է հիշենք, որ երբ պայծառությունն անհետանա. «Աստծո գթությունները չեն նվազում, ամեն նոր առավոտի հետ բազմանում են» (Հմ.22-23) :

Նույնիսկ մեր խավարագույն օրերում Աստծո հավատարմությունը շողում է:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ Դու կարեկցության Աստվածն ես: Նույնիսկ մահվան ստվերների ձորում քայլելիս առավոտ կծագի, երբ մենք հիշենք Քո կարեկցության ու հավատարմության մասին: Ամեն:

**Հուսահատության ու հուսալնան զգացումներ ունենալիս Աստված դասրաս է փառալերելու մեզ:**

Այս պատգամները, որ այսօր հաղորդում եմ քեզ, կպահես մտքիդ ու հոգուդ մեջ: Դրանք կհաղորդես քո որդիներին: (Բ. Օր. 6. 6-7)

## **ՄԵՐ ՄՐՏԵՐՈՒՄ**

**Մ**ի պատանի դպրոցում անընդհատ դժվարությունների էր հանդիպում: Նրա հայրը խորհուրդ տվեց ամեն առավոտ դպրոց գնալիս արտասանել. «Շնորհակալ եմ Աստծոն, որ ինձ արթնացրեց: Ես գնում եմ դպրոց՝ սովորելու և դառնալու այն առաջնորդը, որ Աստված է կամեցել»: Շնորհակալության այս խոսքը մի ձև էր, որով հայրը հույս ուներ օգնել որդուն՝ կյանքի անխուսափելի մարտահրավերների ժամանակ:

Իր զավակին օգնելու համար հայրն արեց այն նույն բանը, ինչ Աստված պատվիրել էր Իսրայելի ժողովրդին անապատում: «Այս պատգամները, որ այսօր հաղորդում եմ քեզ, կպահես մտքիդ ու հոգուդ մեջ: Դրանք կհաղորդես քո որդիներին: (Բ. Օր. 6. 6-7): Քառասուն տարի անապատում թափառելուց հետո Իսրայելի հաջորդ սերունդը մտնելու էր Խոստացյալ երկիրը: Աստված գիտեր, որ դա դյուրին գործ չէր լինելու նրանց համար, եթե չկենտրոնանային Իր վրա: Ուստի Մովսեսի միջոցով Նա խնդրեց, որ հիշեն ու հնազանդվեն Իրեն, օգնեն իրենց որդիներին, որ ճանաչեն ու սիրեն Աստծուն՝ խոսելով Իր Խոսքի մասին. «Դրանց մասին կխոսես, երբ տանը նստած ես, ճանապարհ գնալիս, պառկելիս ու վեր կենալիս» (Հմ. 7):

Մենք էլ կարող ենք ամեն օր հանձնվել Իրեն՝ արտոնելով, որ մեր սրտերն ու մտքերն առաջնորդվեն Աստծո Խոսքով, և ապրել Իրեն երախտապարտ լինելով:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ ինձ միշտ նոր օր ես տալիս: Օգնի՛ր, որ կարողանամ սրտումս ու մտքումս պահել Քո իմաստությունը: Ամեն:

**Կարևոր է կարդալ Աստծո Խոսքը և այն սովորեցնել ընտանիքի անդամներին:**

Լսի՛ր ձայնն իմ, Տե՛ր, քանզի քեզ կանչեցի, ողորմի՛ր ինձ և ակա՛նջ դիր: (Սաղմ. 26.7)

## **ԻՆՉՊԵ՞Ս ՍՊԱՍԵԼ**

**Տ**ասնյոթ տարեկան թրեվրը, հուսախաբված եկեղեցուց, սկսեց իր երկարատև որոնումները՝ պատասխան գտնելու իր հարցերին: Սակայն նրա բոլոր ջանքերն ապարդյուն էին, ոչ մի բան չէր գոհացնում ու բավարարում նրա հարցասիրությունը: Որոնումները նրան ավելի մոտեցրին իր ծնողներին, բայց քրիստոնեական հավատքի մասին հարցերը դեռ սպառված չէին: Զրույցներից մեկի ժամանակ նա դառնություն ասաց. «Աստվածաշունչը լի է անիմաստ խոստումներով»: Մեկ ուրիշն էլ ունեցավ նման հուսահատ պահեր ու նեղություններ, որոնք ավելի սրեցին իր կասկածները: Դավիթը փախել էր իրեն սպանել ուզող թշնամիներից, բայց նրա պատասխանը Աստծուց փախչելը չէր, այլ՝ Նրան փառավորելը: «Եթե իմ դեմ պատերազմ պատրաստվի, սիրտս չի սոսկա. եթե իմ դեմ ճակատամարտի ելնեն, միևնույն է, Տե՛ր, հույսս քեզ վրա եմ դնելու», - երգեց նա (Սաղմ. 26.3): Այդ բանաստեղծության մեջ երևում է, որ Դավիթը դեռ կասկածներ ու վախեր ունի: Նրա այն կանչը, թե «Ողորմի՛ր ինձ և ակա՛նջ դիր» (Հմ.7), հենց ասվածի վկայությունն է: «Մի՛ դարձրու երեսդ ինձնից և բարկություն մի՛ չըջվիր քո ծառայից» (Հմ.9), - աղերսում է Դավիթը: Նա թույլ չի տալիս, որ կասկածները հաղթեն իրեն: Եվ հայտարարում է. «Հավատում եմ, որ կտեսնեմ Տիրոջ բարությունը ողջերի երկրում» (Հմ.13): Նա իր ընթերցողներին՝ ինձ, քեզ և այս աշխարհի բոլոր կասկածամիտ թրեվրներին ասում է. «Սպասի՛ր Տիրոջն ու քաջալերվի՛ր, սիրտդ թող ամրապնդվի, Տիրո՛ջն սպասի» (Հմ.14): Մեր բարդ հարցերի պատասխանները արագ ու հեշտ չենք կարողանա գտնել: Բայց երբ սպասենք Աստծուն, որին կարելի է վստահել, կգտնենք այդ պատասխանները:

**Աղոթք** - Հայր, մեր վախերի ու բարկությունների հետ հալեցրո՛ւ մեր սրտերը: Ամեն:

**Մի՛ս էլ հարցե՛ր կուՆենան՛, որոնցից շատե՛րի դասասխանները ստացել են՛, շատե՛րին էլ դեռ սղասում են՛:**

Բայց ովքեր նրան ընդունեցին, նրանց, որ հավատում են նրա անվանը, իշխանություն տվեց նրանց Աստծու զավակներ լինելու: (Յոզի. 1. 12)

## **ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ**

**Ա**րքունական ընտանիքի անդամները, որոնք ավելի մոտ են գահին, ավելի շատ են ուշադրություն արժանանում, քան մյուսները: Անգլիական թագավորական ընտանիքում մոտ 60 գահաժառանգ կա: Նրանցից 49-րդը՝ Ֆրեդերիկ Վինձորը, լուսարձակների տակ լինելու փոխարեն՝ լուռ ապրում է իր կյանքը: Մասնագիտությամբ տնտեսագետ է և նկատի չի առնվում որպես «արքունի գործիչ» կամ ընտանիքի կարևոր անդամներից մեկը: Դավթի Նաթան որդին (Բ. Թագ. 5. 14) նույնպես մի պալատական է, որը դուրս է մնացել լուսարձակներից: Շատ քիչ բան գիտենք իր մասին: Մատթեոսի Ավետարանում Հիսուսի ազգատոհմում Դավթի Սողոմոն որդին է նշվում Հովսեփի սերնդից (Մատթ. 1.6): Ղուկասի նշած ազգատոհմում, որը շատ պատմաբաններ հավատում են, թե Մարիամի սերունդն է, Նաթանն է նշվում (Ղուկ. 3. 31): Նաթանը գավազան չունեի, սակայն կարևոր դեր ուներ Աստծո հավիտենական թագավորությունում:

Որպես Քրիստոսին հավատացողներ, մենք էլ արքունի ընտանիքի անդամներ ենք: Հովհաննես առաքյալը գրել է.«Աստված մեզ իշխանություն տվեց Աստծո զավակներ լինելու»(Հովհ. 1. 12): Թեև մենք էլ լուսարձակի ներքո չենք, սակայն մենք էլ Աստծո Թագավորի զավակներն ենք: Աստված մեզանից յուրաքանչյուրին է կարևոր համարում այս աշխարհում Իրեն ներկայացնելու և մի օր էլ իր հետ թագավորելու համար (Բ. Տիմ. 2. 11-13): Նաթանի նման մենք էլ կարող ենք երկրային թագ չունենալ, բայց Աստծո թագավորության մեջ մենք խաղալիք դեր ունենք:

**Աղոթք** - Երկնավոր Յայր, երախտապարտ եմ, որ ինձ որդեգրել ես Քո հավիտենական ընտանիքում:

Ամեն:

**Մե՛նք Աստծո թագավորական ընձանիքի մասն ենք և կարևոր դեր ունենք կառուցելիս:**

Զնշեցի քո ...անօրենությունները: (Ես. 44. 22)

## **ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՈՒ ՄԱՔՐՈՂ ՇՆՈՐՀ**

Համակարգչային Ամազոն ծրագրի՝ ձայնով կառավարվող Ալեքսա գործիքը մի յուրահատուկ առանձնահատկություն ունի. կարող է ջնջել, ինչ որ ասես: Ջնջելու մեկ հրահանգով նա իսպառ մաքրում է մինչ այդ տրամադրված բոլոր տեղեկությունները: Մեր կյանքը այդ հնարավորությունը չունի: Յուրաքանչյուր սխալ խոսք, անվայել վարմունք, վիրավորանք կամ այլ բան, որ կուզենք ջնջել մեր հիշողությունից, միևնույն է, չի անհետանում: Բայց կա մի բարի լուր: Աստված մեզանից յուրաքանչյուրին տալիս է մաքուր սկիզբ: Միայն ինքը կարող է թափանցել մեր հոգու խորքը և մեր սխալներն ու չար արարքները ոչ միայն ջնջել, այլև դարման տալ, որով ամբողջությամբ կերպարանափոխվում, նորոգվում ու փրկվում ենք: Նա ասում է. «Ինձ մո՛տ դարձիր, որպեսզի փրկեմ քեզ» (Ես. 44.22): Թեև Իսրայելը ապստամբեց ու անհնազանդ եղավ, սակայն Աստված նրանց մոտեցավ մեծ ողորմածությամբ: Նա «ջնջեց նրանց անօրենությունները ինչպես ամպ և մեղքերը՝ ինչպես մեզ» (Հմ. 22): Բոլոր ամոթալի ու ձախորդ բաները հավաքեց ու լվաց Իր լայնածավալ ու մաքրող շնորհքով: Աստված նույն բանը պիտի անի մեր մեղքերի ու սխալների դեպքում: Չկա որևէ սխալ, որ Նա չկարողանա շտկել, վերք, որ չկարողանա բուժել: Աստծո ողորմածությունը բուժում ու փրկում է մեր հոգիները, մաքրում ցավ պատճառող ամեն բան, եթե նույնիսկ դրանք պահել ենք շատ երկար ժամանակ: Աստծո ողորմածությունը ջնջում է մեր բոլոր հանցանքները և լվանում ամեն ափսոսանք:

**Աղոթք** - Ո՛վ Աստված, շատ բաների համար եմ ափսոսում և ուզում փոխել: Ասում ես, որ Դու ներում ես և բուժում: Շնորհակալ եմ Քո՛ ողորմության ու շնորհքի համար: Ամեն:

**Սխալներ ու հանցանքներ ենք գործում և արժանի ենք դասադասության: Բայց Աստված Իր շնորհով մաքրում է մեզ: Փա՛ռք Իր սուրբ անվանը:**

Որ այն ժամանակ առանց Քրիստոսի էիք...հույս չունեիք և աշխարհում անաստված էիք: (Եփ. 2. 12):

## ՄԻ ՇՈՂ ԾՈՎԻ ՎՐԱ

**Ա**նգլիացի լրագրող Մալքոլմ Մաքքրիջը, որը Երկրորդ Համաշխարհային պատերազմի լրտես էր, նկարագրել է իր ապրումները: «Անկողնուս վրա պառկած եմ՝ մի փոքր խմած ու հուսահատված: Մենակ եմ՝ անհուն տիեզերքի ու հավիտենության մեջ՝ առանց լույսի շողի»:

Միակ բանը, որ նրան խելամիտ թվաց, ինքնասպանությունն էր: Գնաց Մադագասկարի ծովափ ու սկսեց երկար լողալ օվկիանոսում, մինչև հոգնեց: Շատ հեռու էր գնացել, ուզում էր խեղդվել: Բայց երբ ետ նայեց ու հեռվում տեսավ ծովափի լույսերը, ուղղությունը փոխեց ու սկսեց դեպի լույսերը լողալ: Հակառակ հոգնությունը՝ նա այդ պահին հրճվում էր:

Մաքքրիջը չգիտեր՝ ինչպես, բայց համոզված էր, որ իր հուսահատ պահերին Աստված էր մոտեցել ու իրեն գերբնական հույս ներարկել: Պողոս առաքյալը հաճախ էր գրում այդպիսի հույսի մասին: Եփեսացիներին ուղղված նամակում նա հիշում է, որ Քրիստոսին ճանաչելուց առաջ մեզանից յուրաքանչյուրը «մեռած էր հանցանքների ու մեղքերի մեջ, հույս չունեիք և աշխարհում անաստված էիք» (Եփ. 2.1.12): Բայց «Աստված, որ հարուստ է ողորմությունք, իր առատ սիրո համար...երբ մեռած էինք հանցանքներում, մեզ Քրիստոսի հետ կենդանացրեց» (Հմ.4-5): Այս աշխարհը փորձում է մեզ խորտակել, բայց պետք չէ հուսահատվել: Ինչպես Մաքքրիջն է ասել իր փորձառություն մասին. «Ինձ համար պարզ էր, որ չկա խավար, այլ կա միայն հավիտենական լույսը տեսնելու կարողություն կորուստ»:

**Աղոթք** - Հայր, Դու ես ճշմարիտ աղբյուրը: Լցրո՛ւ մեզ Քո լույսով և ուրախությամբ: Ամեն:

**Խավար դաժեռ մի՞տ էլ կուներնամ, բայց կարևոր է փնտրելու գտնել այն լույսը, որ «հավիտյան փայլում է»:**

Բայց նա խոցվեց մեր մեղքերի համար և ... Երա՛վերքերով մենք բժշկվեցինք: (Ես. 53-5)

## **ՆՐԱ ՍՊԻՆԵՐԸ**

**Գ**րեզիի հետ խոսելուց հետո հասկացա, թե ինչու է մարդկանց ողջունելիս նա ոչ թե ձեռքը մեկնում, այլ բռունցքով խփում: Ձեռքով բարեելիս կարող էին երևալ նրա դաստակների վրայի սպիները, որոնք ինքնասպանության փորձի մասին էին հիշեցնում:

Գրեզիի հետ իմ շփումների լույսի ներքո ես սկսեցի մտածել Տեր Հիսուսի Ֆիզիկական սպիների մասին: Վերքեր, որոնք արդյունք էին ձեռքերին ու ոտքերին մեխեր գամելու, իսկ կողին նիզակ խրելու: Եվ Քրիստոսը, փոխանակ թաքցնելու իր վերքերը, մեր ուշադրությունը հանձնեց:

Երբ Թովմասը թերահավատորեն է ընդունում Հիսուսի՝ մեռելներից հարույթուն առնելու լուրը, Քրիստոսը ասում է. «Քո մատն այստե՛ղ բեր ու տե՛ս իմ ձեռքերը, և քո ձեռքը բե՛ր ու իմ կո՛ղը խրիր. և մի՛ եզիր անհավատ, այլ հավատացյալ» (Հովհ. 20. 27): Տեսնելով վերքերի հետքերը և լսելով Քրիստոսի խոսքերը՝ Թովմասը համոզվում է, որ Նա Հիսուսն է և հայտարարում է. «Տե՛ր իմ ու Աստվա՛ճ իմ» (Հմ.28): Հետո Հիսուսը օրհնության խոսքեր է ասում այն մարդկանց համար, ովքեր չեն տեսել իր վերքերը, բայց հավատում են: «Երանի՛ նրանց, ովքեր չեն տեսել, բայց հավատում են» (Հմ.29): Լավագույն լուրը, որ մինչև օրս տրված է, այն է, թե նրա վերքերը մեր մեղքերի համար էին: Մեղքեր, որ գործել ենք ինքներս մեզ կամ ուրիշների հանդեպ: Հիսուսի մահը բոլոր այն մարդկանց մեղքերի թողության համար է, ովքեր հավատում են իրեն ու Թովմասի նման հայտարարում. «Տե՛ր իմ և Աստվա՛ճ իմ»:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, հավատում եմ, որ Հիսուսի սպիներն իմ մեղքերի համար էին: Շնորհակալ եմ»: Ամեն:

**Մեղսալից արարածներ ենք, սակայն աղավինելով իրեն՝ տեսնում ենք, որ Նրա սոփները մեր մեղքերի համար են:**

Չէ՞ որ ահա ես եմ ուղարկում քեզ: (Դատ. 6. 14)

## **ՏՔՆԵԼ**

**Ա**ստված սիրում է օգտագործել այն մարդկանց, որոնց աշխարհն անտեսում է: Ուիլյամ Քերին 1700-ականներին ապրում էր մի փոքրիկ գյուղում: Սահմանափակ կրթություն ունենալով, շատ քիչ հաջողություններ էր հասել աշխատանքում և ապրում էր աղքատության մեջ: Բայց Աստված նրան սեր տվեց, բարի լուրով այլոց հետ կիսվելու շնորհ և առաջարկեց միսիոներ դառնալ: Քերին սովորեց հունարեն, եբրայերեն ու լատիներեն, բենգալերեն թարգմանեց առաջին Նոր Կտակարանը: Ուիլյամ Քերին այսօր «Ժամանակակից միսիոներության հայրն» է համարվում, սակայն ինքը իր զարմիկին ուղղված նամակում համեստորեն է գնահատում իր վաստակը՝ գրելով. «Կարող եմ տքնել ու հարատևել»: Երբ Աստված մեզ կանչում է որևէ պարտականություն կատարելու, Նա մեզ նաև ուժ է տալիս, որպեսզի կարողանանք լավագույնն անել՝ հակառակ մեր սահմանափակ հնարավորությունների: Դատավորների 6. 12-ում Տիրոջ հրեշտակը երևաց Գեդեոնին ու ասաց. «Տերը քեզ հետ է, ո՛վ զորավոր կտրիճ»: Հրեշտակը նրան հորդորում էր, որ գնա ու Իսրայելը փրկի մադիամացիներից: Գեդեոնը, որ դեռ չէր ստացել «զորավոր կտրիճ» կոչումը, պատասխանում է. «Աղաչում եմ քեզ, Տե՛ր իմ, ինչո՞վ փրկեմ ես Իսրայելը. ահա իմ հազարավոր մարդիկ ամենից աղքատն են Մանասեի ցեղի մեջ, և ես իմ հոր տան կրտսերն եմ» (Հմ.15): Աստված Գեդեոնին օգտագործեց նրա ժողովրդին ազատելու համար: Գեդեոնի հաջողության բանալին ա՛յս խոսքի մեջ է. «Տերը քեզ հետ է» (Հմ.12): Երբ մենք խոնարհությունը քայլենք մեր Փրկչի հետ և ապավինենք Նրա զորությանը, Նա կգորացնի մեզ, որպեսզի կարողանանք իրագործել այն, ինչը հնարավոր է միայն Իր միջոցով:

**Աղոթք** - Շնորհակալ եմ, որ զորացնում ես ինձ, իմ Տե՛ր ու զորություն: Խնդրում եմ՝ օգնի՛ր, որ Քեզ ավելի նոտիկից հետևեմ: Ամեն:

**Ասված հրավիրում է մեզ, որ ծառայենք Իրեն: Ուսի վստահե՛նք Նրա սված զորությանն ու մեր լավագույնը անենք Իր շնորհով:**

Անգամ իմ բարեկամ մարդը, որին ես վստահում էի, և որն ուտում էր հացն իմ, հաճախակի իմ դեմ խաբէութիւն գործեց: (Սաղմ. 40. 10 )

## ԴՎԱՃԱՆՎԱԾ ԼԻՆԵԼ

**2**019-ին ամբողջ աշխարհի արվեստի խոշորագույն ցուցասրահները նշեցին Լեոնարդո դա Վինչիի մահվան 500-ամյակը: Միջազգային ցուցահանդեսներում ներկայացվեցին նրա գիտական հայտնագործութիւններն ու հանրահայտ աշխատանքները, որոնցից մեկն էլ «Վերջին ընթրիքն» էր: Այս բարդ որմնանկարը պատկերում է Քրիստոսի վերջին ընթրիքն իր աշակերտների հետ (Հովհ. 13): Նկարում պատկերված է աշակերտների շփոթմունքն այն պահին, երբ Հիսուսը հայտարարում է. «Ձեզանից մեկն ինձ մատնելու է» (13:21): Մինչ տարակուսած աշակերտները հարցնում էին, թե ով կարող էր լինել այդ դավաճանը, Հուդան գիշերը դուրս ելավ իշխանութիւններին հայտնելու իր ուսուցչի և ընկերների գտնվելու վայրը: Հուդայից դավաճանված լինելու ցավը պարզորոշ երևում է Հիսուսի խոսքերում.«Նա, ով ինձ հետ հաց էր ուտում, իր կրունկն իմ դեմ բարձրացրեց» (Հմ.18): Նրա հետ հաց ուտող մարդը այդ մտերմութիւնը գործադրում է Հիսուսին վնասելու համար: Շատերին է ծանոթ մտերիմ մարդու դավաճանութիւնը: Իսկ ինչպե՞ս կարելի է այդպիսի ցավին հակադարձել: Հիսուսը, մեջբերելով Սաղմ. 40. 10-ը, մատնանշեց, որ Իրեն դավաճանողը ներկա էր հաղորդութեան ընթրիքին (Հովհ. 13. 18): Սա հուսադրում է: Որովհետև Դավիթն էլ էր տառապում մտերիմ բարեկամի կեղծիքի պատճառով և մխիթարութիւն գտավ Աստծո սիրո ու ներկայութեան մեջ (Սաղմ. 40. 11-12): Երբ մեր մտերիմները հուսախաբ անեն մեզ, մենք կարող ենք մխիթարվել՝ իմանալով, որ Աստծո մնայուն սերը և ուժ տվող ներկայութիւնը մեզ հետ են լինելու:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ Քո սերն ավելի զորավոր է, քան որևէ դավաճանութիւն: Երբ մարդիկ ինձ մերժեն, օգնիր, որ կարողանամ ուժ գտնել քո մշտական ներկայութիւնը գիտակցելով: Ամեն:

**Մտերիմների դավաճանութիւնը հնարավոր է, սակայն վստահ լինենք, որ Աստծո սերն ու ներկայութիւնը մեզ կդաշտանեն:**

Տեր Աստված իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկրության դրախտում, որպեսզի սա մշակի ու պահպանի այն: (ԾՃՆ. 2. 15)

## **ՄՇԱԿԵԼ ԱՍՏԾՈՒ ԽՈՍՔԸ**

**Դ** ստորիկա ուզում էր խաղալ ինձ հետ և հարցրեց.«Հայրի՛կ, ինչու՞ ես գնում գործի»: Ես էլ շատ կուզեի աշխատանքի չգնալ ու բալիկիս հետ զբաղվել, սակայն անհետաձգելի անելիքներ կային: Իսկ հարցը լավն էր: Ինչու՞ ենք մենք աշխատում:

Մեր և մեր սիրելիների կարիքները հոգալու՞ համար: Այդ դեպքում ի՞նչ ասել անվճար, կամավոր աշխատանքի մասին:

Ծննդոց 2-ը ասում է. «Տեր Աստված իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկրության դրախտում, որպեսզի սա մշակի ու պահպանի այն» (Հմ. 15): Աներս հողագործ է, և հաճախ է ասում, որ աշխատում է, որովհետև սիրում է հողն ու անասուններին: Սա հասկանալի է: Բայց կան նաև մարդիկ, որոնք չեն սիրում իրենց գործը: Ինչու՞ է Աստված մեզ դրել մի տեղ և որոշակի պարտականություններ տվել մեզ:

Ծննդոց 1-ը տալիս է այս հարցի պատասխանը: Մենք ստեղծված ենք Աստծո պատկերով, որպեսզի ուշադիր և հոգատար լինենք Իր ստեղծած աշխարհի հանդեպ (Հմ.26): Աշխարհի սկզբի մասին հեթանոսական պատմություններն ասում են, թե «աստվածները» մարդուն ստեղծել են, որպեսզի իրենց գերինները դառնան: Ծննդոց գիրքը հայտարարում է, որ ճշմարիտ Աստվածը մարդուն ստեղծեց, որ Իր ներկայացուցիչն ու տնտեսը լինի: Թող որ մենք աշխարհում արտացոլենք Իր սիրո իմաստուն կանոնը: Աշխատանքը կոչում է՝ Աստծո աշխարհը մշակելու համար՝ հանուն Իր փառքի:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ՝ Քեզ միանալու պատվի համար: Օգնի՛ր, որ մեր կյանքում ու աշխատանքում կարողանանք արտացոլել Քո սիրո և իմաստության կանոնը: Ամեն:

**Ասված մեզանից յուրաքանչյուրին գործ է սվել: Ինչդե՞ս կարելի է այն կատարել Իր շնորհով:**

Գիտեմ, թե ում եմ հավատացել: (Բ. Տիմ. 1. 12)

## **ՑԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՊԱՎԻՆԵԼ ԱՍՏԾՈՒՆ**

**Պ**ապա Ջոնն անուշով մեկը իմացավ, որ քաղցկեղ ունի: Այդ ժամանակ ինքն ու իր կինը՝ Քերոլը, զգացին Աստծո կոչը, որ հիվանդություն մասին գրեն համացանցում, կիսվեն իրենց զգացումներով: Հավատալով, որ Աստված օգնելու է իրենց, նրանք այդպես էլ արեցին:

Երկու տարի անց, երբ Քերոլը գրեց, թե «ամուսինը գնաց Հիսուսի գիրկը», հարյուրավոր մարդիկ շնորհակալություն հայտնեցին նրան լայնախոհություն համար: Մեկը գրեց, թե քրիստոնեական տեսակետից մեռնելը օրինաչափ է. քանի որ «բոլորս էլ մի օր մահանալու ենք»: Մեկ ուրիշն ասում էր. «Թեև այս գույգի հետ բնավ ծանոթ չեմ եղել, բայց չեմ կարող չասել, թե որքան եմ տպավորվել Աստծուն վստահելու նրանց վկայությունից»: Պապա Ջոնը երբեմն անտանելի ցավեր էր ունենում, սակայն նրանք շարունակում էին իրենց պատմությամբ կիսվել մարդկանց հետ, որպեսզի ցույց տային, թե ինչպես է Աստված իրենց վերև պահում: Նրանք վստահ էին, որ իրենց վկայությունը արդյունավետ էր լինելու Աստծո համար, ինչպես Պողոսն էր գրում Տիմոթեոսին, երբ վերջինը տառապում էր. «Գիտեմ, թե ում եմ հավատացել և համոզված եմ, որ նա կարող է իմ ավանդը պահել մինչև այն օրը» (Բ.Տիմ. 1. 12) : Աստված կարող է գործածել նույնիսկ սիրելիի մահը՝ իր հանդեպ մեր (և ուրիշների) հավատը ուժեղացնելու համար: Դա կարող է անել Հիսուս Քրիստոսով մեր ստացած շնորհքի միջոցով (Հմ.9): Եթե տառապանքի ու նեղության մեջ լինես, վստահ եղի՛ր, որ այն կարող է քեզ մխիթարություն ու խաղաղություն պարգևել:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, գորացրու՛ իմ մեջ եղած հավատքի կրակը, որպեսզի կարողանամ սիրով ու արիաբար վկայել, որ Դու ես գործում իմ կյանքում: Ամեն:

**Ցավեր մի՛ս էլ կունենաք, բայց կարևոր է դրանց միջով Աստծոն նայել:**

Մեմփիբոսթեն Դավթի սեղանից էր հաց ուտում, որպես թե արքայի որդիներից մեկը լիներ: (Բ.Թագ. 9. 11)

## **ՇՆՈՐՔ՝ ՇՐՋԱՆԱԿԻՑ ԴՈՒՐԱ**

**Թ**ոմն աշխատում էր իրավաբանական մի ընկերությունում՝ որպես Բոբի խորհրդական: Նրանք լավ բարեկամներ էին մինչև այն պահը, երբ Թոմը հազարավոր դոլարներ յուրացրեց ընկերությունից: Իմանալով պատահածը՝ Բոբը շատ վիրավորվեց ու զայրացավ: Սակայն նրա հավատացյալ տեղակալը մի իմաստուն խորհուրդ տվեց: Նա նկատել էր, որ Թոմը զղջացել է արածի համար, և Բոբին հորդորեց նրան ետ վերցնել աշխատանքի. «Նրան մի համեստ աշխատավարձ նշանակիր, որպեսզի կարողանա վերադարձնել յուրացրած գումարը, և կունենաս հավատարիմ ու երախտապարտ պաշտոնյա»: Բոբն այդպես էլ վարվեց, և Թոմը իրոք դարձավ այդ աշխատողը: Սավուղ թագավորի թոռնիկ Մեմփիբոսթեն սխալ բան չէր արել, բայց դժվարություն մեջ էր, երբ Դավիթը դարձավ թագավոր: Դավիթը կարող էր Սավուղի սերունդը վերացնել, բայց նա սիրեց Սավուղի որդի Հովնաթանին և նրա որդուն համարեց իր զավակներից մեկը (Բ. Թագ. 9. 1-3): Իր ցուցաբերած շնորհքի համար նա մեկ ընկեր շահեց: Մեմփիբոսթեն զարմացավ ասելով. «Թեև իմ հոր ամբողջ տունը իմ տեր արքայի առաջ մահվան արժանի մարդիկ են, բայց դու քո ծառային դրեցիր այն մարդկանց շարքը, որոնք արքայի սեղանից են ուտում» (19. 28): Նա հավատարիմ եղավ Դավթին նույնիսկ այն ժամանակ, երբ իր որդի Աբեսաղոմը Երուսաղեմից սկսած հետապնդում էր նրան՝ (Բ. Թագ. 16. 1-4, 19. 24-30): Ուզու՞մ ես ամբողջ կյանքում հավատարիմ բարեկամ ունենալ, անսովոր մի բան արա: Երբ տրամաբանությունը թեկադրի պատժել, դու շնորհքն ընտրիր: Հաշիվ պահանջիր նրանցից, բայց անվերապահ առիթ տուր, որ ուղղեն իրենց գործած սխալը, և դու կունենաս անսահման նվիրված ու երախտապարտ բարեկամներ:

**Աղոթք** - Հայր, մենք Քեզանից ստացել ենք արտակարգ շնորհք: Օգնիր, որ այդ նույն շնորհքը ցույց տանք ուրիշներին, հատկապես նրանց, ովքեր զղջում են իրենց սխալի համար: Ամեն:

**Շատերը կարող են սխալներ ու չարություն անել մեր հանդեպ: Հաշիվ դաժանեցնե՛մ, բայց միաժամանակ շնորհ ցույց տա՛մ:**



Ձեռքը նրա վրա դրեց, նա էլ իսկույն ուղղվեց ու փառաբանում էր Աստծուն: (Ղուկ. 13. 13)

## **ՕԳՆԻՐ ԿԱՐՈՏՅԱԼԻՆ**

**Չ**արմանալի չէր, որ Մայր Թերեզան ստացավ Խաղաղության Նոբելյան մրցանակ: Նա գրեթե ամբողջ կյանքում ծառայել էր «սովյալ, մերկ, անտուն, կույր, հիվանդ, մերժված, չսիրված ու դուրս նետված» մարդկանց և նրանց անվամբ էլ ստացավ մրցանակը:

Հիսուսն էլ մեզ համար օրինակ եղավ, թե ինչպես կարելի է հոգալ ու սիրել կարոտյալներին: Ոչ թե ժողովարանի առաջնորդների նման, որոնք շաբաթի օրերը հիվանդներից ավելի էին հարգում (Ղուկ. 13. 14): Հիսուսը, տաճարում տեսնելով հիվանդ կնոջը, սիրով գթաց նրան: Նայեց Ֆիզիկականից այնպիսի դոկտոր, տեսավ Աստծո գեղեցիկ ստեղծագործության կապը, կանչեց իր մոտ և բուժեց նրան: «Ձեռքը նրա վրա դրեց, նա էլ իսկույն ուղղվեց ու փառաբանում էր Աստծուն» (Հմ.13): Բուժելով այդ կնոջը՝ Հիսուսը զայրացրեց ժողովարանի առաջնորդներին, որովհետև շաբաթ էր: Հիսուսը, որ շաբաթի էլ տերն էր (Ղուկ. 6.5), սիրով բուժեց այդ կնոջը, որը մոտ երկու տասնամյակ անհանգստություն ու նվաստացում էր կրել:

Մենք որքա՛ն հաճախ ենք տեսնում կարոտյալի: Կամ մենք ինքներս ենք մերժվում ինչ-որ մեկի սահմանած չափանիշներին չհամապատասխանելու պատճառով: Ձլինե՛նք կրոնական առաջնորդների նման, որոնք ավելի մտահոգված էին օրենքներով, քան իրենց շրջապատի մարդկանցով: Այլ հետևենք Հիսուսի օրինակին և ուրիշներին մոտենանք կարեկցանքով, սիրով ու պատվով:

**Աղոթք** - Տեր, շնորհակալ եմ քո անսահման սիրո և հիվանդ ու կարիքավոր մարդկանց հանդեպ կարեկցության համար:  
Ամեն:

**Հեսելով Տեր Հիսուսի օրինակին՝ մենք էլ մեր շուրջը եղողներին ցուցաբերենք սեր ու կարեկցանք:**

Այսպես ձեր լույսը մարդկանց առաջ թող լուսավորի, որ ձեր բարի գործերը տեսնեն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է: (Մատթ. 5,16)

## **ՇՈՂԱՑՈՂ ԼՈՒՅԱԸ**

Համաձայնել էի մեր տեղական եկեղեցում հինգշաբաթյա դասընթաց անցկացնել և շատ լարված էի: Պետք էր այնպես անել, որ աշակերտները սիրով հաճախեն, սիրեն դասընթացը և ինձ: Այդ նկատառումով ես ավելացրել էի թեմաները, սահիկներ ու գրավոր տեղեկագրեր էի պատրաստել: Անհանգստությունն չէր անցնում, որովհետև մեկ շաբաթ էր մնացել, իսկ ես մարդկանց դեռ չէի ասել, որ մասնակցեն:

Երբ ազդեցում էի, հասկացա, որ այդ դասընթացը մի ծառայություն է, որը լույս է սփռում Աստծո վրա: Որովհետև Սուրբ Հոգին էր ինձ առաջնորդելու մարդկանց դեպի Աստված տանելու գործում, և ես հանգիստ կարող էի տազնապներս մի կողմ դնել: Երբ Հիսուսը Լեռան քարոզում սովորեցնում էր իր աշակերտներին, ասաց. «Դուք աշխարհի լույսն եք. մի քաղաք, որ սարի վրա է կանգնած, չի կարող թաքնվել: Եվ ճրագը չեն վառի ու գրվանի տակ դնի, այլ ճրագակալի վրա, և այն լույս կտա բոլորին, ովքեր տան մեջ են» (Մատթ. 5. 14-15): Կարգալով այս բաները՝ վերջապես համացանցի միջոցով հայտարարություն ուղարկեցի դասընթացի մասին: Անմիջապես մարդիկ սկսեցին գրանցվել ու հետաքրքրություն ցուցաբերել: Տեսնելով այդպիսի արձագանք՝ ես ավելի սևեռվեցի Հիսուսի այն խոսքի վրա, թե «ձեր լույսը մարդկանց առաջ թող լուսավորի, որ ձեր բարի գործերը տեսնեն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է (Հմ.16):

Այդ մոտեցմամբ մեծ հաճույքով դասավանդեցի: Ազդեցում եմ, որ իմ այս պարզ գործը փարոս դառնա և ոգևորի ուրիշներին, որպեսզի իրենց լույսը փայլի Աստծո համար:

**Աղոթք** - Տե՛ր, զորացրո՛ւ ինձ, որպեսզի աստվածատուր լույսը շողա և շատերը տեսնելով՝ փառավորեն Քեզ: Ամեն:

**Լարվում ես, երբ առիթ է ստեղծվում հավաստի այլոց հետ բաժնեկցելու: Աղոթի՛ր և թույլ տուր, որ Աստված Իր գործը կատարի:**

Նա, ով իմ մեջ է մնում, ես էլ՝ իր մեջ՝ նա շատ պտուղ է բերում: (Գո՛վհ. 15.5)

## **ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԶՈՒԳԱՆՎԱԳ**

**Մ**անկական համերգի ժամանակ ուսուցիչն ու աշակերտը միասին նստեցին դաշնամուրի առաջ: Ուսուցիչը վերջին ցուցումները շնչաց, և աշակերտն սկսեց նվագել: Սկզբում շատ պարզ մեղեդի էր հնչում, բայց երբ ուսուցիչն էլ միացավ, երգին խորք ու հարստություն ավելացավ: Երաժշտական կտորի ավարտին ուսուցիչը գլխի շարժումով իր գոհունակությունն արտահայտեց:

Հիսուսով մեր կյանքը նույնպես ավելի շատ զուգանվագի է նման: Բայց ես երբեմն մոռանում եմ, որ Նա «նստած է իմ կողքին», և միայն իր զորությունը ու առաջնորդությունը է, որ ես կարող եմ «նվագել»: Երբ փորձում եմ միայն ի՛մ ուժերով ճիշտ նվագել, կեղծ ու դատարկ է ստացվում: Փորձում եմ իմ սահմանափակ կարողությամբ հարցերը լուծել, դարձյալ արդյունքը աններդաշնակ է լինում:

Իսկ Ուսուցչիս ներկայությունը ամեն ինչ հարթում է: Երբ վստահում եմ Հիսուսին, տեսնում եմ, որ կյանքս դառնում է Աստծո համար ավելի պատվաբեր: Հաճույքով եմ ծառայում, ազատորեն սիրում և հիանում, երբ Նա օրհնում է իմ փոխհարաբերությունները: Դա նման է այն խոսքին, որ Հիսուսն ասաց իր աշակերտներին. «Նա, ով իմ մեջ է մնում, ես էլ՝ իր մեջ, նա շատ պտուղ է բերում, որովհետև առանց ինձ ոչինչ չէք կարող անել» (Հովհ. 15.5):

Յուրաքանչյուր օր մենք մեր բարի Ուսուցչի հետ զուգանվագ ենք կատարում: Եվ Նրա շնորհքն ու զորությունը մեր հոգևոր կյանքի մեղեդին են կրում:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր հիշել, որ Դու միշտ ինձ հետ ես: Պատրաստ եմ լսելու Քո ցուցումները: Ամեն:

**Ասված մի՞ս յասրաս է փաշալերելու մեզ: Ուրախությամբ ընդունենք Նրա օգնությունը:**

Սեղավորին իր մոլորության ճանապարհից դարձնողը մի հոգու մախից կփրկի և մեղքերի շատությունը կժաժկի: (Գալ. 5.20)

## **ԱԶՆԻՎ ԵՇՏՈՒՄ**

**Գ**արնանային թարմ եղանակ էր, և ես ու կինս ճամփա ընկանք: Բայց մեր վայելած հաճելի ակնթարթները կարող էին ողբերգության վերածվել, եթե կարմիր ու սպիտակ ազդանշանը ինձ չզգուշացներ, որ սխալ ուղղությամբ եմ ընթանում: Անհրաժեշտ չափով տարածություն չէի վերցրել և կարող էի վթարվել: Արագորեն ամեն ինչ ճշտեցի, բայց երկար ժամանակ չէի հանգստանում այն մտքից, որ եթե չնկատեի զգուշացնող նշանը, կարող էի վնաս հասցնել կնոջս, ինձ և ուրիշներին:

Հակոբոսի նամակի եզրափակիչ խոսքերը շեշտում են ուղղելու, ճշտելու կարևորությունը: Մեզանից ո՞վ կարիք չի ունեցել, որ իրեն սիրող մարդիկ օգնեն «ես դառնալու» մոլորության ճանապարհից կամ վնասակար ցանկություններից: Ո՞վ գիտե, թե ինչ վնասներ կարող են լինել, եթե մեկը ճիշտ ժամանակին չմիջամտի:

Ճշտելու կարևորությունը Հակոբոսը շեշտում է հետևյալ բառերով. «Սեղավորին իր մոլորության ճանապարհից դարձնողը մի հոգու մահից կփրկի և մեղքերի շատությունը կժաժկի (Հալ. 5.20): Ուղղելը Աստծո ողորմության արտահայտությունն է: Թող մեր սերը և ուրիշներին բարություն անելու պատրաստակամությունը օգնեն, որ խոսենք ու վարվենք այնպես, որ Նա կարողանա մեզ օգտագործել «մեկին ետ բերելու համար» (Հմ. 19):

**Աղոթք** - Գնի՛ր, օգնի՛ր ինձ, որ հեռու չմնամ Քո ճշմարտությունից, տու՛ր ինձ քաջություն, որպեսզի կարողանամ դարձի բերել մոլորվածներիս: Ամեն:

**Դյուրին չէ որևէ մոլորյալի դարձի բերել, սակայն այդ անելով՝ մեծ մրցանակ կշահենք:**

Ակրտությանը նրա հետ մեռնելով՝ թաղվեցինք մահի մեջ:  
Հոռոմ. 6.4

## **ՊԱՏԵՐԱԶՍԸ ԻՍԿԱՊԵՍ ԱՎԱՐՏՎԵԼ Է**

**Ե**րկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Հիբրու Օնոդան 29 տարի թաքնվեց անտառում՝ չհավատալով, որ իր երկիրը պարտվել է: Ճապոնացի ռազմական ղեկավարները Օնոդային ուղարկել էին Ֆիլիպինների Լուբանգ կղզի, որպեսզի լրտեսի դաշնակից ուժերին: Եվ խաղաղության ու հաշտության պայմանագրի ստորագրումից հետո նա մնաց անտառում: 1974-ին Օնոդային կցված զինվորականը զնաց այդ կղզին՝ գտնելու և համոզելու, որ պատերազմն ավարտվել է:

Օնոդան շուրջ երեք տասնամյակ ապրեց մենակ, որովհետև մերժեց հանձնվել ու հավատալ, թե կռիվներն ավարտվել են: Մենք էլ ենք նման սխալներ անում: Պողոսը հայտարարեց այն ցնցող ճշմարտությունը, թե «Մեզանից քանիսը, որ Հիսուս Քրիստոսով մկրտվեցինք, նրա մահվանը մկրտվեցինք» (Հռոմ. 6. 3): Հիսուսը սատանայի ստերը, մահվան արհավիրքները և մեղքի ճանկերը մահվան դատապարտեց հզոր ու խորհրդավոր կերպով՝ խաչի վրա: Թեև մենք «մեռած ենք մեղքի» և «ողջ ենք Աստծո համար» (Հմ.11), բայց ապրում ենք այնպես, ասես զորությունը չարի ձեռքում է: Մենք լսում ենք փորձություն ձայնը՝ տեղի տալով մեղքի հրապույրին: Հետևում ենք ստերին՝ փոխանակ Հիսուսին վստահելու: Աստծո շնորհքով մենք կարող ենք Քրիստոսի հաղթանակի ճշմարիտ պատմությունը վստահել:

Մեղքի զգացումից կազատվենք, երբ գիտակցենք, որ Հիսուսն արդեն հաղթել է պատերազմում: Թող որ իր զորությունամբ ապրենք այդ ճշմարտությունը:

**Աղոթք** - Տե՛ր, գիտեմ, որ չարի ու խավարի դեմ պայքարում հաղթել ես: Օգնիր, որ կարողանամ ապրել ու գործել այս գիտակցումով: Ամեն:

**Երբեմն հավասում եմ, թե մահն ու մեղքը գորեղ եմ, բայց վստահ լինեմ, որ Քրիստոսն է հաղթել այս աշխարհին:**

Թող Տերը դատ անի իմ ու քո միջև:  
(Ա. Թագ. 24. 13)

## **ԱՍԾՈՆ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՐ**

**Շ**ատ էի բարկացել մի կնոջ վրա, որը հանիրավի չարախոսել էր իմ մասին: Զայրույթից ուժեղ գլխացավ ունեցա և ուզում էի, որ այդ պատմությունն մասին բոլորն իմանան, և ինքն էլ ինձ նման տառապի: Սակայն երբ գլխացավն անցնելու համար սկսեցի աղոթել, Սուրբ Հոգին դատապարտեց ինձ: Ինչպես կարող էի վրիժառուլություն ծրագրել, երբ օգնություն էի խնդրում Աստծուց: Եթե հավատում էի, որ Նա հոգում է իմ մասին, ինչու՞ պիտի չվստահեի, որ հենց Նա՛ էլ կարող է անցկացնել իմ դժվարությունները: Իմանալով, որ ցավ ունեցող մարդիկ հաճախ ուրիշներին են ցավ պատճառում, Աստծուց խնդրեցի, որ օգնի ինձ, որպեսզի ներեմ այդ կնոջն ու աշխատեմ հաշտվել: Սաղմոսերգու Դավիթը նույնպես Աստծուն վստահելու ճամարտությունը հասկացավ, երբ անարդարություն էր դիմադրավում: Նա փորձում էր անել ամեն ինչ լավագույն ծառա լինելու համար, բայց Սավուղ թագավորը նախանձեց և ուզեց սպանել իրեն (Ա.Թագ. 24. 1-2): Դավիթը շատ տառապեց, մինչ Աստված աշխատում էր հարցը լուծել և նրան պատրաստել որպես Սավուղին հաջորդող: Եվ Դավիթը որոշեց վրիժառուլության փոխարեն պատվել Աստծուն (Հմ.3-7): Սավուղի հետ հաշտվելու համար նա իր բաժին գործն արեց և թողեց, որ մնացյալն Աստված անի(Հմ. 8-22):

Երբ թվում է, թե մարդիկ սխալներ են գործում ու չեն դատապարտվում, պայքարում ենք այդ անարդարությունն դեմ: Սակայն Աստծո ողորմությունը ապավինելով՝ կարող ենք ներել, ինչպես Ինքն է ներել մեզ և ստանալ այն օրհնությունները, որ մեզ համար է պատրաստել:

**Աղոթք** - Ողորմած Աստված, օգնիր ինձ, որ վստահեմ Քեզ՝ իմանալու համար արդարության գերակայությունը: Ամեն:

**Մեզ ցավ դատառողներ ու անարգողներ մի՞ս էլ կլինեն:**  
**Կարևոր է նրանց հանձնել Ասծո ողորմությանը:**

Նույն ինքը Յոզիմ վկայում է մեր հոգուն,  
որ մենք Աստուծո որդիներ ենք: (Յոզիմ. 8. 16)

## **ՍԻՐՎԱԾ, ԳԵՂԵՑԻԿ, ՕԺՏՎԱԾ**

**Մ**ալքոլմը ինքնավստահ պատանու տպավորություն էր թողնում: Մակայն այդ ինքնավստահությունը իրականում դիմակ էր: Նրա անհանգիստ ընտանիքը իրեն դարձրել էր վախկոտ, անվստահ ու ընտանիքի անդամների հետ հարաբերություններում միակ պատասխանատու: «Որքան հիշում եմ, ամեն առավոտ լվացարան մտնելով ու հայելուն նայելով՝ ես ինձ ասել եմ. «Դու հիմար ես, տգեղ և ամեն ինչի համար դու ես պատասխանատուն»: Մալքոլմի այս վիճակը շարունակվեց մինչև նրա 21 տարեկան դառնալը, երբ իր ինքնությունը Հիսուսով լինելու Աստվածային հայտնությունն ունեցավ: Նա ասում է. «Ես հասկացա, որ Աստված ինձ սիրում է առանց որևէ պայմանի: Ես չեմ կարող Աստծուն ամաչեցնել և Նա ինձ բնավ չի մերժի»: Այսպես ժամանակի ընթացքում Մակլքոլմն, արդեն հայելուն նայելով, բոլորովին այլ կերպ էր արտահայտվում. «Դու սիրված ես, գեղեցիկ, օժտված և դ՛ու չես պատասխանատուն»:

Մալքոլմի այս փորձառությունը ցույց է տալիս, թե Աստծո Հոգին ինչ կարող է անել իրեն հավատացողներին: Նա մեզ ազատում է վախից՝ հայտնելով, որ մենք սիրված ենք (Հռոմ. 8. 15. 38-39) և հաստատում է, որ մենք Աստծո զավակներն ենք և ունենք այդ վիճակից բխող բոլոր օգուտները (8. 16-17, 12. 6-8): Այսպես մեր մտածելակերպը փոխելով՝ սկսում ենք ինքներս մեզ ավելի լավ տեսնել (12. 2-3):

Տարիներ անց էլ Մալքոլմը դեռ ամեն օր շնչում է այդ խոսքերը՝ շեշտելով, թե ինչ է ասում Աստված իր մասին: Աստծո աչքով ինքը սիրված է, գեղեցիկ ու օժտված: Մենք նույնպես:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ սիրում ես ինձ և Քո զավակն ես դարձրել: Թող Քո Յոզիմ այսօր ճշմարտապես գործի իմ մեջ:  
Ամեն:

**Դու քեզ արժանի չես համարում, սակայն Աստված սիրում է քեզ  
և օժտել է զանազան տարգևներով:**

Ընչաքաղցության հետևից ընկնելով՝ կաշառք էին վերցնում եւ իրավունքը թերում: (Ա. Թագ. 8. 3)

### **ՅՈՐ ՃԱՍՓԱՆԵՐՈՎ**

**1** 960 թվականին Չիկագոյի արևմտյան մասում գտնվող Հյուսիսային Լոնդելյ ընակավայրը հայտնի էր որպես միջքաղաքային գաղութ: Միջին դասի մի խումբ աֆրոամերիկացիներ «պայմանագրով» տուն էին գնել այդտեղ: Պայմանագրի էությունն այն էր, որ գնորդն ամեն ամիս որոշակի գումար էր վճարում: Բայց եթե հանկարծ ինչ-ինչ պատճառով մեկ անգամ չվճարեր, նա կորցնում էր և՛ մինչ այդ կատարած կանխավճարը, և՛ տունը: Այսպիսով անխիղճ վաճառողները գումարը վերցնում ու տնից հանում էին ընտանիքներին, և այդ տունը կրկին վաճառում մեկ ուրիշին: Եվ գնալով ագահության այդ շրջանակն ընդլայնվում էր:

Սամուելն իր որդիներին դատավոր նշանակեց Իսրայելի ժողովրդի վրա, սակայն նրանք ագահությանը տարվեցին, «չգնացին իրենց հոր ճանապարհով» (Ա. Թագ. 8.3): Հակառակ Սամուելի անաչառության՝ նրանք «ընչաքաղցության հետևից ընկնելով՝ կաշառք էին վերցնում և իրավունքը թյուրում» և իրենց դիրքն ի նպաստ իրենց էին գործածում: Այս անարդար վարմունքը բարկացրեց Աստծուն և Իսրայելի երեցներին: Այդ ապրումները արտացոլված են Հին Կտակարանի Թագավորների շարքում (Հմ. 4-5):

Երբ մերժում ենք Աստծո ճամփաներով քայլելը, անարդարություն է առաջանում: Իսկ երբ քայլենք Իր ճամփաներով անկեղծությունն ու արդարությունը կերևան ոչ միայն մեր խոսքերի, այլև գործերի մեջ:

**Աղոթք** - Երկնքում բնակվող Աստված, անարդարությունը շրջապատում է մեզ՝ ցավ պատճառելով մեր սրտերին: Օգնի՛ր, որ տառապողների կողքին մնամ ու կյանքս նվիրեմ Քո ճամփով քայլելուն: Ամեն:

**Անարդարությունը մեր շուրջն է:  
Խորեեն՛դ դրանից ու դառնան՛ք Աստծուն:**

Տիրոջ աչքում հարգելի է մահն իր սրբերի: (Սաղմ. 115. 15)

## **ԲԱՑ ԹՈՂՆԵԼ**

**Հ**իվանդապահն ասաց.«Հայրդ մեռնում է»: Այս արտահայտությունն ինձ համար ցավալի նորություն էր: Կյանքի վերջին պահերին ես ու քույրս նստեցինք նրա մահճակալի մոտ: Չիմանալով՝ նա լսում է մեզ, թե ոչ, համբուրեցինք մեր հոր գլուխը, ականջին շնչացինք Աստծո խոստումները: Երգեցինք «Մեծ է Հավատարմությունդ» երգը և արտասանեցինք 23-րդ սաղմոսը: Ասացինք, որ շատ ենք սիրում իրեն և շնորհակալություն հայտնեցինք մեր հայրը լինելու համար: Իմանալով, որ փափագում էր Հիսուսի հետ լինել, ասացինք, որ կարող է գնալ, թեև չափազանց դժվար էր այդ բառերն ասելը, նրան բաց թողնելը: Մի քանի բոպե հետո նա մահացավ:

Ցավալի բան է սիրելի մարդու մահը: Նույնիսկ Հիսուսի արցունքները հոսեցին, երբ իր մտերիմ բարեկամ Ղազարոսը մահացավ (Հովհ. 11. 35): Սակայն Աստծո տված խոստման համաձայն՝ մենք Ֆիզիկական մահից հետո մի նոր կյանքի հույս պիտի ունենանք: Սաղմոս 115. 15-ն ասում է, որ Աստծո «հավատարիմ ծառաները արժեքավոր են իր համար»: Թեև նրանք մեռնում են, բայց դարձյալ կենդանի են մնալու:

Հիսուսը խոստանում է. «Ես եմ հարությունն ու կյանքը, ինձ հավատացողը թեկուզ մեռնի էլ, կապրի: Եվ ամեն ոք, ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Հովհ. 11. 25-26): Ի՛նչ մեծ մխիթարություն է իմանալը, որ հավիտյան վայելելու ենք Աստծո ներկայությունը:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ Քո հավիտենական ներկայության խոստումի համար: Ամեն:

**Չիսուսը խաչի վրա Իր մահով և հարությանը մեզ հավիտենական կյանքի հնարավորությունը շնորհեց:**

Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ: (Բ. Կորնթ. 5. 17)

## **ԻՐ ՍԱՅՐ ԿՅԱՆՔ Է ԲԵՐՈՒՄ**

Հարավային Աֆրիկայի ամենակատաղի բանտում իր մատուցած ծառայության ժամանակ Ջոաննա Ֆլանդերս Թոմասը վկայեց Քրիստոսի սիրտ փոխող զորության մասին: Ֆիլիպ Ենսին իր «Անհետացող շնորհք» գրքում նկարագրում է նրա փորձառությունը՝ գրելով. «Ջոաննան սկսեց ամեն օր այցելել բանտարկյալներին ու նրանց տալ ավետարանի ներումի և հաշտության պատգամը: Շահեց բանտարկյալների վստահությունը և կարողացավ նրանց մղել, որ խոսեն իրենց չստացված մանկության ու բազում խնդիրների մասին: Ջոաննան սկսեց իրենց վեճերը լուծելու ավելի լավ ուղիներ ցույց տալ նրանց: Ու եթե այդ այցելություններից առաջ բանտում բռնության 279 դեպք էր եղել, հաջորդ տարի այդ թիվը դարձավ 2»: Պողոս առաքյալը գրել է. «Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ (Բ. Կորնթ. 5. 17): Ավետարանի կերպարանափոխող զորությունը մեծագույն հույս ներշնչող ուժն է տիեզերքում: Նոր արարածներ: Ի՛նչ հիանալի խորհուրդ: Հիսուսի մահը մեզ դնում է իրեն նման լինելու մի նոր ընթացքի մեջ: Դա մի ճամփորդություն է, որն իր գագաթնակետին կհասնի, երբ դեմ առ դեմ հանդիպենք իրեն (Ա. Հովհ. 3. 1-3):

Որպես Հիսուսին հավատացողներ՝ մենք մեր կյանքին նայում ենք որպես նոր ստեղծված: Բայց չպետք է մոռանանք, թե ինչ արժե այդ մեկը Քրիստոսի համար: Նրա մահը մեզ կյանք է բերում: «Որովհետև Աստված նրան, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արեց, որպեսզի մենք նրա մեջ Աստծու արդարները լինենք» (Բ. Կորնթ. 5. 21):

**Աղոթք** - Սիրո՛ղ Յայր, շնորհակալ եմք Դիսուսի՝ խաչի վրա կատարածի համար: Ես նոր ստեղծված եմ: Ների՛ր ինձ այն պահերի համար, երբ հին բաներին եմ վերադառնում, որոնք անցնելու են: Ամեն:

**Դիսուսի փոխակերպող գործը հայնմվելու է մեր մեջ, որդեսպի լինենք «մի նոր արարած»:**

Եվ կյանքը հայտնվեց, ու մենք տեսանք և վկայում ենք և ձեզ պատմում ենք այդ հավիտենական կյանքը, որ Գոր մոտ էր ու մեզ երևաց : (Ա. Գովհ. 1. 2)

## **ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ ՃԱՍՓՈՐԴՈՂ ՆԱՄԱԿՆԵՐ**

**Ա**մեն տարի մեկ միլիոնից ավելի երիտասարդներ են մասնակցում Նամակ գրելու միջազգային մրցույթին: 2018-ի մրցույթի թեման այսպիսին էր.«Պատկերացրո՛ւ, որ դու ժամանակի մեջ ճամփորդող մի նամակ ես: Ի՞նչ պատգամ կուղենաս տալ քո ընթերցողներին»:

Աստվածաշնչում կա նամակների մի հավաքածու, որը Սուրբ Հոգու ներշնչմամբ ու առաջնորդությամբ անցել է ժամանակի միջով ու հասել մեզ: Երբ քրիստոնեական եկեղեցին դեռ զարգանում էր, Հիսուսի աշակերտները Եվրոպայում ու Փոքր Ասիայում տարածված եկեղեցիներին նամակներ գրեցին, որպեսզի նրանք հասկանան իրենց նոր կյանքը: Այդ նամակներից շատերը հավաքված են մեր այսօրվա Աստվածաշնչում:

Ի՞նչ էին ուզում իրենց ընթերցողներին փոխանցել այդ նամակների հեղինակները: Հովհաննեսն իր առաջին նամակում բացատրում է, «Այն, որ սկզբից էր, որ լսեցինք և մեր աչքերով տեսանք, որին նայեցինք, և մեր ձեռքերը շոշափեցին՝ կյանքի Բանի մասին» (Ա. Հովհ. 1.1): Նա գրում է կենդանի Քրիստոսի հետ իր ունեցած հանդիպման մասին: Գրում է, որպեսզի իր ընթերցողները «հաղորդություն ունենան, իսկ մեր հաղորդությունը Հոր և նրա Որդի Հիսուս Քրիստոսի հետ է» (Հմ.3): Նա գրում է, որ երբ միմյանց հետ հաղորդակցվենք, մեր ուրախությունը կատարյալ կլինի (Հմ.4): Աստվածաշնչում եղած նամակները ժամանակից անդին՝ հավիտենական Աստծո հետ լինելիք հաղորդության են առաջնորդում:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ Քեզ հետ իմ ունեցած հաղորդակցության համար: Ամեն:

**Ասծո խոսքն ու դասվերները մեզ են հասնում ու փոխանցվում դարերի միջով:**

Բայց դուք ընտիր սերունդ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ, որպեսզի նրա՝ առաքինությունները քարոզեք, ով ձեզ խավարից դեպի իր գարմանալի լույսը կանչեց: (Ա. Պետ. 2. 9)

### **ՊՂՊՋԱԿԻ ՎՐԱ**

«Պղպջակի վրա» արտահայտությունն առաջին անգամ գործածվել է 1970թ. լրատվական մի հրատարակման մեջ: Անորոշություն ցույց տվող այդ որակումով նկարագրվում էր մրցավազքի անփորձ մասնակից, վարորդ Սթիվ Կրիսլոֆի ընթացքը: Այն անվանվեց «պղպջակի վրա», որովհետև նա դեպի Ինդիանապոլիս ընթացող 500 արագավազ մեքենաներից ամենադանդաղն էր: Այդուամենայնիվ, նրա արձանագրած ժամանակը թույլ տվեց, որ շարունակի մասնակցել մրցավազքին:

Մենք էլ ենք երբեմն մեզ «պղպջակի վրա» զգում, չենք իմանում, թե արդյո՞ք ունենք կյանքի մրցավազքին անհրաժեշտ որակները: Այդպիսի պահերին հարկավոր է հիշել, որ Հիսուսով մենք բոլորովին «պղպջակի վրա» չենք լինի: Որպես Աստծո գավակներ՝ մեր տեղն ապահով է Իր թագավորություն մեջ (Հովհ. 14. 3): Մեր վստահությունն Իրենից է գալիս, որովհետև Հիսուսին ընտրեց որպես «անկյունաքար», որի վրա կառուցված են մեր կյանքերը, և մեզ ընտրեց լինելու «կենդանի քարեր»՝ Աստծո Հոգով լցված Աստծո ժողովուրդը (Ա. Պետ. 2. 5-6):

Քրիստոսով մեր ապագան ապահով է, եթե հավատում ու հետևում ենք Իրեն (Հմ.6): Որովհետև «դուք ընտիր սերունդ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ, որպեսզի նրա՝ առաքինությունները քարոզեք, ով ձեզ խավարից դեպի իր գարմանալի լույսը կանչեց: (Հմ.9):

Հիսուսի աչքում մենք «պղպջակի վրա» չենք, որովհետև մենք «ընտրյալ ու պատվական ենք» (Հմ.4):

**Աղոթք** - Հայր, երբ հուսախաբությունները սպառնում են քայքայել ինքնությունս, ինձ՝ որպես Քո զավակին, հիշեցրո՛ւ, որ հույսս Քեզ վրա դնեմ ու Քեզ վստահեմ: Ամեն:

**Հնարավոր է դու նույնդես անորոշության մեջ ես ու քեզ «պղպջակի վրա» ես զգում, հույսդ դիր միայն Իր վրա ու վստահիր միայն Իրեն:**

Նա նրանց ասաց. «Ինձ Նոոմիմ մի՛ կոչեք, այլ կոչեցե՛ք Ղառնացած, որովհետև Ամենակարողը խիստ ղառնացրեց ինձ: (Յո. 1. 20)

## ԱՍԾՈՒՑ ԿՈՉՎԱԾ

**Ա**մառային հավաքների ժամանակ կամ ընկերական շրջապատում, հիմնվելով մարդկանց բնավորութայան, սովորութայան կամ որևէ դիպվածի վրա, մարդկանց տրվում են մականուններ, ասենք. «Սև խումբ», «Կարգադրիչ հանձնախումբ», «Աղվես», «Թագավոր», «Լպրծուն» և այլն: Այսպիսի ծաղրական անունները, իհարկե, չեն սահմանափակվում միայն ընկերական շրջանակներում: Աստվածաշնչում նույնպես կան նման անվանակոչումներ: Օրինակ, Հիսուսը Հակոբոս ու Հովհաննես առաքյալներին անվանում է «Որոտման որդիներ» (Մարկ. 3. 17): Բայց Աստվածաշնչում շատ քիչ են հանդիպում մարդիկ, որոնք իրենց կանվանեն ծաղրական անուններով: Նոյեմի անունով մի կին մարդկանց խնդրում է իրեն անվանել «Մարա», որը «ղառնություն» է նշանակում (Հո. 1. 20): Նրա ամուսինն ու երկու որդիները մահացել էին, և նա հայտարարեց. «Ամենակարողը խիստ ղառնացրեց ինձ» (Հմ. 20): Նոր անունը չկապվ Նոյեմիին, որովհետև նրա կյանքի պատմությունը միայն այդ կորուստներից չէր բաղկացած: Բազում ցավերի մեջ Աստված Նոյեմիին օրհնել էր Հռութ անունով սիրող հարսով, որն ամուսնացավ և որդի ունեցավ՝ Նոյեմիի համար ստեղծելով ընտանիք: Երբեմն փորձում ենք մեզ տալ մեր կյանքում եղած որևէ դժվարության հետ կապված ծաղրական անուններ. «ձախորդ», «չսիրված», սակայն դրանք պատմության վերջը չեն դեռ: Մենք կարող ենք այդ անունները փոխարինել մեզանից յուրաքանչյուրին Աստծո տված անունով՝ «սիրելի» (Հռոմ. 9. 25) և տեսնել այն միջոցները, որոնցով Նա նույնիսկ մեր կյանքի ամենադժվար պարագաներում մեզ համար հայթայթում է ամեն ինչ:

**Աղոթք** - Երկնավոր Յայր, շնորհակալ եմ, որ չեմ գնահատվել իմ կյանքի հանգամանքներով ու իմ փորձառությանը:

Շնորհակալ եմ, որ ինձ Քո զավակն ես համարում: Ամեն:

**Մարդիկ կարո՞ղ են մեզ ծաղրանուններ տալ: Սակայն Աստված մեզ Իր զավակն է կոչում:**

Ինչ գործ էլ որ անեք, ամեն բան Աստծու փառքի համար արեք:  
(Ա. Կորնթ. 10. 31)

## ԱՊՐԵԼ ՆՊԱՏԱԿԱԴՐՎԱԾ

**Օ**ղանավակայանի ճանապարհին տիկինս մեր երեք տարեկան թոռնիկին՝ Օսթինին ուրախ-ուրախ ասաց. «Մենք արձակուրդ ենք գնում»: Օսթինը նայեց, նայեց ու ասաց. «Ես արձակուրդ չեմ գնում: Ես առաքելության եմ գնում»:

Զգիտեմ՝ մեր թոռնիկը որտեղից էր վերցրել «առաքելության գնալու» միտքը, բայց այն ինձ համար դարձավ խորհելու առիթ: Մտածում եմ, որ մի քանի օր աշխատանքից հանգստանալու նպատակով արձակուրդ գնալով՝ ես էլ յուրաքանչյուր վայրկյանը Աստծո հետ և Աստծո համար ապրելու «առաքելության մեջ» եմ: Իսկ ես արդյո՞ք իմ բոլոր արածներով ծառայում եմ Իրեն:

Պողոս առաքյալը Հռոմեական կայսրության մայրաքաղաք Հռոմի հավատացյալներին քաջալերեց՝ ասելով. «Ձանքի մեջ թույլ չլինե՛ք, հոգով ջերմեռանդ եղե՛ք, Տիրո՛ջը ծառայեցեք» (Հռոմ. 12. 11): Նրա մատնանշած կետն այն էր, որ Քրիստոսով մեր կյանքը պետք է ապրենք ջերմեռանդորեն ու ծրագրված: Նույնիսկ ամենասովորական պահերը նոր իմաստ կտանան, եթե սպասումով նայենք Աստծուն և ապրենք Իր դրած նպատակների համար:

Երբ արդեն օգանավ նստեցինք, ես աղոթեցի. «Տե՛ր, ես Քոնն եմ: Ինչ որ ծրագրել ես իմ այս շրջագայության ժամանակ, խնդրում եմ՝ օգնի՛ր, որ չանտեսեմ»:

Յուրաքանչյուր օր մի առաքելություն է՝ Իր հետ լինելու հավիտենական նշանակությունը:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհք տուր, որ կարողանամ ապրել Քեզ համար, որպեսզի մի օր Քեզանից լսեմ այս խոսքը. «Ապրե՛ս, բարի ու հավատարիմ ծառա»: Ամեն:

**Կյանքի առաքելությունը դարձու և աղոթի՛ր  
Աստծո փառքի համար:**

Այս գործը, որ ես անում եմ, մեծ գործ է, և չեմ հասցնում իջնելու ձեզ մոտ, որպեսզի գործս չընդհատվի. ձեզ մոտ կիջնեմ, երբ ավարտեմ: (Սե. 6. 3)

## **ՄԵԾ ԳՈՐԾ**

**Ա**նվտանգուլթյան աշխատակիցը նկատեց կպչուն ժապավենի կտորը, որ խանգարում էր դուռը փակվելուն: Հետո, ուշադիր նայելով, տեսավ, որ այդպիսի ժապավեն էր դրված նաև դռան լեզվակի վրա: Այդ մասին նա հայտնեց ուստիկանությանը, և ուստիկաններն եկան ու բռնեցին հինգ գողերին:

Վաչինգտոնի Ուոթերգեյթ շենքում գտնվող ԱՄՆ գլխավոր քաղաքական կուսակցության կենտրոնական գրասենյակի երիտասարդ աշխատակիցը, իր գործին մոտենալով ամենայն լրջությամբ, կարողացավ բացահայտել ժամանակի խայտառակ հանցանքներից մեկը: Նէեմիան էլ ամենայն լրջությամբ սկսեց երուսաղեմի շուրջ գտնվող պատի վերակառուցումը: Ծրագրի ավարտին դրացի թշնամիները պատգամ ուղարկեցին՝ մոտակա գյուղերից մեկում հանդիպելու: Իրականում բարեկամական հրավերի ետևում որոգայթ էր թաքնված (Նէ. 6. 1-2): Սակայն Նէեմիայի տված պատասխանը ցույց է տալիս իր համոզմունքի էությունը: Նա ասում է. «Այս գործը, որ ես անում եմ, մեծ գործ է, և չեմ հասցնում իջնելու ձեզ մոտ, որպեսզի գործս չընդհատվի. ձեզ մոտ կիջնեմ, երբ ավարտեմ: (Նէ. 6. 3): Թեև Նէեմիան ուներ որոշակի հեղինակություն, բայց այնքան բարձր չէր դասվում, որքան հերոսները, բանաստեղծները, թագավորները, իմաստունները կամ մարգարեները: Նա ուղղակի մի մատակարար էր, որ կապալառու էր դարձել: Բայց նա հավատաց, որ ինքը կարևոր գործ է անում Աստծո համար: Մենք էլ կարևոր համարենք այն, ինչ մեզ հանձնարարում է Աստված, և այն իր զորությամբ ու նախատեսությամբ լավ կատարենք:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնիր՝ տեսնեմ, որ կարևոր անելիք ունեմ: Տու՛ր ինձ ուժ և իմաստություն, որ կենտրոնանամ ինձ տվածդ գործի վրա: Ամեն:

**Ասված քեզ էլ մեծ գործ է ցվել, որ անես: Ուստի ամենայն լրջությամբ մոտեցի՛ր դրան:**

Թող ուրախանա ծարաված անապատը, թող ցնծա անապատը ու ծաղկի ինչպես շուշանը: (Ես. 35. 1):

## **ՅՈՒՅԱԸ ԾԱՂԿՈՒՄ Է**

**Տ** իլադելֆիայում երբ մոլախոտերով լի լքված հողամասերը մաքրվեցին և տեղում տնկվեցին ծառեր ու ցանվեցին գեղեցիկ ծաղիկներ, բնակիչների առողջութունը էապես բարելավվեց:

Փենսիլվանիայի համալսարանի Փերելման բժշկական ակադեմիայի անդամ, մարդկանց առողջության վրա կանաչ տարածքների ազդեցությունը մասին գրքի համահեղինակ, դոկտոր Յուլիոյա Սաուլթը ասում է. «Ապացուցված է, որ կանաչ տարածքները մտավոր առողջության վրա մեծ ազդեցություն ունեն: Եվ դա հատկապես կարևոր է աղքատ շրջաններում ապրողների համար»:

Իսրայելի և Հուդայի տանջված ժողովուրդը մի նոր հույս գտավ Եսայի մարգարեի տեսիլքում Աստծո կողմից իրենց հիանալիորեն վերափոխելու խոստման մեջ: Եսայու այդ պայծառ խոստումը այսպես արտահայտվեց. «Թող ուրախանա ծարաված անապատը, թող ցնծա անապատը ու ծաղկի ինչպես շուշանը: Թող ծաղկի ու ցնծա Հորդանանի անապատը» (Ես. 35. 1-2):

Ինչ վիճակում էլ լինենք մեր երկրային կյանքում, մենք կարող ենք ուրախանալ, որ մեր երկնավոր Հայրը գեղեցիկ միջոցներով վերափոխելու նոր հույս է տալիս մեզ: Երբ մենք նվաստացած զգանք, Իր փառքի ու մեծության մասին մտածելը մեզ կարող է գորացնել: Եսայի մարգարեն քաջալերելով ասում է. «Ո՛ւժ առեք, լքված ձեռքեր ու տկարացած ծնկներ» (Հմ.3):

Մի քանի ծաղիկ կարո՞ղ են մեր հույսը բոցավառել: Մարգարեն ասաց՝ այո՛: Նույնն է ասում նաև մեր Աստվածը:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ Քո ստեղծագործության մեծության համար, որն ինձ ցույց է տալիս Քո փառքը և վերափոխում է Քո հանդեպ իմ ունեցած հույսը: Ամեն:

**ԱՆհույս վիճակում Աստծո ստեղծած գեղեցիկ բնությունը վերափոխում է մեր հուսահատությունը՝ Իր հանդեպ ունեցած մեր հույսով:**

Հավիտենական սիրով սիրեցի քեզ: (Եր. 31. 3)

### **ՀԱՆԴԻՊԵԼ ՍԻՐՈ**

**Ն**որան շատ փոքր էր զայրացած ու կռվազան, բարձրահասակ Բրիջիդի համեմատ, որն ինքն էլ հստակ չէր կարող բացատրել թե ինչու էր եկել ճգնաժամային հղիության գրասենյակ և ուզում էր վերջ տալ հղիությանը: Նորան մեղմորեն հարցրեց նրան այդ մասին, սակայն նա կոպտորեն պատասխանեց և ոտքի կանգնեց՝ հայտարարելով, որ ինքը վերջնականապես որոշել է վերջ տալ հղիությանը:

Նորան, կանգնելով Բրիջիդի ու դռան միջև, հարցրեց. «Նախքան զնալը կարո՞ղ եմ գրկել քեզ և աղոթել քեզ համար»: Մինչ այդ նրան որևէ մեկը բարի նպատակներով չէր գրկել, և նա հանկարծ սկսեց արտասվել:

Նորան արտացոլում է մեր Աստծո սիրտը, որ «Հավիտենական սիրով» սիրեց իր ժողովրդին (Եր. 31. 3): Աստծո պատվերները խախտելու պատճառով ժողովուրդը ծանր վիճակում էր հայտնվել: Եվ Աստված նրանց ասաց. «Քեզ գթության արժանացրի: Նորից պիտի շենացնեմ քեզ» (Հմ. 3-4):

Բրիջիդի պատմությունը բարդ է, ինչպես մեզանից շատերին: Մինչև իսկական սիրո հանդիպելը՝ նա համոզված էր, որ իրեն կարող են դատապարտել միայն Աստված ու Նրան հետևողները: Բայց Նորան բոլորովին այլ բան ցույց տվեց. ա՛յն Աստծոն, որը չի անտեսում մեր մեղքերը, որովհետև մեզ սիրում է աներևակայելի կերպով: Մեզ ընդունում է բաց թևերով: Եվ մենք կարիք չունենք շարունակ վազել:

**Աղոթք** - Հայր, հաճախ Քո սերը բնական բան եմ համարում: Ների՛ր ինձ և օգնի՛ր, որ այդ սերը ցույց տամ ուրիշներին: Ամեն:

**Դու ինչդե՞ս ես տեսնում Ասծուն: Տեսնում և ընդունու՞մ ես Նրա մնայուն սերը:**

Երեխաներին թույլ տվեք ինձ մոտ գալ և մի՛ արգելեք նրանց, քանի որ Աստուծու արքայությունն այդպիսիներինն է: (Դուկ. 18. 16)

## **ԲԱՎԱՐԱՐ ԶԱՓՈՎ ՄԵԾ**

**Թ**ոռնիկս վազեց «Ուրախ բլուրների» մոտ հավաքված մարդկանց հերթի մոտ և կանգնեց հասակը չափող ցուցատախտակի առջև՝ տեսնելու, թե արդյո՞ք այն բավարարում է կարուսել նստելու համար: Նա ուրախ բացականեց, երբ գլուխը սահմանված գծից բարձր տեսավ:

Մեր կյանքում նույնպես հաճախ է կարևորվում բավարար չափով «մեծ» լինելը: Մեքենայում երեխաների՝ հատուկ սարքից աթոռին անցնելու, ամրագոտին կապելու, ետևի աթոռից առջևիին անցնելու, ավտոմեքենա վարելու քննություն հանձնելու, քվեարկելու, ամուսնանալու համար և այլն: Այնպես որ թոռնիկիս նման մենք էլ կարող ենք մեծանալու մասին երազել:

Նոր Կտակարանի օրերին մանուկները սիրված էին, սակայն բավականաչափ գնահատված չէին, քանի դեռ չէին հասել որոշակի տարիքի: Հիսուսը փշրեց իր օրերի չափանիշները՝ ընդունելով աղքատներին, հիվանդներին, անօթևաններին ու նույնիսկ մանուկներին: Մատթեոսի, Մարկոսի և Դուկասի Ավետարանները պատմում են այն ծնողների մասին, որոնք իրենց երեխաներին բերում են Հիսուսի մոտ, որպեսզի իր ձեռքը դնի նրանց վրա ու աղոթի (Մատթ. 19. 13, Մարկ. 10. 16): Աշակերտները հանդիմանեցին մեծերին՝ այդ արարքը անհարմար համարելով, սակայն Հիսուսը վրդովվեց (Մարկ. 10. 14) և իր թևերը բացեց այդ մանուկների համար: Նրանց արժեքը բարձրացրեց իր թագավորության մեջ և պատվիրեց բոլորին՝ իրեն լավ ճանաչելու և իր թագավորության մեջ տեղ ունենալու համար լինել այդ մանուկների նման (Դուկ. 18. 17):

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր՝ կարողանամ ընդունել, որ Քրկարիքն ունեմ, և Դու ինձ մանկան նման ձգես դեպի Քեզ: Ամեն:

**Մեծ լինելը լավ է: Բայց էականը Տեղ Հիսուսին մանուկների՝ նման մոտենալն է:**

Որպեսզի ձեր հավատի փորձառությունն ավելի պատվական լինի գովության, պատվի ու փառքի համար: (Ա. Պետ. 1. 7)

## **ԿՐԱԿԻ ՄԵՁ ՉՏՎԱԾ**

**Ո**սկու գտման երկու եղանակ կա. Միլլերի մեթոդը, որն ավելի արագ ու մատչելի է, ապահովում է 99, 95 տոկոս մաքրություն մեթոդը ոսկի: Իսկ Վոլվիլի մեթոդը, որն ավելի երկար ժամանակ է պահանջում և ավելի թանկ արժե, ոսկին լինում է 99,99 տոկոս մաքրություն:

Աստվածաշնչի պատմության օրերին կրակն էր օգտագործվում ոսկին գտելու համար: Կրակը ոսկու կեղտերը հանում է մակերեսին, և հեշտ է լինում այն մաքրելը: Փոքր Ասիայում գտնվող հավատացյալներին ուղղված իր առաջին նամակում Պետրոս առաքյալը ոսկու գտումն իբրև օրինակ է օգտագործում՝ ցույց տալու համար, թե փորձություններն ինչ դեր ունեն հավատացյալների կյանքում: Այդ օրերին հռոմեացիները հալածում էին շատ հավատացյալների՝ Քրիստոսի հանդեպ ունեցած հավատի պատճառով: Պետրոսը լավ գիտեր, թե ինչ է նշանակում դա: Եվ նա բացատրեց, որ հալածանքը «մեր հավատի անկեղծությունն է ցույց տալիս» (Ա. Պետ. 1.7):

Գուցե դու էլ հիվանդությունների, դժվարությունների կամ այլ մարտահրավերների պատճառով քեզ զգում ես գտման կրակի մեջ: Բայց նեղությունը առհասարակ այն միջոցն է, որով Աստված գտում է մեր հավատի ոսկին: Մեր ցավի մեջ մենք կարող ենք Աստծուն աղերսել, որ շուտ ավարտվեն մեր դժվարությունները, սակայն՝ Նա գիտե, թե որն է մեզ համար լավագույնը: Կապված մնա՝ Փրկչին՝ խնդրելով իր մխիթարությունն ու խաղաղությունը:

**Աղոթք** - Հայր, օգնիր, որ կարողանամ տեսնել, թե ինչպես եմ իմ կյանքի փորձությունները հայտնաբերում իմ մեջ եղած ոսկին: Ամեն:

**Կյանքում մի՞ս էլ մարտահրավերներ կլինեն, բայց դրանք մեզ զոհում են ոսկու նման:**

Միևնույն մտքի և միևնույն կարծիքի մեջ հաստատուն լինեք  
(Ա. Կորնթ. 1. 10)

## **ԹՇՆԱՄԻՆԵՐ, ԹԵ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ**

**Թ**եքսարկանա քաղաքը Թեքսասի ու Արկանզասի սահմանի վրա է: 70 հազար բնակիչ ունեցող քաղաքը երկու քաղաքապետ ունի, երկու քաղաքապետարան, երկու ոստիկանություն և երկու հրշեջ բաժանմունք: Այդ պատճառով միջնակարգ դպրոցների միջև անցկացված մրցումները չափազանց մարդաշատ են լինում՝ ցուցադրելով նրանց հավատարմությունն իրենց նահանգի դպրոցին: Սակայն դա ամենափոքր անհարմարությունն է: Ավելի էական դժվարություններ են առաջանում համատեղ օգտագործվող ջրային համակարգի և կառավարման տարբեր օրենքների կիրառման պատճառով: Հակառակ այդ ամենին ու առկա բաժանարար գծին՝ քաղաքը զարմանալիորեն միասնական է: Բնակիչները, որպես գաղութ իրենց միասնականությունը հռչակելու համար, ամեն տարի հավաքվում են տարեկան ընթրիքի, որը տեղի է ունենում հենց այդ բաժանարար գծով փողոցում: Կորնթոսի հավատացյալների միջև թեև բաժանարար գիծ չկար, բայց նրանք բաժանված էին: Նրանք վիճում էին Հիսուսի մասին իրենց պատկերացումների շուրջ, իրենց համարում էին «պողոսական», «ապողոսական»...: Պողոսը նրանց կոչ արեց «միևնույն մտքի և միևնույն կարծիքի մեջ հաստատուն լինել» (Ա.Կորնթ. 1.10)՝ հիշեցնելով, որ Քրիստոսը խաչվեց իրենց համար և ոչ առաջնորդներին: Մենք էլ այսօր երբեմն հակառակվում ենք նույնիսկ նրանց, ովքեր ընդունում են, որ Հիսուսը իր կյանքը զոհել է մեր մեղքերի համար: Ինչպես Քրիստոսը բաժանված չէ Ինքն իր մեջ, մենք էլ, որպես Իր երկրային ներկայացուցիչներ, չպետք է տարբերություն դնենք մեզ բաժանող ոչ էական բաների մեջ: Փոխարենը պետք է հռչակենք մեր միասնությունը:

**Աղոթք** - Աստված, օգնիր, որ կենտրոնանամ Քեզ և Քո զոհողության վրա: Թող որ չտարվեն անկարևոր հարցերով, այլ իբրև հավատի հավաքականություն՝ միասնության կոչեմ ուրիշներից: Ամեն:

**Անկարևոր հարցերը մեր դառնակաման դառնառ են դառնում:  
Սակայն փորձենք միասնական դառնալ:**

Եղիան, կինն ու նրա որդիները կերան: (. Թագ. 17. 15)

## ՄԻԱՅՆ ՎՍՏԱՅԻՐ

**Ե**րեք հարյուր մանուկներ նստել էին նախաճաշի, և շնորհակալության աղոթք մատուցվեց ճաշի համար: Բայց ուտելիք չկար: Այդպիսի վիճակները անսովոր չէին մանկատան տնօրեն, միսիոներ Ջորջ Միլլերի համար: Դա ևս մեկ առիթ էր ցույց տալու, թե ինչպես է Աստված Հայթայթելու: Միլլերի աղոթքից մի քանի բոպե անց ներս մտավ մի հացթուփ, որը նախորդ գիշերը չէր կարողացել քնել: Մտածելով, որ մանկատունը հացի կարիք կարող է ունենալ, լրացուցիչ հաց էր թխել: Շատ չանցած՝ քաղաքի կաթնավաճառը եկավ: Հենց մանկատան շենքի մոտ նրա մեքենան խափանվել էր, և որպեսզի կաթը չփչանա, Միլլերին առաջարկեց:

Երբ մեր հիմնական անհրաժեշտությունները՝ ուտելիք, ապաստան, առողջություն, նյութական, բարեկամություն, պակասում են, անվստահությունն ու մտահոգությունը բնական են: Թագ. 17. 8-16-ը հիշեցնում է, որ Աստծո օգնությունը կարող է գալ բոլորովին անսպասելի աղբյուրից, ինչպես կարիքավոր այրիից: «Ես մի նկանակ էլ չունեմ, բացի սափորում եղած մի բուռ ալյուրից և կուժի մեջ եղած մի քիչ յուղից» (Հմ. 12): Կարդում ենք, որ նախապես ազոպներն էին Եղիային ուտելիք բերում (Հմ. 4-6): Մեր կարիքները հոգալու համար ամեն տեսակ միջոցի ենք դիմում: Աստծո՝ որպես Հայթայթողի ու մեր բոլոր կարիքները հոգացողի մասին հստակ տեսիլքը կարող է փրկարար լինել: Լուծում փնտրելուց առաջ նախ Իրեն խնդրենք: Այդ մեկ քայլով մենք կտնտեսենք ժամանակ, եռանդ ու պատրանք:

**Աղոթք** - Հայր, սրի՛ր Քո՝ որպես իմ կարիքները հոգացողի հանդեպ երազս: Ների՛ր ինձ այն ժամանակի համար, երբ փորձել եմ առանց նախ Քեզ որոնելու՝ ապարոյուն կերպով իմ ճամփան գտնել: Ամեն: **Մի՛ս էլ կարիքներ կունենանք, սակայն կարևոր է կենսո՞րոնանալ Աստծո ունեցած նախատեսությունների վրա:**

Որովհետև մենք Աստծու գործակիցներ ենք. դուք Աստծու մշակութունը՝ Աստծու շինվածքն ենք: (Ա. Կորնթ. 3.9)

## **ԱՍԾՈՆ ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑԵԼ**

**1** 962-ին Մեքսիկա իր առաջին այցելության ժամանակ Բիլ Աշը որբանոցում նորոգեց ձեռքի ջրհան հողմաղացները: Տասնհինգ տարի անց, Աստծուն ծառայելու մեծ ցանկությամբ ներշնչված, Բիլը հիմնեց բարեգործական մի կազմակերպություն, որն զբաղվում էր աղքատ գյուղերին մաքուր ջուր մատակարարելով: Նա բացատրում է. «Աստված արթնացրեց ինձ, որպեսզի կարողանամ ժամանակս ավելի լավ օգտագործել, գտնել ուրիշներին ևս և աղքատ շրջաններին մաքուր ջուր հասցնել»: Ապա հազարավոր հովիվների ու միսիոներների խնդրանքների միջոցով իմանալով, որ մաքուր ջրի կարիք ունեն ավելի քան 100 երկրներ, Բիլը ուրիշներին էլ հրավիրեց, որ միանան իր առաքելությանը:

Աստված մեզ հրավիրում է Իրեն և ուրիշներին միանալ տարբեր ձևերով: Երբ Կորնթոսի ժողովուրդը հակառակություններ ուներ իրենց նախասիրած ուսուցիչների պատճառով, Պողոս առաքյալը հաստատեց իր դերը՝ որպես Քրիստոսի ծառա և Ապողոսի գործընկեր և հոգևոր աճի համար ամբողջովին Աստծուն ապավինող (Ա. Կորնթ. 3. 1-7): Նա մեզ հիշեցնում է, թե յուրաքանչյուր գործ ունի աստվածատուր արժեք (Հմ.7): Գնահատելով ուրիշների հետ գործելու առանձնահատկությունը՝ Պողոսը մեզ քաջալերում է միասին գործել, ինչպես որ Ինքն է կերպարանափոխում մեզ Իր սիրով(Հմ. 9):

Թեև մեր հզոր Աստվածը մեր օգնության կարիքը չունի, սակայն Իր մեծ գործերը իրագործելու համար մեզ զինում և հրավիրում է Իր գործընկերը լինել:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ հոգում ես բոլոր կարիքներս՝ շարունակելով մեծ գործեր անել իմ մեջ: Ամեն:

**Երբ արդյունքները թողնենք Աստծուն, հնարավոր կլինի իրագործել նույնիսկ անիրագործելի թվացող բաները:**

Որովհետև դու, Տե՛ր, բարի ու շիտակ ես, գթառատ ես նրանց հանդեպ, ովքեր կանչում են քեզ: (Սաղմ. 85.5)

## **ՊԱՅԾԱՌ ԿԵՏԵՐ ՄՈՒՅԼՈՒԹՅԱՆ ՄԵՃ**

**Ե**ս ու ամուսինս ուսումնասիրում էինք Վայոմինգ նահանգի փոքր ու անծանոթ շրջանները: Հանկարծ մի արևածաղիկ նկատեցի չոր ու ժայռոտ մի վայրում, որտեղ աճում են միայն վայրի եղեսպակ, եղինջ, փուշ և այլ չոր բույսեր: Արևածաղիկը այնքան էլ բարձրահասակ չէր, բայց շատ պայծառ էր:

Այս անակնկալ պայծառ կետը այսպիսի վայրում ինձ հիշեցրեց, որ նույնիսկ հավատացյալի համար երբեմն կյանքը կարող է տխուր ու դատարկ թվալ, խնդիրները՝ անհաղթահարելի և Դավթի նման աղոթքներն էլ՝ ապարդյուն: Դավիթն ասում է. «Մոտեցրո՛ւ, Տե՛ր, ականջը քո և լսի՛ր ինձ, քանզի աղքատ ու տնանկ եմ ես» (Սաղմ. 85.1): Նրա նման մենք էլ ենք կամենում ուրախություն (Հմ.4):

Դավիթը շարունակում է, որ մենք հավատարիմ ծառայում ենք (Հմ. 11) «գլխախրտ ու ողորմած» (Հմ. 15) Աստծուն, որը «գլխառատ է նրանց հանդեպ, ովքեր կանչում են Իրեն (Հմ.5) և «լսում է» (Հմ.7) բոլորին:

Երբեմն մուսյուլթյան մեջ Աստված «արևածաղիկ» է ուղարկում. ոգևորիչ կամ մխիթարիչ մի խոսք, բարեկամից մի կարճ նամակ, կամ էլ մի հատված Իր Խոսքից: Եվ դա դառնում է գեղեցիկ մի արևածագ, որն օգնում է ավելի թեթև ու հույսով առաջ ընթանալ: Նույնիսկ մեր տագնապալի օրերին Աստծո փրկությունն սպասելիս միանանք սաղմոսերգուհի հայտարարությունը. «Մե՛ծ ես դու, Տե՛ր, և հրաշագործություններ ես անում, և միայն դո՛ւ ես Աստված» (Հմ.10):

**Աղոթք** - Սիրո՞ղ Աստված, շնորհակալ եմ, որ կարելից ու շնորհալի Աստված ես: Օգնի՛ր՝ հիշել, թե անցյալում որքան հավատարիմ ես եղել ինձ, պատասխանել ես աղոթքներիս և ապագայում էլ կպատասխանես: Ամեն:

**Մայլ ու Տագնադալի վիճակներում հայցնվելիս Աստված մեր առջև արևածաղիկի նման դայծառ կետեր է դնում:**

Բարին գործելուց չձանձրանանք: (Գաղ. 6. 9)

## **ՅԱՎԱՏԱՐԻՄ` ՄԻՆՉԵՎ ԲԵՐՔԸ**

**Մ**անոթները ցամաքում կազմակերպել էր մի հավաքույթ, որին հրավիրել էր շրջանի մանուկներին: Նա շատ էր խանդավառված, որ կարողանալու է իր հավատի մասին խոսել ուրիշների հետ:

Հրավիրեց իր երեք թոռնիկներին և միջնակարգ դպրոցի երկու աշակերտի, որ օգնեն իրեն: Նրանց հանձնարարեց իրենց պարտականությունները, իսկ ինքը շատ խաղեր նախապատրաստեց, նաև ճաշ, Հիսուսի մասին Աստվածաշնչյան մի պատմություն, և սկսեց սպասել:

Ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ և ո՛չ էլ երրորդ օրը, բացի իր թոռնիկներից ու օգնականներից, որևէ այլ երեխա չեկավ: Սակայն բարեկամուհիս շարունակում էր սպասել ու բոլոր գործողությունները կատարել: Չորրորդ օրը նկատեց այգում զբոսնող մի ընտանիքի և երեխաներին հրավիրեց մասնակցելու խաղերին: Փոքրիկ աղջիկը եկավ, հաճույքով խաղաց, ճաշեց, լսեց Հիսուսի մասին պատմությունը: Թերևս տարիներ անց նա կհիշի այդ օրը: Ո՞վ գիտե, թե ինչ է լինելու արդյունքը: Գաղատացիների գրքի միջոցով Աստված քաջալերում է մեզ. «Բարին գործելուց չձանձրանանք, որովհետև իր ժամանակին կհնձենք, եթե չթուլանանք: Ուրեմն քանի դեռ ժամանակ ունենք, բարի՛ն անենք բոլորին, մանավանդ հավատի ընտանիներին» (6. 9-10):

Մի՛ մտահոգվիր թվերով կամ այլ տեսանելի հաջողության չափանիշներով: Մեր պարտականությունն է մեզանից պահանջված անելիքներում հավատարիմ լինել Աստծուն, իսկ հունձքը թողնել իրեն: Աստված կճշտի արդյունքները:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ Դու ես արդյունքների պատասխանատուն: Դու՛ ես գործի վրա: Օգնի՛ր, որ կարողանամ անել այն, ինչ Դու ես ուզում: Ամեն:

**Լավ ծրագրեր ենք մշակում, բայց լավ արդյունքների չենք հասնում: Արդյունքը վստահե՞նք Աստուծո՞ւ հակառակ մեր հուսախաբություններին:**

Ծովի խորքը պիտի նետի մեր բոլոր անօրենությունները:  
(Միք. 7. 19)

## **ԱՐԳԵԼՎԱԾ ԶԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ**

**Հ** ոլորոստը վերապրած Քորի թեն Բուսը ընդունում էր ներումի կարևորությունը: «Տիրոջ համար թափառաչը ջիկ» խորագրով գրքում նա ասում է, որ իր սիրած մտապատկերը ծովը նետված ու ներված մեղքերն են: «Եթե խոստովանենք մեր մեղքերը, Աստված դրանք օվկիանոսի խորքերը կնետի և դրանք կանհետանան:...Եվ հավատում եմ, որ Աստված այդտեղ մի ցուցանակ է դրել, վրան գրված. «Զկնորսությունն արգելված է»:

Դա հաստատում է մի կարևոր ճշմարտություն, որը Հիսուսին հավատացողները երբեմն դժվարանում են ընդունել. այն, որ երբ Աստված ներում է մեր մեղքերը, մենք ամբողջությամբ ներվում ենք: Կարիք չկա մեր ամոթալի արարքները ավազից հանել՝ տանջվելով դժբախտ ապրումներով: Փոխարենը, ազատորեն իրեն հետևելով, կարող ենք ընդունել իր ներումն ու շնորհքը: «Արգելված ձկնորսություն» միտքը տեսնում ենք նաև Սաղմոս 129-ում: Սաղմոսերգուն հայտարարում է, թե Աստված արդար է, ներում է բոլոր նրանց մեղքերը, ովքեր ապաշխարում են: «Քանզի քեզնից է գալիս քավությունը» (Հմ.4): Սաղմոսերգուն սպասում է Աստծուն՝ Նրան վստահելով (Հմ.5), հավատով հաստատում է, թե «Նա պիտի փրկի Իսրայելյն իր բոլոր նեղություններից» (Հմ.8): Եվ նրանք, ովքեր հավատում են, կգտնեն «բոլոր փրկությունները» (Հմ.7): Ամոթի ու անարժանության զգացումով համակվելով՝ չենք կարողանա մեր ամբողջ սրտով ծառայել Աստծուն: Այլ կասմանափակվենք մեր անցյալով: Եթե քո արած սխալների պատճառով չես կարողանում առաջ դնալ, խնդրի՛ր Աստծուն, որ օգնի հավատալ իր ներման պարգևին ու նոր կյանքին: Նա քո մեղքերը օվկիանոսը կնետի:

**Աղոթք** - Ներո՛ղ Հայր, Քո Որդուն՝ Հիսուսին ուղարկեցիք մեղքերից ու անոթից ինձ փրկելու համար: Օգնի՛ր, որ կարողանամ ապրել լիովին ներված լինելու զգացումով: Ամեն:

**Մի՛ մտածիր, որ Աստված չի կարող քեզ ներել:  
Թույլ տու՛ր, որ իր ներումը ազատագրի քեզ:**

Եթե Տիրոջ ձեռքից բարիքներն ընդունեցինք, չարիքներին չհամբերե՞նք: (Յոթ. 2. 10)

## **ԻՆՉՊԵՄ ԶԱՍԱ ԱՅՍԵՂ**

**Տ**իֆընին արթնացավ կանադական ինքնաթիռի թանձր մթու-  
թյան մեջ: Ինքը աթոռին ամրակապված՝ քնած էր, մինչ մյուս  
ուղևորներն արդեն դուրս էին եկել օդանավից: Ինչու՞ ոչ մեկը  
չի արթնացրել իրեն, ինչպե՞ս է ինքը հասել տեղ: Նա փորձեց  
վերազտնել իրեն և հիշել: Արդյոք դու երբևէ հայտնվե՞լ ես անս-  
պասելի մի իրավիճակում: Մտածո՞ւմ ես, թե դեռ շատ երիտա-  
սարդ ես անբուժելի հիվանդություն ունենալու համար: Քո վեր-  
ջին հարցազրույցը շատ լավն էր, բայց դու ինչու՞ ես կորցնում  
պաշտոնդ: Վայելում էիր երջանիկ ամուսնական կյանք, բայց  
հիմա կարծես միայնակ ես ու մասնավոր գործով ես զբաղված:  
Ինչպե՞ս եմ հասել այստեղ: Հորը նույնպես զարմացած նայեց,  
երբ «նստել էր աղբյուսում» (Հոթ 2. 8): Նա կորցրել էր իր գա-  
վակներին, հարստությունն ու առողջությունը: Եվ չէր հասկա-  
նում, թե այդ ամենը ինչպե՞ս պատահեց իր հետ և ինչպե՞ս ին-  
քը հասավ այդ վիճակին: Միայն գիտեր, որ պետք է հիշի:

Եվ Հորը հիշեց իր ստեղծողին, որն անչափ բարի էր եղել: Եվ  
ասաց կնոջը. «Եթե Տիրոջ ձեռքից բարիքներն ընդունեցինք,  
չարիքներին չհամբերե՞նք» (Հմ. 10): Հորը հիշեց, որ կարող է  
վստահել Աստծո բարությունը, որը միշտ հավատարիմ է լինում:  
Եվ ողբաց, սգաց հույսով և կանչեց երկինքն ի վեր. «Գիտեմ՝  
հավերժական է Նա, ով երկրի վրա պիտի փրկի ինձ: Հարու-  
թյուն տալով մարմնիս, որ այս բոլորը համբերեց, տարավ: Տի-  
րոջ կողմից են հասել բոլորը» (19. 25-26): Հորը կառչեց հույ-  
սին՝ հիշելով, թե պատմությունն ինչպես է սկսվել և ինչպես է  
ավարտվելու:

**Աղոթք** - Զայր, Դու չես զարմանում այն բանով, ինչն ինձ  
համար զարմանալի է: Դու առաջ բարի էիր և հիմա էլ բարի ես  
մնում: Ամեն:

**Ցավ, վիճոս ու նեղություն կունենաս: Սակայն աղբի՛ր հույսով և  
ուրախությամբ:**

Բա՛ց իմ աչքերը, որ տեսնեմ քո օրենքի հրաշալիքները:  
(Սաղմոս 118. 18)

## **ՄՔԱՆՉԵԼԻ ՊԱՐԳԵՎ**

**Ո**ւսուցիչ Դոնելանն աչքի էր ընկնում իր ընթերցասիրու-  
թյամբ, և մի օր նա վայելեց դրա արդյունքը: Երբ նա ճամ-  
փորդուծյան համար կարդում էր ապահովագրության պայ-  
մանները, յոթերորդ էջում հրաշալի անակնկալի հանդիպեց:  
Ապահովագրական ընկերությունը 10 հազար դոլարի մրցա-  
նակ էր սահմանել այն մարդու համար, ով առաջինը կկարդար  
պայմանագրի մինչև այդ էջը: Դոնելանին հազարավոր դոլար-  
ներ էլ նվիրեցին այն բանի համար, որ դպրոցականների մեջ  
սեր էր արթնացրել ընթերցանության հանդես: Նա ասում  
է.«Ես հետաքրքրասեր եմ և միշտ էլ կարդում եմ բոլոր պայ-  
մանագրերի մանրամասները: Ու այս մրցանակն ստանալով՝  
ամենաշատ զարմացողը ես էի»:

Սաղմոսերգուն երազում է, որ իր աչքերը բացվեն, «որ տես-  
նեմ քո օրենքի հրաշալիքները» (Սաղմ.118. 18): Նա գիտեր, որ  
Աստված ուզում է ճանաչվել, և ցանկացավ ավելի մտերմանալ  
Նրա հետ: Նրա փափագն էր ավելի լավ տեսնել, թե ով է Աստ-  
ված, արդեն ինչեր է տվել և ինչպես կարելի է ավելի մոտիկից  
հետևել Նրան (Հմ. 24. 98): Եվ նա գրեց.«Որքա՛ն սիրեցի  
օրենքները քո, նրանք գիշեր-ցերեկ իմ խոհերն էին» (Հմ. 97):

Մենք էլ ունենք Աստծո նկարագրի ու նախասիրություննե-  
րի մասին խորհելու, իր մասին սովորելու, իրեն ավելի մոտե-  
նալու հնարավորություն: Աստված ուզում է մեզ սովորեցնել,  
առաջնորդել, բանալ մեր սրտերը, որպեսզի իմանանք, թե ով է  
Ինքը: Երբ փնտրում ենք իրեն, մեզ պարզևատրում է իր ով  
լինելու մեծ հրաշալիքով ու իր ներկայություն հրճվանքով:

**Աղոթք** - Դայր, որքա՛ն եմ սիրում Քո Խոսքը: Այն իմ քիմքի  
համար քաղցր է, իմ բերանում՝ մեղրից անուշ: Ամեն:

**Երբ բանաս Աստվածաբունչդ ու կարդաս, սիրոյ ու միտքդ  
կբացվեն Ասծո ու Նրա ծամփաների առաջ:**

Աղո ճայեցեք, թե ինչպե՞ս զգուշությամբ վարվեք, ոչ թե անխելքների պես, այլ իմաստունների պես. ժամանակը գնահատեցեք, որովհետև օրերը չար են: (Եփ. 5. 15-16)

### **ՅՈՒԿՎՈՐ ԸՆԹԱՅՔ**

**Մ**եքենա վարելու դասընթացից շատ բան չեմ հիշում: Բայց, չգիտեմ ինչու, մի համառոտագրություն մնացել է հիշողությանս մեջ: Ք Ս Ն Ո Գ տառերը նշանակում են Քննի՛ր, Ստուգի՛ր, Նախատեսի՛ր, Որոշի՛ր և Գործադրի՛ր: Սրանք են այն կարևոր բաները, որ մեզ սովորեցրել են այդ դասընթացի ժամանակ: Այսինքն՝ հարկավոր է ուշադիր քննել, ստուգել ճանապարհի հնարավոր վտանգները, նախատեսել դրանց վնասները, որոշել, թե ինչպես պետք է պատասխանել և հետո, ըստ անհրաժեշտության, ծրագրեր գործադրել: Սա հատուկ ուղեցուցիչություն է կանխամտածված դեպքերից խուսափելու համար: Հարց եմ տալիս, թե ինչպե՞ս կարելի է այս գաղափարը մեր հոգևոր կյանքին կապել: Պողոս առաքյալը Եփեսոսի հավատացյալներին ասաց. «Արդ նայեցե՛ք, թե ինչպե՞ս զգուշությամբ վարվեք, ոչ թե անխելքների պես, այլ իմաստունների պես» (Եփ. 5. 15): Պողոսը գիտեր, որ որոշ հանգամանքներ կարող են շեղել եփեսացիներին իրենց հոգևոր ընթացքից և առաջնորդել հին ապրելակերպին, որը հակառակ էր իրենց նոր՝ Հիսուսով կյանքին (Հմ. 8,10-11): Ուստի նա աճող եկեղեցուն խորհուրդ տվեց ուշադիր լինել: «Զգուշությամբ վարվեք» նշանակում է «տեսնել, թե ինչպես ենք ընթանում»: Այլ խոսքով՝ նկատի առնել վտանգները՝ խուսափել հարբեցողության ու անառակության ծուղակներից (Հմ.18): Առաքյալն ասում է, որ մենք կարող ենք իմանալ Աստծո կամքը մեր կյանքերի համար (Հմ.17)՝ հավատակիցների հետ երգելով ու իրեն շնորհակալություն հայտնելով (Հմ.19-20): Հոգ չէ, թե ինչ դժվարություններ ենք դիմադրավում: Քրիստոսով ապրած մեր նոր կյանքի փորձով մենք կարող ենք աճել՝ վստահելով Իր գործությանն ու շնորհքին:

**Աղոթք** - Երկնավոր Յայր, շնորհակալ եմ, որ ինձ հիշեցնում ես կյանքի ճանապարհին հոգևոր փոսերում նավարկելիս վերև ճայել՝ Քեզ: Ամեն:

**Յոգևոր կյանքում վստահների դիմագրավումը սովորական է: Բայց կարելի է Աստծո սլած խորհուրդներով ազատվել դրանցից:**

Փրկեցե՛ք աղքատին ու տնանկին, մեղավորի ձեռքից փրկեցե՛ք նրանց : (Սաղմ.81.4)

## **ԱԶԱՏԻՐ ՏԿԱՐԻՆ**

**Ո**՞րն ես ընտրում. արձակուրդն անցկացնել Շվեյցարիայում դահուկավազքով զբաղվելով, թե Պրագայի վտանգներից երեսնաներին ազատել: Նիքբլլըս Ուինթըն անունով պարզ մի մարդ երկրորդն ընտրեց: 1938 թվականն էր, և հորիզոնում արդեն երևում էր Չեխոսլովակիայի ու Գերմանիայի միջև անխուսափելի պատերազմը: Նիքբլլըսը Պրագայում այցելեց գաղթականների ճամբար, որտեղ ահավոր պայմաններում ապրում էին հրեաներ: Դրանից հետո սկսեց օգնություն ծրագրել մշակել: Դրամ հավաքեց և հարյուրավոր փոքրիկների այդտեղից տեղափոխեց Բրիտանիա, որպեսզի Երկրորդ Համաշխարհային պատերազմից առաջ անգլիացի ընտանիքները հոգ տանեն նրանց մասին: Այդ մարդու արարքները Սաղմոս 81-ի կոչին ընդառաջելու օրինակներ են: «Տեսե՛ք դատաստանը որբի և այրու, արդա՛ր դատեցե՛ք աղքատին ու խեղճին»(Հմ.3): Այս սաղմոսի հեղինակ Ասափը խրախուսում էր իր ժողովրդին, որ օգնեն կարիքավորներին: «Փրկեցե՛ք աղքատին ու տնանկին, մեղավորի ձեռքից փրկեցե՛ք նրանց» (Հմ. 4):

Նիքբլլըսի փրկած մանուկների նման սաղմոսերգուն էլ խոսում էր նրանց մասին, ովքեր անկարող էին խոսել, չբավոր էին, այրի, մարդիկ, որոնք արդարություն ու պաշտպանություն կարիք ունեին:

Այսօր էլ ուր որ նայում ենք, կարիքավոր, պատերազմներից, աղետներից տուժած մարդկանց ենք տեսնում: Թեև նրանց բռնություն խնդիրները չենք կարողանա լուծել, բայց գոնե աղոթքով նկատի առնենք դժվարությունների մեջ եղող մարդկանց, և Աստված նրանց կղնի մեր կյանքի մեջ:

**Աղոթք** - Սիրող Դայր, բաց աչքերս, որպեսզի կարողանամ տեսնել իմ շուրջը եղող կարիքավորներին: Ամեն:

**Ասված մեզ առիթներ է սալիս կարոսյալներին օգնելու: Այդ առիթները լավագույնս օգտագործեն:**

Ես եմ փնտրելու հոտերս, հավաքելու եմ դրանք այն բոլոր տեղերից, ուր ցրված էին մեզ ու մառախուղի օրը: (Եզ. 34. 12)

## ՄԵՐ ՓՐԿԱՐԱՐ ԱՍՏՎԱԾԸ

**Բ**աց ծովում փրկարարը դիրքավորեց իր նավակը՝ օգնելու համար լողի մրցումներին մասնակցող խուճապահար լողորդներին: «Նավի մեջտեղի մասը մի՛ բռնեք», - ասաց նա՝ մտածելով, որ այդ դեպքում նավը կշրջվի և հորդորեց բռնել նավի առաջամասում գտնվող օղակները:

Երբ կյանքը կամ մարդիկ սպառնան մեզ ներքև քաշել, որպես Հիսուսի հավատացողներ՝ գիտենք, որ փրկարար ունենք: «Այսպես է ասում Տեր Աստված. «Ահա ես ինքս եմ փնտրելու հոտերս, այցելելու եմ դրանց... ես եմ փնտրելու հոտերս, հավաքելու եմ դրանք այն բոլոր տեղերից, ուր ցրված էին մեզ ու մառախուղի օրը» (Եզ. 34. 11-12):

Սա էր Եզեկիել մարգարեի տված երաշխիքը Աստծո ժողովրդին, երբ նրանք աքսորված էին: Նրանց առաջնորդները անտեսեցին ու շահագործեցին՝ կողոպտելով նրանց կյանքը «հովիվներն իրենք իրենց բռնեցին-պարարտացրին և իմ հոտերը չարածացրին» (Հմ.8): Որպես այս արարքների արդյունք՝ «Երկրի երեսով մեկ ցրվել են իմ հոտերը: Եվ ոչ ոք չի փնտրել, ոչ էլ մեկը հետ է դարձրել նրանց» (Հմ. 6): Բայց Տերը հայտարարում է. «Փրկելու եմ հոտերս դրանց ձեռքից. այլևս նրանք կերակուր չեն լինելու դրանց համար» (Հմ. 10) և Նրա խոստումը հաստատ է:

Մե՞նք ինչ ենք անելու: Կառչե՞նք ամենակարող Աստծուն ու իր տված խոստմանը: Աստված ասում է.«Ես ինքս եմ փնտրելու հոտերս, այցելելու եմ դրանց» (Հմ.11): Սա փրկարար խոստում է, որը հարկավոր է ամուր բռնել:

**Աղոթք** - Մեր փրկարար Աստված, երբ կյանքն ինձ խուճապի մատնի, քաջալերի՛ր ինձ, որ ալիքների միջից Քեզ դիմեմ: Ամեն:

**Խուճառային վիճակներ մի՞ս էլ կարող ենք ունենալ: Ազատվելու համար կարևոր է մեր Փրկարար Աստծուն աղափինելը:**

Ավետարանը պտուղ է բերում և աճում (Կող. 1.6)

## **ՎԵՐՋԻՆ ԱԼԻՔՐ**

**Մ**արդիկ սիրում են «ալիք» անել: Աշխարհի առաջնությունների մարզական խաղերի և մրցումների ժամանակ ալիքը սկսվում է, երբ մի քանի հոգի ոտքի են կանգնում և ձեռքները վերև պարզում: Այս գործողության նպատակն է շարունակական շարժում ստեղծել, որը շղթայական զարգացմամբ բռնում է ողջ մարզադաշտը: Ով որ վերջում է միանում, շարժումն սկսողները ժպտում են նրան, ուրախանում և շարունակում նույնը կատարել: Այս գվարճալի «ալիքը» առաջին անգամ տեղի է ունեցել 1981 թ. Օբլանդի Ատլանտիկս և Նյու Յորքի Յանկիս թիմերի միջև տեղի ունեցած բեյսբոլի խաղի ժամանակ: Ես սիրում եմ մասնակցել այդպիսի «ալիքների»: Եվ ինձ թվում է, թե այդ պահին մեր ունեցած ուրախության ու միասնականության փորձը ավետարանի հիշեցումն է, այսինքն՝ Հիսուս Քրիստոսով եղած փրկությունը, որ հույսով ու փառաբանությամբ միավորում է հավատացյալներին:

Այդ «վերջին ալիքը» սկսվեց 2000 տարի առաջ Երուսաղեմում: Պողոս առաքյալը կողոսացիներին ուղղված նամակում նկարագրում է այդ ալիքը. «Ավետարանի ճշմարիտ խոսքը, որ ձեզ հասավ, ինչպես ամբողջ աշխարհին, և պտուղ է բերում, ինչպես ձեր մեջ էլ, այն օրից ի վեր, որ լսեցիք ու Աստուծո շնորհը ճշմարտորեն ճանաչեցիք» (Կող. 1. 5,6): Այս բարի լուրի օրինաչափ արդյունքը «բոլոր սրբերի հանդեպ այն հույսն է, որ ձեզ համար պահվում է երկնքում» (Հմ. 4,5):

Որպես Հիսուսին հավատացողներ՝ մենք էլ պատմության մեծ «ալիքի» մասն ենք: Շարունակե՛նք պահել այն: «Ալիքի» վերջում միացողին կժպտա Նա, ով սկսել է այս շարժումը:

**Աղոթք** - Դայր, փառավորում եմ Քեզ իմ փրկության հիանալի պարգևի համար: Խնդրում եմ՝ ուղարկի՛ր մեկին, ով կարիք ունի Քո բարության մասին լսելու: Ամեն:

**Դիտուսի մասին և լսած բարի լուրը կիսի՛ր և մեերիմների հետ:**

Մեր ընթացքը քննության առնվեց ու հանդիմանվեց. դառնանք դեպի Տերը: (Ողբ Եր. 3. 40):

## **ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

**Վ**երջերս կարդում էի Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին հորս գրած նամակները մորս: Այդ ժամանակ հայրս Աֆրիկայում է եղել, մայրս՝ Արևմտյան Վիրջինիայում: Որպես ամերիկյան բանակի հարյուրապետ՝ հորս պարտականությունն էր ստուգել զինվորների գրած նամակները՝ ռազմական գաղտնիքները թշնամուն չհասնելու նպատակով: Այդ առումով զվարճալի էր տեսնել իր իսկ գրած նակակների վրա դրված կտր կնիքը և մակագրությունը.«Ստուգված է: Հարյուրապետ Ջոն Բրենտոն: Հետաքրքիրն այն էր, որ նույնիսկ իր գրած նամակներից էին որոշ տողեր հանված:

Ինքնաքննությունը իրականում լավ գաղափար է: Աստվածաշնչում նույնպես հեղինակները քանիցս հիշատակում են դրա կարևորությունը: Այսինքն՝ թե ինչն է սխալ ու Աստծուն պատիվ չբերող: Սաղմոսերգուն, օրինակ, աղոթում է. «Քննի՛ր ինձ ու ճանաչի՛ր իմ շավիղները, և տե՛ս, եթե իմ ճանապարհին անօրենություններ կան» (Սաղմ. 138. 23-24): Երեմիան այսպես է գրում.«Մեր ընթացքը քննության առնվեց ու հանդիմանվեց. դառնանք դեպի Տերը» (Ողբ Եր. 3. 40): Պողոսն էլ, հաղորդության ընթացքում մեր սրտի վիճակի մասին խոսելով, ասում է.«Ուրեմն մարդ թող իր անձը փորձի ու հետո այն հացից ուտի և այն բաժակից խմի» (Ա. Կորնթ. 11. 28):

Սուրբ Հոգին կարող է մեզ օգնել, որ կարողանանք ետ դառնալ որևէ արարքից ու մտադրությունից, որոնք Աստծոն հաճելի չեն: Ուստի աշխարհ մտնելուց առաջ կանգ առնենք ու խնդրենք Սուրբ Հոգու օգնությունը, որպեսզի քննենք ինքներս մեզ ու դառնանք Աստծուն, հաղորդակցվենք Իր հետ:

**Աղոթք** - Քննի՛ր ինձ, ով Աստված և իմացի՛ր իմ սիրտը, որպեսզի ավելի լավ ծառայեմ Քեզ: Ամեն:

**Օգտակար ինֆոմացիոնությունը** *ցառ լավ է, որովհետև դրա միջոցով հնարավոր է լինում տեսնել այն, ինչը հարկավոր է փոխել:*



Տերն եկավ, կանգնեց և, ինչպես նախորդ անգամները, կանչեց նրան. «Սամուել, Սամուել»: Սամուելն ասաց. «Խոսի՛ր, Տե՛ր, քո ծառան լսում է»: (Ա. Թագ. 3. 10-11)

## **ԾԱՌԱՆ ԼՍՈՒՄ Է**

**Ե**թե անթեղ կապի միջոցը՝ ռադիոն, միացված լիներ, Տիտանիկի աղետը կկանխվեր: Մեկ ուրիշ նավի ռադիոյի պատասխանատուն՝ Սիրըլ Էվլընսը փորձել էր Տիտանիկի իր գործընկերոջը՝ Ժակ Ֆիլիպսին տեղեկացնել, որ իրենք սառցադաշտի են հանդիպել: Սակայն Ֆիլիպսը, զբաղված լինելով նավի ուղևորներին հրահանգներ տալով, չէր լսել, կոպտորեն ընդհատել էր նրա խոսքը: Եվ Էվլընսը նեղացած անջատել էր ռադիոն: Տասը բոպե անց Տիտանիկը բախվեց սառցաբեկորին, սակայն օգնության նրանց կանչերն անպատասխան մնացին, որովհետև իրենց լսող չկար:

Ա. Թագավորների գրքում կարդում ենք, որ Իսրայելի քահանաները աղավաղվել էին, կորցրել տեսնելու և լսելու հոգևոր կարողությունը, մինչդեռ ազգը վտանգի մեջ էր: «Այդ օրերին Տիրոջ խոսքը հազվագյուտ էր, և տեսիլք չկար» (Ա.Թագ. 3. 1): Բայց Աստված չլքեց Իր ժողովրդին: Նա սկսեց խոսել Սամուել անունով մի պատանու հետ, որը մեծանում էր մի քահանայի ընտանիքում: Սամուելի անունը նշանակում է «Աստված լսում է»՝ որպես հավաստում իր մոր աղոթքին Աստծո տված պատասխանի: Բայց Սամուելը դեռ պետք է սովորեր Աստծոն լսել: «Խոսի՛ր, Տե՛ր, քո ծառան լսում է» (Հմ.11) : Ծառան է լսում:

Թող որ մենք էլ լսենք ու հնազանդվենք այն ամենին, ինչ Աստված է հայտնում Իր Խոսքում: Մեր կյանքերը հանձնենք Իրեն՝ ընդունելով խոնարհ ծառայի կերպարանք: Նրանց նման, ովքեր միշտ բաց են պահում «ռադիոները»:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ խոսող Աստված ես: Շնորհակալ եմ Քո խոսքի համար, որն ինձ օգնում է հնազանդորեն հետևելու Քեզ: Խոսի՛ր, քանզի Քո ծառան լսում է: Ամեն:

**Մեր Ասծո հաղորդակցության միջոցը մի՞տ բաց է:  
Մեզ մնում է դասրաս լինել Իրեն լսելու:**

Եթե մի անդամը ցավում է, բոլոր անդամներն էլ նրա հետ ցավում են: (Ա. Կորնթ. 12. 26)

## **ՉԱՐՉԱՐԿԵԼ ՄԻԱՍԻՆ**

**2**013-ին Բրիտանական արքունիքի վետերան ծովային, 70-ամյա Ջեյմս Մըք Քոնըլը մահացավ: Նա ընտանիք չուներ, ուստի Հանգստյան տան պաշտոնյաները մտածում էին, որ հուղարկավորությանը մարդ չի լինի: Եվ Մըք Քոնըլի հիշատակի արարողության Հանձնառուն ֆեյսբուքում գրեց. «Ցավալի է թողնել այս աշխարհը և չունենալ մեկը, որ կազա մահը: Բայց այս մարդը մեր ընտանիքի անդամն է: Փորձեք գալ ու հարգանքի տուրք մատուցել մեր զինակից եղբայրներից մեկին»: Պատասխանն այն եղավ, որ երկու հարյուր արքունի ծովայիններ եկան եկեղեցի՝ վետերանին հրաժեշտ տալու:

Այս բրիտանացիները ցույց տվեցին «միմյանց հետ կապված լինելու» սուրբգրային ճշմարտությունը: Պողոսն ասում է. «Որովհետև մարմինն էլ մեկ անդամ է, այլ շատ» (Ա. Կորնթ. 12. 14): Մենք իրարից անջատ չենք: Ընդհակառակը՝ Հիսուսով կապված ենք մեկմեկու: Աստվածաշունչը բացահայտում է նույնիսկ, որ դա փոխկապվածություն է, որովհետև «Եթե մի անդամը ցավում է, բոլոր անդամներն էլ նրա հետ ցավում են: (Հմ. 26): Որպես Հիսուսին հավատացողներ ու Աստծո նոր ընտանիքի անդամներ՝ ցավի ու վշտի պահին միմյանց ենք մոտենում՝ վախենալով մենակ մնալ: Եվ մենակ չենք մնում:

Գուցե չարչարանքի ամենադժվար պահն այն է, երբ խավարի մեջ քայլում ենք մենակ: Բայց Աստված ստեղծում է մի նոր հավաքականություն, որը միասին է չարչարվում: Մի նոր հավաքականություն, որի մեջ ոչ մեկը մոլթի մեջ չի մնա:

**Աղոթք** - Հայր, ճիշտ է, որ Դու ինձ դրել ես մի նոր հավաքականության մեջ, որը գիտե ու սիրում է ինձ իմ դժվար պահին:

Օգնիր, որ հավատամ այս ճշմարտությանը: Ամեն:

**Մենակության դաշտին հավասան, որ Ասծո շնորհը, բարությունն ու բարեկամությունը կօգնեն հաղթահարելու այդ զգացումը:**



Նեղությանս մեջ ես Տիրոջը դիմեցի և իմ Աստծուն աղաղակեցի: (Սաղմ. 17. 7)

## **ՇՆՆՁԱՅՈՂ ՍՐԱՅԸ**

**Լ**ոնդոնի Սբ. Պողոս տաճարի աշտարակաձև գմբեթի մեջ 259 աստիճան է պետք բարձրանալ՝ հասնելու համար Շշնջացող սրահ: Այնտեղ դու կարող ես մրմնջալ և շրջանաձև քայլուղու վրա նույնիսկ հարյուր քայլի վրա կանգնած մարդը կարող է լսել քեզ: Ճարտարագետներն այդ երևույթը բացատրում են գմբեթի ձևով ու ձայնի ցածրությամբ:

Որքա՛ն ենք ուզում վստահ լինել, որ մեր Աստվածը լսում է մեզ, մեր տառապագին մրմունջները: Սաղմոսները լի են վկայություններով, որ Աստված լսում է մեր շշուկով և բարձրաձայն ասված աղոթքները: Դավիթը գրում է. «Նեղությանս մեջ ես Տիրոջը դիմեցի և իմ Աստծուն աղաղակեցի» (Սաղմ. 17. 7): Դավիթը և այլ սաղմոսերգուներ նորից ու նորից աղերսում են. «ակա՛նջ դիր իմ աղոթքին (4.2), «ընդունի՛ր ձայնն աղոթքներիս» (5.3): Երբեմն այդ աղոթքը շշուկով է ասվում. «մոտեցրե՛ք ձեր ականջները բերանիս խոսքերին» (77.1), «Գիշերը սրտիս հետ խոսեցի, հառաչելիս տառապում էր հոգիս իմ մեջ (76.7):

Ի պատասխան այս աղերսների՝ Սաղմոսերգուն 17. 7-ում հայտնում է, որ Աստված լսում է. «Նա լսեց ինձ և իմ աղոթքի ձայնն իր սուրբ տաճարից, նրան ուղղված աղաղակս նրա ականջին է հասնելու»: Արդյո՞ք Դավիթն ակնարկում էր, որ Աստված լսում էր իր երկնային բնակարանից, քանի որ տաճարը դեռ կառուցված չէր:

Երկնային տաճարի գմբեթի մեջ գտնվող իր անձնական «շշնջացող սրահից» Աստված թեքվում ու լսում է մեր մրմունջն ու փսփսոցը:

**Աղոթք** - Սիրելի՛ Դայր, ինձ քաջություն տու՛ր, որ շշնջալով դիմեմ քեզ՝ վստահ լինելով, որ Դու լսում ես ու պատասխանում: Ամեն:

**Շենջալով դիմի՛ր Ասծոն ու վստահ եղի՛ր, որ Նա կլսի քեզ:**

Քեզ չեմ մոռանա: (Ես. 49. 15)

## ԱՆՅԻՄՆ ՎԱԽԵՐ

**Ա**նտրամաբանական է թվում, բայց երբ երեք ամսում հայրս ու մայրս մահացան, սկսեցի վախենալ, որ նրանք ինձ մոռանալու են: Այդ անվստահությունը ծնվել էր նրանց բացակայությունից: Ես երիտասարդ էի, ամուլի և չէի պատկերացնում, թե ինչպես եմ առանց ծնողներիս ապրելու: Եվ ես դիմեցի Աստծուն:

Վստահ էի, որ Նա գիտեր իմ մտավախություն մասին, այնուամենայնիվ մի առավոտ աղոթեցի և Նրան հայտնեցի իմ վախերի ու տխրություն մասին: Այդ օրվա իմ խորհրդածությունն Աստվածաշնչյան հատվածը Եսայի 49-ն էր. «Մի՞թե կինը կմոռանա իր մանկանը ..., և եթե կինը մոռանալու էլ լինի այդ, ես, սակայն, քեզ չեմ մոռանա» (Հմ.15): Աստված Եսայի մարգարեի միջոցով հավաստիացրեց իր ժողովրդին, որ նրանց չի մոռացել և խոստացավ այդ սերը վերահաստատել՝ իր Որդի Հիսուսին ուղարկելով: Աստծո այդ խոսքերն իմ սրտի հետ էլ խոսեցին: Հազվագեպ է լինում, որ մայրը կամ հայրը մոռանան իրենց զավակին, բայց պատահում է: Սակայն Աստված՝ երբե՛ք: Որովհետև Նա ասել է. «Ահա իմ ձեռքերի ավերի մեջ գծագրեցի քո պարիսպը, և ամեն ժամ դու իմ առջ ես» (Հմ.16):

Հնարավոր է՝ Աստծո տված պատասխանն ինձ ավելի վախեցրեց, բայց այն, որ Նա անձնապես հիշում էր ինձ, այնպիսի հոգեկան խաղաղություն բերեց, որն այդ պահին ինձ շատ էր պետք: Դա այն գիտակցման սկիզբն էր, որ Նա ավելի մոտ է ինձ, քան ծնողներս կամ որևէ այլ մեկը: Նա գիտե մեզ օգնելու լավագույն միջոցը, նույնիսկ եթե ունենք անհիմն վախեր:

**Աղոթք** - Դայր, իմ զգացումներն ու վախերը կարող եմ ճնշել ու նեղացնել ինձ: Շնորհակալ եմ, որ չես մոռանում ինձ: Ամեն:

**Վախեր, կասկածներ ու արակուսանքներ մի՛ս էլ կարող եմ ունենալ: Կարևորը Աստծո օգնությանը դիմելն է:**

Մեզ համար էլ աղոթք արեք, որ Աստված մեզ խոսքի դուռը բաց անի՝ Քրիստոսի խորհուրդը խոսելու: (Կող. 4.3)

## ԽՈՍԻՐ

**Բ**րիթնին ճաշարանի իր գործընկերոջն ասաց. «Ահա՛, այնտեղ է այն մարդը»: Նա ակնարկում էր Մելվինին, որին մի քանի օր առաջ էր հանդիպել:

Մելվինը եկեղեցու շրջակայքի խոտերն էր կտրատում, երբ Հոգին նրան մոեց խոսակցություն սկսել թեթևաբարո մի կնոջ հետ: Երբ Մելվինը կնոջը հրավիրեց եկեղեցու պաշտամունքին մասնակցելու, նա ասաց. «Դու գիտե՞ս՝ ես ինչով եմ զբաղվում: Նրանք չեն ուզենա ինձ այնտեղ տեսնել»: Մելվինն սկսեց խոսել Հիսուսի սիրո մասին և վստահեցրեց, որ Նա Իր գործընկերոջ կարող է իրեն փոխել: Այդ ժամանակ կինն սկսեց արտասվել: Դրանից մի քանի շաբաթ անց, որպես ապացույց Հիսուսի՝ կյանք փոխող ուժի, Բրիթնին աշխատում է նոր միջավայրում:

Հավատացյալների՝ աղոթքին նվիրվելը քաջալերելու համար Պողոսը երկու մասից բաղկացած խնդրանք է ներկայացրել. «Մեզ համար էլ աղոթք արեք, որ Աստված մեզ խոսքի դուռը բաց անի՝ Քրիստոսի խորհուրդը խոսելու, որի համար էլ կապված եմ, Որպեսզի հայտնեմ նրան, ինչպես արժան է, որ ես խոսեմ» (Կող. 4. 3-4):

Երբևէ առիթ ունեցե՞լ ես աղոթքիդ մեջ Հիսուսի մասին հստակ ու արիաբար խոսելու: Դա հիանալի հնարավորություն է: Նման աղոթքները կարող են Մելվինի նման Հիսուսի հետևորդներին առաջնորդել անսպասելի վայրեր ու անսպասելի մարդկանց հետ Իր մասին խոսելու: Հիսուսի մասին խոսելը կարող է անհանգստություն պատճառել, բայց դրա կյանք փոխող պարզևս դրական հատուցում կլինի այդ անհանգստությունից համար:

**Աղոթք** - Տե՛ր, օգնի՛ր, որ կարողանամ նկատել ինձ ընծեռված առիթները և մտնել Քո բաց դռնից ներս՝ հստակ ու քաջաբար խոսելու Քո մասին: Ամեն:

**Խոսելու և վկայելու առիթներ մի՛ս կլինեն: Աղոթի՛ր Ասծուն, որ քեզ օգնի քայլ կատարել ու Իր վկան դառնալ:**

Մեծ է մեր Տերը, և մեծ է նրա զորությունը, նրա իմաստությունը սահման չունի: (Մաղմ. 146. 5)

## **ԱՍՏՎԱԾ ԶԱՍՎԱՆՈՒՄ Է**

**Ն**որ չրջան տեղափոխվելուց հետո Մեյբըլի յոթ տարեկան որդին՝ Ռայընը, ամառային ճամբարին մասնակցելուն պատրաստվելիս սկսեց տրտնջալ: Մայրը քաջալերեց նրան՝ համաձայնելով, որ, այո՛, կյանքի փոփոխությունները դժվար են: Սակայն մի առավոտ, երբ Ռայընն իր տարիքին ու նկարագրին անհարիր մռայլ էր, Մեյբըլը սիրալիր հարցրեց. «Ի՞նչն է քեզ նեղացնում, որդի՛ս»: Պատուհանից դուրս նայելով՝ Ռայընը դառնորեն ասաց. «Զգիտեմ, մայրիկ: Շատ խառն զգացումներ ունեմ»:

Մեյբըլի սիրտը ցավեց, և փորձեց մխիթարել որդուն: Ասաց, որ իր համար նույնպես դժվար է այս տեղափոխությունը և վստահեցրեց, որ Աստված իրենց հետ է և գիտե ամեն բան: Նույնիսկ այն, ինչի մասին իրենք դեռ տեղյակ չեն: Եվ որդուն առաջարկեց. «Ուսումնական տարին դեռ չսկսած՝ այցելենք ընկերներիդ»: Այդպիսով նրանք շնորհակալ էին լինում Աստծուն, որ Նա լավ է հասկանում իր զավակներին, նույնիսկ երբ նրանք «չատ խառն զգացումներ ունեն»»: 146-րդ սաղմոսի հեղինակը իր հավատքի ճամփորդության ժամանակ այդպիսի դժվարին զգացումներ ունեցավ և անդրադարձավ ստեղծող, պահպանիչ, ֆիզիկական ու հոգևոր վերքեր ամոքող, ամենազետ Աստծուն պաշտելու օգուտներին (Հմ.1-6): Փառավորեց Աստծուն իր տված հոգատարության, «իրենից երկյուղ կրողների և իր ողորմության վրա հույս դնողների» համար (Հմ.11):

Երբ տազնապում ենք մեր անընդհատ փոխվող զգացումներից և փորձում ենք բացատրություն գտնել, պետք է հուսահատվել ու միայնակ զգալ: Կարող ենք հանգիստ ու վստահ զգալ Անփոփոխ Աստծո՛ւ անասման ու անվերապահ սիրո համար:

**Աղոթք** - Ինքնիշխան Աստված, շնորհակալ եմ, որ հասկանում ես ինձ և հոգում ֆիզիկական ու հոգևոր կարիքներս: Ամեն:

**Խառն զգացումներ և հոգեկան սազմադներ մի՛ս էլ կարող եմք ունենալ: Դարկավոր է Ասծոն վստահել:**

Յոգով սկսեցիք ու հիմա մարմնով եք ավարտում: (Գաղ. 3.3)

## ԴԱՐՁՅԱԼ ՁԱԽՈՂՎԱԾ

Հովվական ծառայությունն ժամանակ կիրակնօրյա պաշտամունքի քարոզ պատրաստելու օրերին մի քանի անգամ ինձ անարժան ու նվաստ էի զգում: Մտածում էի, որ նախորդ շաբաթ ես լավագույնն ամուսինը, հայրը կամ բարեկամը չեմ եղել: Խորհում էի՝ որպեսզի Աստված ինձ առաջվա նման գործածի, պետք է հաստատապես ավելի լավ կյանք ապրեի: Եվ ուխտեցի ամեն ինչ անել՝ ավելի լավ քարոզ ներկայացնելու, հաջորդ շաբաթ ավելի ճիշտ ապրելու համար: Բայց դա չէր ճիշտ մոտեցումը: Գաղատացիներին ուղղված նամակի 3-րդ գլխում ասված է, թե Աստված շարունակաբար Իր Հոգին պարզեում է մեզ և գործում է մեր միջոցով՝ որպես ճրի պարզե և ոչ թե նրա համար, որ մենք մի բան ենք արել, կամ մի բանի արժանի ենք: Աբրահամի կյանքը սա է ցույց տալիս: Ինչ-որ ժամանակ նա ձախողվեց որպես ամուսին: Երկու անգամ Սառայի կյանքը վտանգեց՝ իրեն ազատելու համար (Ծննդ. 12. 10-20, 20. 1-18): Եվ այնուամենայնիվ նրա հավատքը «արդարություն համարվեց» (Գաղ. 3.6): Հակառակ իր ձախողումներին՝ Աբրահամն ինքն իրեն դրեց Աստծո ձեռքերի մեջ: Եվ Աստված նրան օգտագործեց՝ իր սերնդի միջոցով աշխարհին փրկելու համար: Որևէ արդարացում չկա վատ վարվելակերպի համար: Հիսուսը մեզ կոչ է արել, որ հնազանդորեն հետևենք Իրեն, իսկ Ինքը կգտնի դա կատարելու միջոցները: Կարծր, ապաշխարումից գուրկ սիրտը միշտ էլ խանգարում է Իր նպատակները իրագործել: Բայց մեզ օգտագործելու Իր կարողությունը կախված չէ՝ բարի գործերի երկար շարանից և բացարձակապես հիմնված չէ մեր միջոցով գործելու Աստծո կամեցողության վրա, այնպես, ինչպես որ կանք՝ փրկված ու շնորհքով աճող:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ, որ օրհնում ես և ինձ օգտագործում հակառակ իմ ձախողումների: Քո շնորհը հիանալի է: Ամեն:

**Երբեմն մեզ որակազրկված ենք զգում: Բայց Ասված այլ կերպ է նայում մեզ:**

Նա է արդարների համար փրկություն վերապահում: (Առ. 2. 7)

## **ՅԻՍԱ՛, ՅԵՏՈ՛, ՅԱԶՈՐԴԸ**

**Վ**երջերս ներկա էի միջնակարգ դպրոցի ավարտական մի հանդեսի, որի ժամանակ հանդիսավարը շրջանավարտների ուշադրությունը հրավիրեց օրվա կարևորություն վրա: «Այսօր ձեր կյանքի այն կարևոր օրերից մեկն է, երբ յուրաքանչյուրդ պետք է հարցնեք. «Ո՞րն է հաջորդ քայլը, ի՞նչ աշխատանք ձեռնարկել հաջորդիվ, ի՞նչ մասնագիտություն ընտրել, որտե՞ղ շարունակել ուսումը»: Ապա նա ասաց, որ ավելի կարևոր հարցն այն է, թե հիմա՛ ինչ են անում: Եվ որ շատ կարևոր է՝ ի՞նչ որոշումներ են ընդունում իրենց հավատի՛ մեջ, որ իրենց առաջնորդեն Հիսուսի՛ և ոչ սոսկ իրենց համար ապրելու: Հանդիսավարի խոսքերն ինձ հիշեցրին Առակների գիրքը, որը ցուցումներ է պարունակում հիմա՛ ապրելու ձևի մասին: Օրինակ. անկեղծություն ցույց տալ հիմա՛ (11. 1), արդար ընկերներին ընտրել հիմա (12.26), ուղղամտությամբ ապրել հիմա՛ (13.6), խոհեմություն ունենալ հիմա՛ (13.15), իմաստությամբ խոսել հիմա՛ (14.3):

Սուրբ Հոգու առաջնորդությամբ հիմա՛ Աստծո համար ապրելը ավելի է դյուրացնում հաջորդ քայլի ընտրությունը: «Տերն է տալիս իմաստությունը, և նրանից են բխում գիտությունն ու հանճարը. նա է արդարների համար փրկություն վերապահում և հովանի լինում նրանց ընթացքին, նա է պահպանում արդարների ճանապարհը և հաստատ դարձնում իրենից երկյուղ կրողների ուղին» (2. 6-8): Թող Աստված մեր կարիքները հոգա, որ կարողանանք իր տված ցուցումներով ապրել հիմա՛ և թող մեզ ուղղորդի հաջորդ քայլի՛ իր փառքի համար:

**Աղոթք** - Երկնավոր Յայր, շնորհակալ եմ իմ կյանքում հիմա՛ Քո տված առաջնորդության համար: Օգնիր և տու՛ր իմաստություն՝ ապրելու այնպիսի ձևով, որը և՛ Քեզ հաճելի կլինի, և՛ հայտնի կդարձնի Քո ով լինելը: Ամեն:

**Ասծուն փառավորելու համար որոշ փոփոխություններ ենք անելու: Սա հնարավոր է Ասծո առաջնորդությամբ ու զորությամբ:**

Բայց հենց ինքներս մեր մահվան վճիռն ունեինք, որպեսզի մենք մեզ վրա հույս չդնենք, այլ Աստուծու վրա, որ մեռելներին հարուբյուն է տալիս: (Բ. Կորնթ. 1.9):

## **ՄԵՐ ԱՂՈԹՔՆԵՐՈՎ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ՍԻՐԵՆՔ**

«Արդյո՞ք մարդիկ դեռ աղոթում են ինձ համար»,-միսիոները ամեն անգամ հարցնում էր կնոջը, երբ վերջինը այցելում էր բանտում գտնվող ամուսնուն: Նրան զրպարտել, մեղադրել ու երկու տարվա բանտարկություն էին դատապարտել իր հավատի համար: Բանտում միսիոների կյանքը վտանգված էր՝ այդտեղի պայմանների ու թշնամության պատճառով, ուստի աշխարհի հավատացյալներն աղոթում էին նրա համար: Նա ուզում էր վատահ լինել, որ այդ աղոթքները չեն դադարելու, քանզի հավատում էր, որ Աստված լսում էր դրանք և օգտագործում: Ուրիշների, հատկապես հավատի պատճառով մեզ հալածողների, համար մեր մատուցած աղոթքները կենսական պարզև են: Այս մասին ասել է Պողոսը Կորնթոսի եկեղեցուն, երբ խոսում էր ճամփորդության ընթացքում դիմազրաված իր նեղությունների մասին: Նա այնքան մեծ ճնշումների էր ենթարկվում, որ կյանքի հույսն էլ էր կտրել(1.8): Բայց հետո ասաց, որ Աստված իրեն ազատել է, և նկարագրեց իր օգտագործած հույսի գործիքը. «Նրա վրա հույս ունենք, որ դեռ կփրկի էլ՝ մեզ համար ձեր արած աղոթքի օգնականությամբ» (Հմ.11):

Մեր աղոթքների միջոցով Աստված շարժվում է, որ մեծ բարիքներ գործի իր ժողովրդի կյանքում: Ուրիշներին սիրելու լավագույն ձևը նրանց համար աղոթելն է, որովհետև մեր աղոթքների միջոցով մենք բացում ենք այն օգնության դուռը, որ միայն Աստված է կարողանում տալ: Երբ աղոթենք ուրիշների համար, իր գործությամբ նրանց նաև կսիրենք: Չկա ավելի մեծ ու սիրող մեկը, քան Ինքն է:

**Աղոթք** - Սիրող ու ամենակարող Աստված, շնորհակալ եմ աղոթքի հիանալի պարզևի և դրա միջոցով Քո արածների համար: Օգնիր, որ հավատարմորեն աղոթեմ ուրիշների համար: Ամեն:

**Շարունակե՛նք աղոթել ուրիշների համար, հասկադես նրանց, ովքեր հալածվում են իրենց հավատի դատաճառով:**

Կապիր դրանք քո մատներին եւ գրիր սրտիդ տախտակի վրայ: (Առ. 7. 3)

## ԴՐՈՇՄՎԱԾ ՄԵՐ ՍՐՏԵՐՈՒՄ

**1** 450-ին Հայտնագործելով տպագրական սարքը՝ Յոհաննես Գուտենբերգը Արեւմուտքի զանգվածային հաղորդակցութեան դարաշրջանում հեղափոխութիւն կատարեց: Դրա շնորհիվ մեծացան սովորելու հնարավորութիւնները, ավելացավ գրագիտութիւնը և նոր մտքեր ծնվեցին կրօնական ու սոցիալական ոլորտներում: Գուտենբերգը հրատարակեց առաջին տպագիր Աստվածաշունչը: Մինչ այդ այն մեծ դժվարութեամբ ձեռագիր էր ընդօրինակվում:

Տպագրութեան գոյուտը դարեր շարունակ ինձ ու քեզ նման մարդկանց տվել է Աստվածաշնչի մատչելիութեան բարեբախտութիւնը: Այժմ արդեն ունենք Աստվածաշնչի օրինակներ, բայց շատերը դեռ պահպանում են այդ հնատիպ գրքերը, որոնք ժամանակին շատ թանկ էին ու հազվագոյուտ:

Աստծո ճշմարտութեանը հասնելու այս կարելիութիւնը հիանալի հնարավորութիւն է: Առականրի գրքի հեղինակը ցույց է տալիս, որ Աստվածաշնչում Իր տված ցուցումները հարկավոր է փայփայել «աչքի բիբի նման» (Առ. 7.2), Իր պատվիրանները՝ «գրել մեր սրտի տախտակի վրա» (Հմ.3):

Փորձելով հասկանալ խոսքը և ապրել դրա համաձայն, մենք էլ դպիրների նման Աստծո ճշմարտութիւնը «մեր մատներից» անցկացնենք մեր սրտերի մեջ, որպեսզի ուր էլ գնանք, տանենք մեզ հետ:

**Աղոթք** - Սիրող Աստված, օգնիր, որ լավ հասկանամ Քո խոսքը, որպեսզի կարողանամ ապրել այնպես, ինչպես Դու ես ուզում: Ամեն:

**Մտիդ մեջ դրոշմիր Աստծո խոսքը, որդեսզի ավելի շատ ստանաս Նրա իմաստութիւնը:**



Սենք բոլորս...կերպարանափոխվում եմք նույն պատկերի նման: (Բ. Կորնթ. 3.18)

## ԻՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԳԵԼ

**Ե**րգչախմբի ղեկավար Արիաննա Աբելյան մանկուկյան տարիներին թաքցնում էր ձեռքերը, որովհետև ի ծնե մատներից մի քանիսը կպած էին իրար: Աղջիկը չունեի նաև ձախ ոտք, և աջ ոտքի որոշ մատներ: Երաժշտության սիրահար, քնարական սուպրանո Աբելյան Մմիթ քոլեջում էր սովորում և երազում էր բարձրագույն կրթություն ստանալ: Բայց մի օր երգչախմբի ուսուցիչը խնդրեց, որ ինքը ղեկավարի խումբը, և դա առիթ դարձավ, որ նա ցուցադրի իր ձեռքերը: Այդ պահից սկսած՝ նա գտավ գործունեություն մի նոր ասպարեզ՝ եկեղեցական երգչախմբեր էր ղեկավարում: Այժմ մեկ այլ համալսարանում է նա երգչախումբ վարում: Արիաննան իր առաջընթացն այսպես է բացատրում. «Ուսուցիչս իմ մեջ ինչ-որ բան տեսավ»:

Այս աղջկա պատմությունը խորհել է տալիս մեզ, թե «Աստված՝ մեր սուրբ ուսուցիչը, ի՞նչ է տեսնում մեր մեջ՝ հակառակ մեր սահմանափակումներին»: Ամեն ինչից առավել նա մեր մեջ իրեն է տեսնում: «Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց» (Ծն. 1. 27): Որպես իր փառավոր «պատկեր կրողներ»՝ մենք պետք է իրեն արտացոլենք: Աբելյայի համար դա նշանակում էր, որ կարևորը Հիսուսն է, ոչ թե իր պակաս մատները կամ խեղված ձեռքերը: Նույնը ճշմարիտ է բոլոր հավատացյալների համար: «Մենք բոլորս, բաց երեսով Տիրոջ փառքն ինչպես հայելու մեջ տեսնելով, նույն պատկերի նման կերպարանափոխվում ենք»,- ասում է Բ.Կորնթ. 3.18-ը: Աբելյայի նման մենք էլ կարող ենք մեր կյանքը ղեկավարել Քրիստոսի փոխակերպող գորությունամբ (Հմ.18)՝ Աստծուն փառաբանող երգ երգելով:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ ստեղծում ես Քո պատկերով: Օգնիր, որ այս իրողությունը կիրառեմ իմ կյանքում: Ամեն:

**Ասծո ղաակերն են կրում: Ուսի իրեն ցույց անվ ուրիների հե մեր հարաբերություններում:**

Քեզ ուղարկեմ եգիպտացիների արքա փարավոնի մոտ, որ իմ ժողովրդին իսրայելացիներին հանես եգիպտացիների երկրից: (Ել. 3. 10)

## **ԿՐԱԿ՝ ԱՆԱՊԱՏՈՒՄ**

**1** 800-ականների վերջերին Ջիհուհուհու անապատում ձիավարելիս Ջիմ Ուայթը նկատեց ծխի տարօրինակ մի ամպ, որը ոլորվելով երկինք էր բարձրանում: Կարծելով, որ հրդեհ է, նախապես զնայեց այդ ուղղությամբ, բայց պարզվեց, որ հեռվից երևացող ծխի տեսքով զանգվածը չղջիկների մի մեծ խումբ է, որ դուրս է եկել ստորգետնյա մի անցքից: Ուայթն առաջին անգամ տեսավ նաև Նյու Մեքսիկայի Քարլսբադ քարանձավների ցանցը:

Մովսեսն էլ, երբ ոչխարներ էր արածեցնում Միջին Արևելքի անապատում, տարօրինակ մի պատկեր դրավեց նրա ուշադրությանը: Դա մի մորենի էր, որն այրվում էր, բայց չէր սպառվում (Ել. 3. 2): Երբ Աստված խոսեց մորենու միջից, Մովսեսը հասկացավ, որ ինքը շատ ավելի մեծ բանի ականատես է, քան երևացողը: Տերը նրան ասաց. «Ես քո հոր Աստվածն եմ, Աբրահամի Աստվածը» (Հմ.6): Աստված դեպի ազատություն էր առաջնորդելու իր գերված ժողովրդին և ցույց տար նրանց իրենց իսկական ինքնությունը՝ որպես իր որդիներ (Հմ.10):

Աստված Աբրահամին այս խոստումն արեց. «Քեզնով պիտի օրհնվեն աշխարհի բոլոր ժողովուրդները» (Ծն. 12.3): Իսրայելի ժողովրդին Եգիպտոսի գերությունից ազատելը այդ օրհնության մեկ քայլն էր: Աստված ծրագրի ունեռ Աբրահամի սերնդից եկող Մեսիայի միջոցով իր ստեղծագործությունը փրկել:

Այսօր մենք կարող ենք վայելել այդ օրհնության պտուղները, որովհետև Աստված այդ փրկությունն առաջարկում է բոլորին: Քրիստոսն եկավ մեռնելու ամբողջ աշխարհի մեղքերի համար: Իրեն հավատալով՝ մենք կարող ենք կենդանի Աստծո որդիները լինել:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ Քեզ հասանելի ես դարձնում հակառակ Քո մեծությանը, սրբությանն ու հզոր գերկայությանը: Ամեն:

**Ասված մեր կյանքում էլ զարմանալի բաներ է կատարում՝ ցույց տալով, որ մենք էլ ենք իր որդիները:**

Աղաչում ենք ձեզ, եղբայրներ, .... երկչոտներին քաջալերեցե՛ք, տկարներին օգնական եղեք: (Ա.Թես. 5. 14)

### **ՔԱՋԱԼԵՐԱՆՔԻ ՕՐ**

**Ա**ղետների ժամանակ առաջին գծում եղողները, կոչին առաջին արձագանքողները նվիրում ու քաջուլթյուն են ցուցաբերում: 2001-ի սեպտեմբերի 11-ին Նյու Յորքի Առևտրի Համաշխարհային կենտրոնի աղետի ժամանակ, երբ հազարավոր մարդիկ սպանվեցին ու վիրավորվեցին, նաև զոհվեցին շտապ օգնություն 400-ից ավելի ծառայողներ: Ի պատիվ աղետին առաջին արձագանքողների՝ ԱՄՆ Սենատը սեպտեմբերի 12-ը սահմանեց Քաջալերություն ազգային օր:

Պողոս առաքյալը մտածել էր, որ քաջալերանքը պետք է նաև եկեղեցու աճի համար: Նա հորդորեց Թեսաղոնիկեի եկեղեցու անդամներին. «երկչոտներին քաջալերեցե՛ք, տկարներին օգնական եղեք, բոլորի հանդեպ համբերատա՛ր եղեք» (Ա. Թես. 5. 14): Թեև նրանք հալածվում էին, բայց Պողոսը քաջալերեց. «ամեն ժամանակ բարո՛ւն հետևեցեք» (Հմ.15): Նա գիտեր, որ այդ մարդիկ հեշտությունը կարող են մատնվել հուսահատություն, կլինեն բախումներ: Բայց նաև գիտեր, որ առանց Աստծո օգնության՝ նրանք չպիտի կարողանան իրար աջակցել, բարձրացնել:

Այսօր էլ նույն պատկերն է: Բոլորս էլ քաջալերանքի կարիք ունենք, նաև կարիք ունենք նույնը անել մեզ շրջապատողների հանդեսպ: Սակայն դա չենք կարող անել միայն մեր ուժերով: Դրա համար էլ Պողոս առաքյալը քաջալերում է՝ ասելով. «Հավատարիմ է նա, ով կանչեց ձեզ, ու կանի էլ» (Հմ.24):

Իր օգնությամբ մենք կարող ենք ամեն օր քաջալերել միմյանց:

**Աղոթք** - Տե՛ր Դիսուս, շնորհակալ եմ ամեն օր Քո տված քաջալերանքի համար: Ցույց տու՛ր ինձ, թե ում եմ քաջալերելու այսօր: Ամեն:

**Մեր շուրջը մի՞տ էլ հուսահատ մարդիկ կարող են լինել:  
Հարկավոր է քաջալերել Մրանց:**

Սի<sup>օ</sup>թե ես իմ եղբոր պահակն եմ: (ԾՆ. 4.9)

## **ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԼՈՂԱԿ**

**Տ**ովային կենսաբանը լողում էր Քուկ կղզու ափամերձ ջրերում, երբ հանկարծ մի հսկայական կետ մոտեցավ ու նրան առավ իր լողակի տակ: Կինը մտածեց, որ իր վերջն եկել է, բայց կետը որոշ ժամանակ ալիքների վրա լողալուց հետո թողեց նրան: Այդ պահին կենսաբանը տեսավ, որ այդտեղից հեռանում է մի վտանգավոր շնածուկ: Եվ հասկացավ, որ փաստորեն կետը պաշտպանում էր իրեն:

Վտանգներով լի աշխարհում բոլորս էլ ուրիշներին հետևելու պարտավորություն ունենք: Բայց կարող է հարց առաջանալ. «Արդյո՞ք պետք է ուրիշների համար պատասխանատու լինել»: Կամ էլ Կայենի բառերով. «Մի՞թե ես իմ եղբոր պահակն եմ» (ԾՆ. 4.9): Հին կտակարանում այդ հարցի պատասխանն է՝ այո: Ինչպես որ Ադամը պետք է հետևեր պարտեզին, այնպես էլ Կայենը՝ իր եղբայր Աբելին: Իսրայելը նույնպես պետք է հոգ տաներ տկարի ու կարոտյալի հանդեպ: Բայց նրանք ճիշտ հակառակն արեցին. շահագործեցին ժողովրդին, ճնշեցին աղքատին՝ մոռանալով իրենց զբաղիներին իրենց անձերի նման սիրելու կոչը (Ես. 3. 14-15):

Կայենի ու Աբելի պատմության մեջ Աստված շարունակեց հսկել Կայենին նույնիսկ երկրից դուրս ուղարկելուց հետո (ԾՆ. 4. 15-16): Այսինքն՝ արեց այն, ինչ պետք է Կայենն աներ Աբելի հանդեպ: Սա մի գեղեցիկ նախաբան էր այն բանի, թե ինչ էր անելու Նա մեզ համար Հիսուսի՝ միջոցով: Հիսուսը մեզ պահում է իր հոգածություն մեջ և զորացնում, որպեսզի նույնը մենք անենք ուրիշների համար:

**Աղոթք** - Սիրո՞ղ Աստված, շնորհակալ եմ Քո տված հոգատարության համար: Պահպանի՛ր ինձ, հսկի՛ր և օգնի՛ր, որ կարողանամ ես էլ ուրիշների հետ նույնկերպ վարվել: Ամեն:

**Ասված ուրիշներին հանձնել է մեր հոգածությանը:  
Պահաս լինենք լավագույնն անել նրանց համար:**

Աստված նրանց հետ կլինի նրանց Աստվածը: Եվ Աստված նրանց աչքերից ամբողջ արտասուքը կսրբի: (Չայտն. 21. 3-4)

### **ՈՂՋՈՒՅՆՆԵՐ ՈՒ ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Ե**րբ եղբայրս՝ Դավիթը, հանկարծամահ եղավ, կյանքի հանդեպ իմ ունեցած տեսակետը հիմնովին փոխվեց: Դավիթը մեր յոթ զավակներից չորրորդն էր և առաջինը, որ բաժանվեց մեզանից: Նրա անակնկալ մահը մտածելու տեղիք տվեց: Դառնորեն հասկացա, որ քանի մեծանում ենք, այնքան մեր ընտանիքներում կորուստներն ավելին են լինում, քան օգուտները: Ավելի շատ «ցտեսություններ» ու «մնաք բարովներ» են լինում, քան «ողջույն»-ն ու «բարով եկար»-ը:

Այս ամենի մասին ես գիտեի, իհարկե, կյանքն է այդպիսին: Բայց երբ անձամբ զգացի այդ հարվածը, այն իմ բանականությունից համար շանթի ներգործություն ունեցավ և ստիպեց նորովի ընկալել կյանքի տված յուրաքանչյուր պահն ու առիթը: Եվ այդ բոլոր խորհուրդները նոր իմաստ ու արժեք հաղորդեցին ապագայի վերամիավորման իրականությունը, որտեղ «ցտեսություն» ասելու կարիք ամենևին չի լինելու:

Այս իրականությունն ենք տեսնում Հայտնություն 21-ում. «Աստված նրանց հետ կլինի նրանց Աստվածը: Եվ Աստված նրանց աչքերից ամբողջ արտասուքը կսրբի. այլևս մահ չի լինի. ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցավ այլևս չի լինի, որովհետև առաջիններն անցան» (Հմ. 3-4):

Այսօր կարող ենք շատերին հրաժեշտ տալ, բայց Քրիստոսի մահվան ու հարությունից խորհուրդը խոստանում է «ողջույն»-ների, «բարով եկար»-ների հավիտենություն:

**Աղոթք** - Չայր, շնորհակալ եմ, որ Դու ես կյանք տվող կենդանի Աստվածը: Աղոթում եմ, որ սգո և կորստյան պահերին մեզ մխիթարելու համար հավիտենականության հույսը օգտագործես: Ամեն:

**Ցավ ու կորուստ մի՞տ է կուներանգ: Բայց Աստված վստահեցնում է, որ հավիտենականության մեջ դարձյալ տեսնելու եմ իրար:**

(Յիսուսը) նրանց գթաց ու նրանց հիվանդներին բժշկեց: (Մատթ. 14.14)

## **ԳԹԱՍՐՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԻ ՅԱՆԴԵՊ**

**Ի**մ բարեկամուհի էլենը հաշվապահական մի ընկերությունում է աշխատում, աշխատավարձերն է գրում: Առաջին հայացքից կարող է շատ դյուրին գործ թվալ, բայց ժամանակ է լինում, երբ աշխատողներն իրենց տվյալները ուշ են ներկայացնում, և նա ստիպված է լինում աշխատանքից հետո մնալ ու լրացնել դրանք: Նա այդպես է անում, որովհետև մտածում է, որ շատերին այդ գումարն անհրաժեշտ է մթերք կամ դեղորայք գնելու կամ էլ տան վարձը վճարելու համար:

Աշխատանքի հանդեպ էլենի գլխարտությունը տեսնում ենք նաև Հիսուսի գործողություններում: Նա ծառայեց մարդկանց, երբ նույնիսկ իրեն անհարմար էր: Հովհաննես Մկրտչի սպանության լուրն առնելով, Նա ուզում էր մենակ մնալ և նախով գնաց ամայի մի տեղ (Մատթ. 14. 13): Ուզում էր միայնակ սգալ ու աղոթել իր ազգականի համար:

Բայց Նրա ետևից գնում էր բազմությունը, որի անդամներից յուրաքանչյուրը մի կարիք ուներ: Իհարկե, հեշտ կլիներ այդ մարդկամց ցրելը, բայց «Հիսուսը դուրս եկավ, շատ ժողովուրդ տեսավ, նրանց գլխաց ու նրանց հիվանդներին բժշկեց» (Հմ.14):

Հիսուսի երկրային առաքելության կարևոր մասը մարդկանց սովորեցնելն ու նրանց հիվանդությունները բուժելն էր, բայց Նրա գլխարտությունը շատ մեծ ազդեցություն ունեցավ իր պարտականությունները կատարելու գործում: Թող Աստված օգնի մեզ, որ տեսնենք իր ունեցած գույքը մեր հանդեպ, և մեզ գործություն տա՝ այն ուրիշներին փոխանցելու համար:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ հոգում ես իմ հոգևոր ու ֆիզիկական կարիքները: Օգնի՛ր, որ իմ շնորհակալությունը դուրս հորդա, որպեսզի այլոց համդեպ հոգատարությամբ փառավորեմ Քո անունը: Ամեն:

**Տերը գթառաս է եղել մեր հանդեպ: Մենք էլ նույնդիպի կարեկցանք ցուցաբերենք ուրիշների նկատմամբ:**



Ամեն մեկը, ինչպես որ սրտում հոժարությամբ կա.... (թող այդպես տա): (Բ Կորնթ. 9.7):

## **ՏՈՒՐ ՔՈ ԱՄԵՆ ՈՒՆԵՑԱԾԸ**

«Աստիճանաբար» արտահայտությունը մարզական ոլորտում գործածվում է որպես մարզիկի հնարավորությունների ավելացման յուրատեսակ ցուցիչ: Օրինակ, եթե սահմանված է ձեռքերին հենվելով՝ մարմինը տասն անգամ բարձրացնել, և դու չորս անգամ ես բարձրացնում, մարզիչի քաջալերանքը կարող է դառնալ այդ աստիճանավորումը, և դու շարունակես կրկնել վարժությունը: Մենք բոլորս նույն կարողություններն ու հնարավորությունները չունենք և չենք կարող ունենալ, բայց բոլորս կարող ենք նույն ուղղությամբ առաջանալ: Այլ կերպ ասած՝ մարզիչը պիտի հորդորի. «Արա՛ քո կարողացած չորս անգամը և մի՛ համեմատի՛ր քեզ ուրիշի հետ: Աստիճանավորի՛ր քո շարժումը, շարունակի՛ր կատարել և կտեսնես, որ ժամանակի ընթացքում արդեն կարողանում ես կատարել յոթ և նույնիսկ տասն անգամ»:

Տալու մասին Պողոս առաքյալի միտքը հստակ է.«Աստված սիրում է հոժարությամբ տվողին» (Բ.Կորնթ. 9.7): Այս քաջալերանքը Կորնթոսի հավատացյալներին ու մեզ աստիճանակալության տարբերակներից մեկն է: «Յուրաքանչյուրը թող տա, ինչպես հոժար է սրտով» (Հմ.7): Մենք մեզ դնում ենք տալու տարբեր աստիճանների վրա, որոնք ժամանակի ընթացքում փոխվում են: Բայց կարևորը առատաձեռնությամբ տալն է (Հմ.6): Մեր Աստվածը խոստացել է, որ ցնծությամբ տալու այս սովորույթը կհարստացնի մեզ օրհնված կյանքով, որը պատճառ կդառնա «Աստծուն գոհություն բերելու» (Հմ.11):

**Աղոթք** - Առատաձեռն Աստված, ուզում եմ ցնծությամբ տվող լինել: Գիտեմ, որ կարևոր է կարգապահությունը: Տու՛ր ինձ իմաստնություն, որ չհամեմատեմ զորությունը առատաձեռնությամբ ցանելու հետ, և հավատք, որ արդյունքները Քո ձեռքերի մեջ դնեմ: Ամեն:

**Ցնծությամբ ու գոհունակ ursorով տու՛ր քո ունեցած լավագույնը  
իր փառքի համար:**

Որովհետև նա (սատանան) ստախոս է և ստության հայրը: (Հովհ. 8.44)

## ՄԻ՛ ԽԱՐՎԻՐ

**Կ**ետավոր լապտերաճանճը մի գեղեցիկ միջատ է՝ արտաքին խատուտիկ ու ներքին բծավոր թևերով, որոնք շողում են, երբ նա թռչում է: Այդ միջատը, սակայն, որ առաջին անգամ հայտնվել է 2014-ին՝ ԱՄՆ-ում, մեծ վնաս է հասցնում շրջակա միջավայրին ու տնտեսությունը: Լապտերաճանճը ուտում է ծառի բնի միջուկը և արտազատում է կաշուն մի նյութ, որը բորբոսանելով սպանում է ծառը կամ տկարացնում:

Ազամի ու Եվայի պատմության մեջ էլ տարբեր սպառնալիքներ կան: Օձը՝ սատանան, խաբում է զուլգին, նրան մղում անհնազանդության և արգելված պտուղը ուտելու, որպեսզի «Աստծո նման լինեն» (Մն. 3. 1-7): Բայց ինչո՞վ էր պայմանավորված սատանային լսելը: Նրա խոսքը առանձնապես հրապուրե՞լ էր Եվային, նա գրավի՞չ էր: Աստծո Խոսքը հաստատում է, որ սատանան գեղեցիկ է եղել (Եզ. 28.12), բայց ենթարկվել է նույն փորձությունը, որով ինքը հրապուրեց Եվային. «Կնամանվեմ Բարձրյալին» (Ես. 14. 14):

Սատանայի գեղեցկությունը գործածվում է հրապուրելու, գայթակղելու համար (Մն.3.1, Հովհ. 8.44. Բ. Կորնթ. 11. 14): Ինչպես որ ինքն է ընկել, նա փորձում է ուրիշներին էլ քաշել ներքև, կամ խանգարել նրանց աճին: Բայց մենք ունենք մեկը, որը շատ ավելի հզոր է ու միշտ մեր կողքին է: Մենք կարող ենք Հիսուսի՝ մեր գեղեցիկ Փրկչի մոտ վազել:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր՝ կարողանամ կշռադատել իմ տեսածն ու Ավետարանի ճշմարտության լույսի ներքո լսածս:

Շնորհակալ եմ, որ խաչի միջոցով հաղթեցիր չարին: Ամեն:

**Մե՛նք կարող ենք հրաղուրվել գրավիչ մարդկանցով ու գաղափարներով: Զգույժ լինենք և Ասծուց օգնություն խնդրենք:**

Պիտի սիրես քո ընկերոջը՝ ինչպես ինքդ քեզ: (Ղև.19.18)

## **ՎԵՐԵԼԱԿՆԵՐ ՆՈՐՈԳԵԼ**

**Ս**առան շատ հազվագյուտ հոգային հիվանդությունն ունի, որի պատճառով անվասայլակով է տեղաշարժվում: Վերջերս ժողովի մասնակցելու համար զնաց կայարան, բայց քանի որ վերելակը խափանված էր, չկարողացավ շենք մտնել: Եվ հուսահատված վերադարձավ տուն: Դժբախտաբար, այսպիսի վիճակներում նա հաճախ էր հայտնվում. խափանված վերելակներն ու անհարմար թեքահարթակները դժվարացնում էին նրա տեղաշարժը և անհնար դարձնում զնացքով երթևեկելը: Հատկապես զնացքի աշխատողների համար Սառան լրացուցիչ բեռ էր դիտվում, որովհետև նա միշտ օգնություն կարիք ուներ: Երբեմն կնոջ անօգնականությունը արտասովելու աստիճանի էր հասնում: Մարդկային հարաբերությունները կարգավորող սուրբգրային բազմաթիվ օրենքներից մեկը «Պիտի սիրես քո ընկերոջը՝ ինչպես ինքդ քեզ» (Ղև.19. 18, Հռոմ. 13. 8-10) բանալին է: Այդ սերը մեզ ետ է պահում սուտ խոսելուց, գողանալուց և ուրիշներին զրպարտելուց (Ղև. 19.11, 14), նաև փոխում է մեր գործելակերպը: Պետք է արդար լինել պաշտոնյաների հետ (հմ. 13) և առատաձեռն աղքատների հանդեպ (հմ.9-10): Սառայի դեպքում խափանված վերելակներ նորոգողներն ու թեքահարթակներ կառուցողները կարևոր ծառայություն են մատուցում ուրիշներին: Եթե մեր աշխատանքը նկատի առնենք սոսկ որպես վարձատրություն ստանալու միջոց կամ անձնական օգուտ, ուրիշներին կդիտարկենք իբրև գլխացավանք: Բայց երբ մեր աշխատանքը դարձնենք ուրիշներին սիրելու առիթ, այդ ժամանակ մեր ամենօրյա պարտականությունը կդառնա սուրբ գործ:

**Աղոթք** - Հայր, որևէ պաշտոն պարզապես գործ չէ, այլ Քեզ սիրելու և ուրիշներին ծառայելու առիթ: Օգնիր՝ կարողանամ իմ աշխատանքը տեսնել որպես այլոց օգտակար լինելու առիթ: Ամեն:

**Ձգտիր աշխատանքի նկատի առնել որդես այլոց օգտակար լինելու առիթ:**



Ականջ մի՛ դիր սուտ լուրերին (Ել. 23.1)

## **ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԲԱՄԲԱՍԱՆՔԸ**

**Չ**արլզ Սիմեոնը անգլիական Քեմբրիջ քաղաքի Սբ. Երրորդ դուլթյուն եկեղեցու հովիվ նշանակվելուց հետո երկար տարիներ ներհակուլթյուններ էր դիմագրավում: Քանի որ եկեղեցու անդամների մեծ մասը ցանկանում էր, որ այդ պաշտոնն ստանձնի հովիվի օգնականը, նրանք սուտ լուրեր տարածեցին և մերժեցին Սիմեոնի ծառայուլթյունները: Նույնիսկ նրան դուրս հանեցին եկեղեցուց և դռները փակեցին: Բայց Սիմեոնը, որ փափագում էր Աստծո Հոգով լցվել, փորձեց հաղթահարել այդ չարախոսուլթյունները՝ որդեգրելով ապրելակերպի մի շարք սկզբունքներ: Դրանցից մեկը բամբասանքներին չհավատալն էր, բացի այն դեպքերից, երբ դրանք իսկապես ճշմարիտ էին: Նրա դավանած մեկ այլ սկզբունքն էր «միշտ հավատալ, որ հարցի մասին բոլորովին այլ կարծիք կլինի, եթե մյուս կողմին էլ լսես»: Այսպես Սիմեոնը հետևեց Աստծո ժողովրդին տված սուտ լուրը և նրանց միջև եղած սերը քանդող չարամիտ խոսակցուլթյունը չտարածելու ցուցումներին: Տասը պատվիրաններից մեկն արտացոլում է ճշմարտուլթյամբ ապրելու Աստծո փափագը. «Քո հարևանի դեմ սուտ վկայուլթյուն մի՛ տուր» (Ել. 20.16): Ելքում տրված մեկ այլ ցուցում էլ ամրապնդում է այս պատվիրանը. «Ականջ մի՛ դիր սուտ լուրերին» (Ել. 23.1):

Աշխարհը որքա՛ն տարբեր կլինի, եթե մեզանից յուրաքանչ-յուրը բնավ սուտ լուր և սուտ տեղեկուլթյուն չտարածի: Եթե դրանք դադարեցնենք հենց լսած պահին: Վստահենք Սուրբ Հոգուն, որ օգնի մեզ, որպեսզի սիրով ճշմարտուլթյունն ասենք և մեր խոսքերը գործածենք Իրեն փառաբանելու համար:

**Աղոթք** - Տե՛ր, օգնի՛ր, որ կարողանամ Քո սիրով ճշմարտությունդ հայտնել: Տու՛ր խոսքեր, որ խաղաղություն, շնորհք ու քաջալերանք են բերում: Ամեն:

**Հակառակորդներ ու հակառակություններ մի՛ս էլ կունենանք, բայց կարևոր են մեր սլած դասասխանն ու մեր ընտրած կեցվածքը:**

Աշխարհում նեղություն կունենաք, բայց քաջացե՛ք. ես հաղթել եմ աշխարհին: (Ռոմի. 16.33)

## **ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՄԵՁ**

**Գ**րեթե տուն էինք հասել, երբ նկատեցի, որ ավտոմեքենայի ջերմակարգավորման ցուցիչը բարձրացավ: Հասանք տուն, հանգրթի մեքենան ու դուրս եկա: Շուտով սկսեց ծուխ դուրս գալ: Երբ մի քանի քայլ ետ հրեցի մեքենան, նկատեցի գետնին թափված յուղը: Ամեն ինչ պարզ էր: Շարժիչի՝ ջուրը յուղից բաժանող ներդիրն էր պայթել: Հոգոց հանեցի, որովհետև հազիվ էինք ավարտել նորոգումների հաշիվները: Ախր ինչու՞ է այսպես, ինչու՞ ամեն ինչ հարթ չի ընթանում, և անընդհատ նորոգումների կարիք է լինում: Բոլորիս են ծանոթ նման դեպքերը: Երբ հազիվ ենք մի հարցը լուծում, մի մուրհակը վճարում, և մի նոր հոգս է ավելանում: Վատն այն է, որ երբեմն այդ հարցերը ավելի լուրջ են լինում, քան ավտոմեքենայի խափանումը: Օրինակ՝ անսպասելի ախտորոշում կամ անժամանակ մահ:

Այդպիսի պահերին մենք փափագում ենք ավելի լավ աշխարհ ունենալ՝ ավելի քիչ խնդիրներով ու նեղություններով: Այդ աշխարհը, որ Հիսուսն է խոստացել, գալու է: Բայց ոչ հիմա: Նա իր աշակերտներին հիշեցրեց. «Աշխարհում նեղություն կունենաք, բայց քաջացե՛ք. ես հաղթել եմ աշխարհին (Հովհ. 16.33): Այդ հատվածում Հիսուսը սովորեցնում է նաև, որ այդպիսի նեղությունները երբեք չեն լինի հույսը իր վրա դնողների համար:

Փոքր կամ մեծ նեղությունները կարող են դժվարացնել մեր կյանքը, սակայն Հիսուսի խոստումը՝ իր հետ ավելի լավ ապագա ունենալու մասին, քաջալերում է մեզ, որպեսզի թույլ չտանք, որ նեղությունները սահմանափակեն մեր կյանքը:

**Աղոթք** - Հայր, երբ մենք նեղության մեջ ենք, Դու ավելի մոտ ես մեզ: Խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ Քեզանից կառչեմ: Հոգ չէ, թե ինչ կլինի իմ վիճակը, որովհետև Դու մեզ հետ ես: Ամեն:

**Նեղություններ ու առադանքներ մի՛ս էլ կլինեն: Սակայն քաջալերվե՛նք, որովհետև Ինձը հաղթել է աշխարհին:**



Խոնքը քարոզիր շարունակ ժամանակին լինի թե ժամանակից դուրս: (Բ. Տիմ. 4.2):

## ՎՏԱՆԳՎՈՐ ՇՐՋԱԴԱՐՁ

**Ա**պահովագրական ընկերություն գործակալը պնդում էր, որ դարձյալ հանդիպեն, իսկ Հարլին դա ժամանակի գուր վատնում էր համարում: Նա գիտեր, որ նոր պայմանագրի համաձայնեցման տաղտկալի պահ է լինելու, և որոշեց այն լավագույնս օգտագործել և խոսել իր հավատի մասին: Նկատելով, որ գործակալի ունեքերը դաջված էին, նա շփոթված հարցրեց պատճառը: Պարզվեց՝ կինը այդ քայլին էր դիմել հաջողության ակնկալիքով, որ բախտը բերի: Սովորաբար նման հանդիպումների ժամանակ խոսակցությունները լինում էին նյութականի մասին, և Հարլիի հարցը այդ առումով վտանգավոր շրջադարձ էր: Բայց այն հավատի ու բախտի մասին զրույցի մի դուռ բացեց նրա առջև: Դա նաև առիթ տվեց, որ ինքը ասի, թե ինչու է ապավինում Տիրոջը: Եվ այդ ժամանակը, որ «կորցրած» էր համարում, դարձավ երկնային մի ժամադրություն: Հիսուսն էլ վտանգավոր մի շրջանցում կատարեց: Երբ նա Հրեաստանից ճամփորդում էր դեպի Գալիլեա, ճանապարհը շեղեց, որպեսզի խոսի մի սամարացու հետ: Դա աներևակայելի բան էր որևէ հրեայի համար: Բայց նա ունեցավ այդ խոսակցությունը, որը շատերի փրկության պատճառ դարձավ (Հովհ. 4.1-26, 39-42): Արդյո՞ք դու հանդիպելու ես մեկի հետ, ում չես ուզում տեսնել: Շարունակ դիմա՞ցդ է ելնում դրացիներից մեկը, որին չես ուզում տեսնել: Աստվածաշունչը հիշեցնում է, որ մենք միշտ պետք է պատրաստ լինենք «ժամանակին, թե ժամանակից դուրս» բարի լուրը ուրիշներին հայտնելու համար (Բ.Տիմ. 4.2): Նկատի առ «վտանգավոր շրջադարձ» կատարելու հանգամանքը: Ո՞վ գիտե, գուցե Աստված քեզ երկնային առիթ է տալիս այսօր մեկի հետ խոսելու Իր մասին:

**Աղոթք** - Տե՛ր Դիսուս, ինձ սովորեցրո՛ւ տեսնել Քո բացած դռները, որպեսզի Քո սերը կիսեմ այլոց հետ, և տու՛ր քաջություն, որ կարողանամ ուրիշների հետ խոսել Քո մասին: Ամեն:

**Դու էլ այսօր կարող ես հանդիպել մի անծանոթի: Պատրաստ եղիր «քաջանցում» անելու և խոսելու Տիրոջ մասին:**

Քո նարդկանց հավաքի՞ր ինձ մոտ, որ նրանք լսեն իմ այն պատգամները, որ սովորեցնելու են նրանց, որպեսզի, այնքան ժամանակ որ ապրեն նրանք երկրի վրա, թող երկնչեն ինձանից: (Բ. Օր. 4. 10)

## **ԱՍՏԾՈՎ ՀՅՈՒՄՎԱԾ ՀԻՇԱՏԱԿՆԵՐ**

**Ե**րբ որդիս մի դժվարություն էր հաղթահարում, նրան հիշեցրի Աստծո կայուն հոգատարություն մասին, որ զգացել էի զործագրվածության տարիներին: Հիշեցի այն տարիները, երբ Աստված զորացրեց մեր ընտանիքը և մեզ խաղաղություն տվեց այն դաժան պահերին, երբ մայրս ապարդյուն պայքարում էր լեյկեմիայի դեմ: Ընդգծելով Աստծո հավատարմության պատմությունները, որոնք հյուսված են Աստվածաշնչի էջերում, հաստատեցի, որ Նա հավատարիմ է Իր խոստումները կատարելիս: Որդուս առաջնորդեցի Աստծով հյուսված մեր ընտանիքի հիշատակի արահետներով, հիշեցրի, որ Նա հավատարիմ է մնացել մեր կյանքի և՛ հաջողությունների, և՛ ձախորդությունների ժամանակ: Մեր պայքարում Աստծո ներկայությունը, սերն ու շնորհքը բավարար էր եղել: Թեև հավատք զորացնող այս փորձառությունը իմ անձնականն է, բայց Աստված նաև ներշնչեց այն կիսել ուրիշների հետ՝ ապագա սերունդների հավատը Իր հանդեպ զորացնելու նպատակով: Իսրայելացիներն էլ են հիշում անցյալում Աստծո արածներն իրենց համար, երբ Նա վստահության քարեր դրեց Աստծով հյուսված հիշատակի արահետներում: Իսրայելցիներն ականատես էին եղել, որ Աստված հավատարիմ է Իր խոստումներին (Բ. Օր. 4. 3-6): Նա միշտ լսել ու պատասխանել է նրանց աղոթքներին (Հմ. 7): Ուրախանալով ու հիշելով նաև երիտասարդ սերունդներին (Հմ. 9)՝ իսրայելցիները միակ ճամբարիտ Աստծո միջոցով սուրբ խոսքերը հայտնեցին ուրիշներին (Հմ. 10): Մեր համոզմունքներն ու հավատքը կարող են զորանալ՝ Իր կայուն հավատարմությանը մշտապես վստահելով:

**Աղոթք** - Տեր Աստված, շնորհակալ եմ, որ փառաբանությամբ լի հիշատակի արահետներ ես հյուսում և ինձ զորացնում, որպեսզի կարողանամ քայլել հավատի վստահ քայլերով, որոնք անցնում են սերունդների արահետներով: Ամեն:

**Ասված մեզ orհնություններ է սվել, ուսի կարելի է դրանցով կիսվել:**



Բայց դու, Տեր Աստված մեր, որ գթած ես և ողորմած, համբերատար և բազումողորմ, իսպառ չլքեցիր նրանց: (ՆԷ. 9.17)

## **ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՆԻ ՇԱՏ ՄԵՂՎՎՈՐ**

**Հ**ամալսարանում ուսանելիս մի անգամ անգլերենի իմ դասախոսն ասաց. «Երբ ես Աստվածաշնչի եմ ղիպչում, ձեռքերս այրվում են»: Այդ օրվա մեր կարգացած վեպում սուրբբարային մի հատված էր մատնանշված: Երբ ես վերցրի Աստվածաշունչը, որ նայեմ, նա նկատեց և այդպես արձագանքեց: Դասախոսն այդպես էր մտածում, որովհետև կարծում էր, որ ինքն այնքան մեղավոր է, որ ներում չի ունենա: Ես չհամարձակվեցի իրեն ասել Աստծո սիրո և այն մասին, թե Աստվածաշունչն ասում է, որ մենք միշտ կարող ենք Աստծո ներումը հայցել:

Նէմիայի գրքում ապաշխարության և ներումի մի օրինակ կա: Իսրայելցիներն իրենց մեղքի համար աքսորված էին, բայց նրանց թույլ տրվեց Երուսաղեմ վերադառնալ: Եվ երբ նրանք վերադարձան ու հաստատվեցին, Եզրաս դպիրը կարգաց օրենքի գիրքը (Նէ. 7.73, 8.3): Նրանք խոստովանեցին մեղքերը և հիշեցին, որ հակառակ իրենց գործած մեղքերի՝ Աստված իրենց չլքեց (Հմ. 17. 19): Այլ լսեց, երբ աղաղակեցին և կարեկից, գթառատ ու համբերատար եղավ (Հմ. 27-31):

Այդպես էլ Աստված մեր հանդեպ է համբերատար: Նա մեզ չի լքի, եթե որոշենք մեր մեղքերը խոստովանել ու դառնալ դեպի Աստված: Ուզում էի գնալ ու իմ դասախոսին ասել, որ հոգ չէ իր անցյալը, Հիսուսը սիրում է իրեն և ուզում է, որ նա իր ընտանիքի անդամը դառնա: Մենք էլ կարող ենք ներում խնդրելով իրեն մոտենալ, և Նա կշնորհի:

**Աղոթք** - Սիրելի Հայր, շնորհակալ եմ, որ մեղքերս ներում ու վստահեցնում ես, որ ոչ մեկն այնքան մեղքեր չունի, որ անմեղելի լինի: Ամեն:

**Հիսուսն եկավ մեղավորների համար և ոչ արդարների (Մարկ. 2. 17): Ուսի վստահ լինենք, որ Նա մեզ կմաքի բոլոր մեղքերից:**

Ինձ իբրև կնիք դի՛ր քո սրտի վրա, իբրև մատանի դի՛ր քո աջ ձեռքին: (Երգ երգոց 8.6)

## **ՍԻՐՈ ԿՈՂՊԵՔՆԵՐ**

Հիացած նայում էի Փարիզի Պոնտ դը Արտ կամրջի վանդակաճաղերին կախված հազարավոր կողպեքներին, որոնց վրա փորագրված են սիրահարների անվանատառերը: Սեն գետի վրա կառուցված հետիոտն կամուրջը ամբողջովին պատված է զուլգերի սիրո խոստովանությունների այդ խորհրդանիշներով: 2014-ին այդ սիրո կողպեքները մոտ 50 տոննա էին կշռում և նույնիսկ պատճառ դարձան կամրջի մասնակի փլուզման: Անհրաժեշտություն առաջացավ դրանք հեռացնել:

Սիրո այդ կողպեքների առկայությունը ցույց է տալիս մարդ արարածներին՝ երաշխավորություն ունենալու ցանկությունը: Երգ երգոցը պատկերում է երկու սիրահարների խոսակցությունը: Կինը, հայտնելով իր սիրո մասին, իր սիրած էակին խնդրում է. «Ինձ իբրև կնիք դի՛ր քո սրտի վրա, իբրև մատանի դի՛ր քո աջ ձեռքին» (Երգ եր. 8.6): Դրանով նա ուզում է ապահով լինել իր սիրո մեջ ու պաշտպանված:

Երգ երգոցում ներկայացված մնայուն ու ռոմանտիկ սիրո ցանկությունը հիշեցնում է Նոր Կտակարանի՝ եփեսոսացիների գրքի ճշմարտությունը, թե մենք «Աստծո Սուրբ Հոգով ենք կնքվել» (1.13): Եթե մարդկային սերը կարող է սահմանափակ ու ժամանակավոր լինել, և կողպեքները հնարավոր է հանել, ապա մեր մեջ բնակվող Քրիստոսի Հոգին մնայուն մի կնիք է, որը պատկերում է Աստծո անվախճան ու նվիրական սերը Իր յուրաքանչյուր գավակի հանդեպ:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, թեև մարդկային սիրո ապահովությունը հաճախ խուսափողական է մնում, շնորհակալ եմ, որ Քո սերն իմ հանդեպ զորավոր, անսասան ու հավիտենական է: Ամեն:

**Հոր սերը աղահով ու մնայուն է, թող Նրա սերը մեզ առաջնորդի ու փառալերի:**

Եվ այսպես համբերատար լինելով՝ հասավ խոստումին: (Եբ. 6.15)

## ԽՈՍՏՈՒՄԸ ՊԱՅՈՂԸ

**Ջ**ոնաթանը, երբ ամուսնական երգում էր տալիս Լաշոնին, ճնշված էր իր խոստումների ծանրությունը: Նա մտածում էր. «Ինչպե՞ս կարող եմ այդ խոստումները կատարել՝ չհավատալով, որ դրանք անհրաժեշտ է պահել»: Արարողությունը նա կարողացավ դիմանալ, բայց այդ ծանրության զգացումը մնաց: Հյուսիսսիրուցից հետո Ջոնաթանն իր կնոջը առաջնորդեց դեպի պաշտամունքի վայր և երկու ժամից ավելի աղոթեց: Նա խնդրում էր Աստծո օգնությունը, որպեսզի կարողանա պահել իր խոստումները. սիրել և հոգատար լինել Լաշոնի հանդեպ: Ջոնաթանի ամուսնություն օրվա տազնապները կապված էին մարդկային փոփոխամտության հետ: Իսկ Աստված, որ խոստացավ Իր ազգը պահել Աբրահամի որդով (Ծնն. 3.16), նման սահմանափակումներ չունի: Եբրայեցիների գրքի հեղինակը մարտահրավեր է նետում իր հրեա քրիստոնյա ունկնդիրներին, որ հարատևելով ու համբերությամբ շարունակեն Հիսուսի հանդեպ իրենց ունեցած հավատը, և հիշում է Աստծո խոստումը Աբրահամին: Նրա համբերությամբ սպասելն ու տված խոստմանը հավատարիմ լինելը (Եբ. 6. 13-15) արգելք չէր Աստծո տված «չատ զավակներ ունենալու» (Հմ. 14) խոստմանը: Հակառակ քո տկարության, դյուրաբեկ մարդ լինելուն՝ Աստծոն վստահելու հարցում կասկածն<sup>ը</sup> ունես: Տազնապու<sup>մ</sup> ես, որ չես կարողանա խոստումներդ պահել: Բ. Կորնթ. 12. 9-ում Աստված խոստանում է մեզ օգնել. «Քեզ իմ շնորհը բավական է, որովհետև իմ զորությունը տկարության մեջ է իրագործվում»: Ավելի քան 36 տարի Աստված օգնել է Ջոնաթանին ու Լաշոնին, որպեսզի իրենց ուխտին հավատարիմ մնան: Ինչո՞ւ չվստահել Նրան, որ օգնի մեզ:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ միշտ հավատարիմ ես Քո նվիրումի մեջ: Օգնի՛ր, որ հավատարիմ լինեմ Քեզ և ուրիշների հանդեպ իմ նվիրումին: Ամեն:

**Դյուրին չէ Ասծո՝ մեզ օգնելու խոստմանը հավասալ, բայց հարկադր է վերադառնալ ու հանձնվել մեզ ստեղծողին ու կասարողին:**

Ինձ հետ ուրախացե՛ք, որովհետև իմ կորած ոչխարը գտա: (Պուկ. 15. 6)

## **ԹԱՓԱՌԵԼ**

**Ե**րգիծաբան Մայքլ Յակոնելին, ապրելով անասնաբուծաբանների մոտ, նկատել էր, որ կովերը հակում ունեն թափառելու, երբ նրանց բաց են թողնում արածելու: Կովը անընդհատ տեղաշարժվում է՝ փնտրելով «ավելի կանաչ մարգագետին»: Նա կարող է կանաչ ու թարմ խոտ գտնել դաշտի եզրին, ծառի ստվերում, կամ մի համեղ սաղարթ՝ ցանկապատի ետևում: Եվ այսպես արածելով գնում, հեռանում է ու կորչում: Միայն կովերը չեն այգախոսին, ոչխարներն էլ են կորչում: Շատ հավանական է, որ մարդիկ նույնպես կորչեն:

Թերևս այս պատճառով է, որ Աստված մեզ նմանեցնում է ոչխարների: Շատ հեշտ է անխոհեմ վարմունքի ու որոշումների պատճառով մոլորվել, կորչել ու չնկատել, թե որքան ես հեռացել ճամարտությունից:

Հիսուսը փարիսեցիներին պատմեց կորած ոչխարի պատմությունը: Մեկ կորած ոչխարն այնքան կարևոր ու արժեքավոր էր հովվի համար, որ նա թողեց մյուս ոչխարներին ու գնաց այդ մեկին որոնելու: Ու երբ գտավ, ուրախացավ (Ղուկ.15.1-7):

Ճիշտ նույնկերպ է Աստծո ուրախությունը դեպի Իրեն դարձողի հանդեպ: Հիսուսն ասում է. «Ինձ հետ ուրախացե՛ք, որովհետև իմ կորած ոչխարը գտա» (Հմ.6): Աստված մեզ փրկելու և տուն վերադարձնելու համար Փրկչին է ուղարկել:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, կորսված ու մոլորված եմ զգում ինձ: Ուղղի՛ր սիրտս և ցույց տուր տուն վերադարձնող ճանապարհը: Ամեն:

**Քոլորս էլ կարող եմ մոլորվել ու կորչել: Դառնանք դեղի Տերը , որը կգա մեզ ազատելու:**

Աչքը տեսնելով չի հազեցնում: (Ժող. 1.8)

## **ԵՐԲԵՔ ՉԲԱՎԱՐԱՐՎԵԼ**

**Տ**րենկ Բորմանը առաջնորդեց լուսնի շուրջ առաջին պտույտային թռիչքը: Տպավորություններն այնքան էլ գոհացուցիչ չէին: Ճամփորդությունը երկու օր տևեց՝ գնալ ու վերադառնալ: Սկզբում նա ֆիզիկական անհանգստություն զգաց, փսխեց: Հետո զգաց, որ անկշռությունը հաճելի էր, որին շուտով վարժվեց: Նա մոտիկից տեսավ Լուսնի սև մակերևույթը՝ լի խառն ու բազմատեսակ թասիկներով: Տիեզերանավի անձնակազմը շատ լուսանկարներ արեց մոխրագույն անապատում, բայց շուտով նրանք էլ սկսեցին ձանձրանալ: Ֆրենկը գնացել էր մի տեղ, որտեղ ոչ մեկը գեռ չէր եղել: Այդուամենայնիվ, նա բավարարության զգացում չուներ: Եթե նա հոգնեց նույնիսկ մի բանից, որն այս աշխարհից չէր, ուրեմն մենք էլ կարող ենք պակասեցնել մեր ակնկալիքներն այս աշխարհից: Ժողովողի գրքի հեղինակը նկատում է, որ երկրային ոչ մի փորձառություն չի կարող մեզ գերագույն ուրախություն պատճառել: «Աչքը տեսնելով չի հագեցնում, և ականջը լսելով չի լցվում» (1.8): Մենք կարող ենք ունենալ ոգևորության ու սքանչացումի պահեր, սակայն շուտով դրանք անցնում են, և մենք փորձում ենք ուրիշ բաներ տեսնել ու լսել: Ֆրենկը ներշնչման ընդամենը մեկ պահ ունեցավ, երբ տեսավ, որ Լուսնի ետևում գտնվող խավարից բարձրանում է Երկիր մոլորակը: Կապույտ ու ճերմակ մարմարյա գունդը՝ մեր մոլորակը, շողաց արևի լույսի ներքո: Այդպես էլ մեր լավագույն ուրախությունը գալիս է մեր վրա շողացող Որդու միջոցով: Հիսուսը մեր կյանքն է և իմաստի, սիրո ու գեղեցկության միակ գերագույն աղբյուրը: Մեր խորագույն գոհացումը գալիս է այս աշխարհից: Իսկ մեր հարցն՝ որ. մինչև և լուսին էլ կարող ենք հասնել ու դարձյալ բավարարված չլինել:

**Աղոթք** - Տե՛ր Դիսուս, Քո սիրո լույսը շողացրու՝ ինձ վրա: Ամեն:

**Մեր գերագույն հրժվանքն ու ուրախությունը Տե՛ր Դիսուսի մեջ է, ուրիշ ոչ մեկի:**

Բա՛ց իմ աչքերը, որ տեսնեմ քո օրեցօրի հրաշալիքները: (Մաղմ. 118. 18)

## **ՏԵՍՆԵԼՈՒ ԱՉՔԵՐ**

**Վ**երջերս առիթ ունեցա ինձ համար հայտնաբերել այլակերպու-  
թյան արվեստի հմայքը: Որևէ պատկեր կամ քանդակ բոլորո-  
վին այլ իմաստ է ձեռք բերում, երբ դրան նայում ես մեկ այլ անկ-  
յունից: Օրինակ, կտավի վրա մի պատկեր է, բայց երբ դրան նայում  
ես այլ դիտանկյունից կամ այլ լույսի ներքո, հայտնի առաջնորդի  
պատկերն է երևում: Կամ պողպատյա պարանների հավաքածուն  
կարող է դառնալ փղի ուրվագիծ: Մեկ այլ աշխատանքում մետաղ-  
յա թելի վրա կախված սև կետերը դառնում են կնոջ աչքեր, երբ  
դրանց նայում ես դիմացից: Այսինքն՝ գաղտնիքը պատկերին տար-  
բեր անկյուններից նայելու մեջ է: Պատմություն, բանաստեղծու-  
թյուն և ավելին պարունակող գլուխներով Աստվածաշունչը դժվար  
կլինի հասկանալ: Բայց Խոսքը մեզ հայտնում է, թե ինչպես կարելի  
է դրա իմաստը հասկանալ: Պետք է այն նկատի ունենալ որպես այ-  
լաբանական պատկեր, նայել դրան տարբեր դիրքերից ու մտածել  
դրա խորքի՝ մասին: Հիսուսի պատմած առակներն էլ հարկավոր է  
այդպես դիտարկել: Դրանց խորհուրդների մասին լրջորեն մտա-  
ծողները ձեռք են բերում դրանց իմաստը «տեսնելու աչքեր»  
(Մատթ. 13.10-16): Պողոսը Տիմոթեոսին ասում է, որ ըմբռնելու հա-  
մար պետք է «հասկանա» խոսքը (Բ. Տիմ. 2. 7): Իսկ 118-րդ սաղմո-  
սի կրկներգը ցույց է տալիս, թե ինչպես Խոսքի մասին մտածելը  
իմաստություն ու ներշնչում է պարգևում և բացում մեր աչքերը՝  
դրանց իմաստը տեսնելու համար (118. 18, 97-99): Մեկ շաբաթ  
մտածենք մի առակի մասին կամ մի ամբողջական Ավետարան  
կարդանք: Ժամանակ տրամադրենք մի որևէ գլխի և դրան նայենք  
տարբեր կողմերից: Խորը թափանցենք: Սուրբգրային ներշնչումը  
կգա՝ դրա մասին խորհրդածելով, և ոչ պարզապես կարդալով:

**Աղոթք** - Աստված, տա՛ր ինձ Քո Խոսքի աշխարհ: Բա՛ց աչքերս՝  
տեսնելու համար դրա մեջ գտնվող յուրաքանչյուր սքանչելի  
բան: Առաջնորդի՛ր ինձ դրանք իրար կապող ուղիներում: Ամեն:

**Մսածի՛ր այսօրվա ընթերցումի մասին և Ասծուց խնդրի՛ր  
առաջնորդություն:**

Աղոթում եմ Տիրոջը... որպեսզի դուք սիրո մեջ արմատացած ու հաստատված լինեք և ճանաչեք Քրիստոսի սերը: (Եփ. 3.14-19)

## ՍԻՐՈ ՄԵՋ ԱՐՄԱՏԱՑԱԾ

**Մ**եզին բույսից մի ցողուն պոկեց, մտցրեց այն մեղրի մեջ և տեղավորեց պարարտանյութով լի ծաղկամանի մեջ: Նա ինձ սովորեցնում էր, թե ինչպես կարելի է ցանել, բազմացնել և ամենակարևորը՝ ստանալ առողջ բույսեր: Նա հատուկ ընդգծեց, որ մեղրը օգնում է բույսի արմատակալելուն:

Նայելով Մեզիի գործողություններին՝ ես մտածում էի, թե ինչը կկարողանա օգնել, որ մենք Հոգևոր արմատներ ձգենք, աճենք մեր հավատի մեջ, չչորանանք ու չձախողվենք: Պողոսը Եփեսոսի եկեղեցուն ուղղված նամակում ասում է, թե մենք «արմատացած ու հաստատված ենք» (Եփ. 3. 17): Այդ սերը Աստծուց է գալիս, որը զորացնում է մեզ Սուրբ Հոգով: Քրիստոսը բնակվում է մարդկանց սրտերում: Եվ երբ մենք սկսում ենք «ըմբռնել, թե ինչ է Քրիստոսի սիրո լայնությունը, խորությունն ու բարձրությունը» (Հմ. 18), ունենում ենք Աստծո ներկայության հարուստ փորձառություն և «լցվում Աստծու ամեն լիությունը» (Հմ.19):

Հոգևոր աճը պահանջում է արմատներ ձգել Աստծո սիրո մեջ, խորհրդածել այն ճշմարտության մասին, թե մենք սիրված ենք Աստծուց, «ով կարող է առատությունը ամեն բանից ավելին անել, քան խնդրում ենք ու իմանում» (Հմ.20): Մեր հավատի համար ի՛նչ հիանալի հիմք:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ Քո սիրո համար: Օգնիր, որ կարողանամ խորհրդածել այդ սիրո ճշմարտության մասին: Թող Քո սերն աճի իմ սրտում՝ գեղեցկացնելով կյանքս ու աշխարհս: Ամեն:

**Խորհրդածիր՝ Ասծո Խոսքի մասին և փորձիր այդ մասին խոսել ուրիշների հետ:**

## Նյութերի ցանկ

Ագահություն	.....	Օգ.	6
Աղոթք	.....	Հուլ.	3,7, օգ. 21, սեպ. 2,8
Անկում	.....	Սեպ.	17
Անճնասպանություն	.....	Հուլ.	23
Ապաշխարություն	.....	Սեպ.	27
Անարդարություն	.....	Օգ.	6, 27
Աստծո հետ հաղորդակցություն	.....	Օգ.	1,9, սեպ. 27
Աստծու սերը	.....	Հուլ.	8,26, օգ. 5,10, 11,15, 16,19, 24,28, սեպ. 2,3,5,10,23,25,30
Աստծուն վստահել	.....	Հուլ.	15,18,28, օգ. 17,21,22, սեպ. 19,21, 26
Ավետարանչություն	.....	Հուլ.	4,31, օգ. 8,29, սեպ. 4,22
Բարկություն	.....	Օգ.	4
Գոհունակություն	.....	Սեպ.	28
Դրախտ	.....	Օգ.	27
Երջանկություն	.....	Հուլ.	16, սեպ. 28
Ընդդիմություն	.....	Օգ.	2
Ինքնապատկեր	.....	Օգ.	5, սեպ. 10
Խորհրդատվություն	.....	Սեպ.	23
Խոսք	.....	Սեպ.	20.
Ծառայություն	.....	Հուլ.	10, օգ. 12,20, սեպ. 18
Կարեկցություն	.....	Հուլ.	1,30, օգ. 27, սեպ. 13,15,18,20
Կասկած	.....	Հուլ.	20, օգ. 24
Կյանքի պայքարներ	.....	Սեպ.	21
Հալածանք	.....	Սեպ.	8
Համբերություն	.....	Հուլ.	7,20
Հանդիստ	.....	Հուլ.	5,17
Հանցանք	.....	Սեպ.	6
Հավատք	.....	Հուլ.	9

Հավատքի պատմություններ.....	Հուլ. 20
Հավիտենական կյանք.....	Օգ. 7
Հարաբերություններ.....	Հուլ. 12, 26,29, սեպ. 1
Հեղություն.....	Հուլ. 14
Հնազանդություն.....	Հուլ. 19,25, օգ. 31, սեպ. 26
Հոգեկան աճ.....	Օգ. 17, 20, սեպ. 6,30
Հոգեկան բարեփոխություն.....	Օգ. 8
Հոգեկան կարգապահություններ.....	Օգ. 17,20, սեպ. 6,30
Հոյս.....	Հուլ. 18, 23, օգ. 24, սեպ. 14
Հուսահատություն.....	Օգ. 10
Ներել ուրիշներին.....	Հուլ. 29, օգ. 4
Նյութապաշտություն.....	Հուլ. 6
Պաշտամունք.....	Հուլ. 5, 13
Սուգ.....	Հուլ. 18,28, սեպ. 14
Սուրբ Գրքի ներշնչում.....	Օգ. 9
Սուրբ Գրքի սերտողություն.....	Հուլ. 19, սեպ. 9,29
Սուրբ Հոգի.....	Օգ. 1
Ստեղծագործության հոգատարություն.....	Հուլ. 27
Ստեղծագործություն.....	Հուլ. 13
Վախ.....	Սեպ. 3
Աստծո վարդապետությունը.....	Սեպ. 1,26
Տանջանք.....	Օգ. 14, 17, 24
Տնտեսություն.....	Հուլ. 27
Փորձություն.....	Օգ. 26
Փրկություն.....	Հուլ. 9,21,22, օգ. 3, սեպ. 11
Քաջակերություն.....	Հուլ. 2, սեպ. 12
Քրիստոսի համար ապրել.....	Հուլ. 31, օգ. 12, 13, 25, 26, սեպ. 7
Քրիստոսի նման ապրել.....	Հուլ. 31, օգ. 12,13,25,26, սեպ. 7
Վիժում.....	Օգ. 15

## Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռախոս՝ (010) 54-35-76, (010) 54-35-78  
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am  
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7<sup>ա</sup>

Հեռ. (374) 94 52 75, 95 02 95

---

Անուն, ազգանուն .....

Հասցե.....

.....

Հեռախոս.....

---